

ՀԱՅԻ ԳԵՆԸ

Մեզնից յուրաքանչյուրը կրում է կրկնակի ճակատագիր: Մեկը մեր սեփական ճակատագիրն է, մյուսը՝ տոհմի ճակատագիրը: Մենք այս աշխարհ ենք եկել ոչ պատահամբ, այլ՝ ճակատագրական կապերի տիեզերական օրենքներով, ուր կարևոր է տոհմական ծագման գենետիկական ծրագիրը: Այսինքն՝ մենք/մեր ծնունդով/ պարտավոր ենք լուծել մեր ընտանիքի խնդիրները, օգնել հարազատներին, փոխանցել սեփական տոհմի դրական էներգիան՝ ազատելով հաջորդ սերունդներին ճակատագրական սխալներից: Մինչդեռ տոհմական ընտանիքի անդամների մի մասին տրվում է տոհմը պահպանելու խնդիրը, մյուսների համար, ընդհակառակը, իրենց շարունակական գենի ընդունումը դառնում է փորձություն: Նրանք պետք է անցնեն այդ փորձությունների միջով՝ գուցե երբեմն իրենց վրա զգալով շրջապատի անեծքը, քանզի հաճախ ունենում են ոչ սովորական կյանքի ուղի, որովհետև իրենց ունեցած դիրքորոշումից հայտնվում են բարդ իրավիճակների մեջ: Անկասկած, հայ ժողովրդի դաժան ճակատագիրն է պատճառը, որ հայերի համար արյունը, գենետիկական հանդիսանում է բնական ներուժ պարունակող մեծ գործոն:

Երեկոյան շատ ուշ էր արդեն, երբ Սայիդ Ակչանը վերադարձավ տուն: Քառասունմյա այդ երիտասարդը Ստամբուլի առաջադեմ մտավորականության շարքերում էր: Նա հայտնի երգիչ էր, որը բազմիցս հանդես էր եկել ոչ միայն թուրք հասարակության առջև, այլև իր մենահամերգներով հասցրել էր շրջագայել եվրոպական շատ երկրներում: Սայիդը միջահասակ տղամարդ էր, դեմքի բաց մաշկով, առնական հայացքով, խոշոր սև աչքերով, ալիքաձև մազերով, որոնք հավասարաչափ իջնում էին ծոծրակին՝ ամբողջացնելով արվեստագետի կերպարը: Նա ամուսնացած էր, ուներ երեք զավակ: Որդին՝ Մուստաֆան, սովորում էր Ստամբուլի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում, աղջիկները՝ Ջուլեյխան ու Ջեյնաբը սովորում էին դպրոցի բարձր դասարաններում:

Սայիդն այդ օրը չափազանց մռայլ ու հոգնած տեսք ուներ: Հայրը՝ Ահմեդը, որն իր կնոջ հետ հեռուստացույց էր դիտում, որդու ներս մտնելուն պես մի պահ տագնապով հարցրեց.

- Կռվե՞լ ես ինչ-որ մեկի հետ:

- Ցույցի էի մասնակցել,- Սայիդը մտախոհ փռվեց բազկաթռին: Այդ ընթացքում կողքի սենյակից հայտնվեց կինը:

- Ինչո՞ւ էիր մասնակցել ցույցի: Ովքե՞ր էին այն կազմակերպել,- հայրն անհանգիստ կրկին դիմեց որդուն:

- Ստամբուլի առաջադեմ մարդիկ: Մենք պահանջում էինք մեր իշխանություններից ճանաչել Հայոց Ցեղասպանությունը: Դու որպես Թուրքիայի քաղաքացի ուրի՞շ կարծիքի ես, հայրիկ:

Ահմեդը կնոջ՝ Չեյնաբի հետ թաքուն հայացքներ փոխանակեցին:

-Ինչո՞ւ ես լռում: Թե՞ նույնիսկ 21-րդ դարում դժվար է, որ Թուրքիան առերեսվի ճշմարտության հետ: Մեր երկրում ազգային փոքրամասնությունների իրավունքները նույնպես ոտնահարվում են: Չէ՞ որ բոլոր ազգերն էլ մեր երկրի լիիրավ քաղաքացիներն են: Իսկ եթե Օսմանյան Թուրքիան 1915-ին 1,5 միլիոն հայ է կոտորել, պարտավոր է ընդունել այն որպես ցեղասպանություն: Ի՞նչ է նշանակում, մորթել մի ողջ ժողովրդի այն բանի համար, որ նրանք հայ են ծնվել: Չմոռանանք, որ Թուրքիան նաև նրանց հայրենիքն է, որտեղ դարեր շարունակ նրանց նախնիներն են ապրել: Նրանք էլ մեզ նման մարդիկ են:

-Արդարության համար հնչած խոսքերդ Թուրքիա երկրի համար չեն: Դու քո բողոքը լավ էլ ներկայացնում ես քո երգերում, քո տողերում, -ասաց Ահմեդը, զգալով, թե ինչպես է որդին ատամներով պաշտպանում հայերին:

- Այո...Բայց ըմբոստությամբ հնչող երգերս ոչ մի արժեք չեն ունենա, եթե կյանքում ինքս պաշտպան չկանգնեմ այն մարդկանց, ովքեր ազատ ապրելու և արարելու կարիքն ունեն:

-Տարիներ առաջ էլ, երբ «Ակոս» թերթի խմբագիր Հրանտ Դինքին սպանեցին, դարձյալ ցույցեր էին կազմակերպվում, դու էլ էիր ակտիվ մասնակցություն ունենում, բայց ինչի՞ հասաք,- նրանց խոսակցությանը խառնվեց Սայիդի մայրը:

-Բանտարկեցին Դինքին սպանողին, բայց նրա սպանության գործով հարուցված գործը դեռ ավարտին չի հասցվել,- ի պատասխան ասաց Սայիդը՝ հիշելով, որ ինքն էլ հազարավոր մարդկանց նման դուրս էր եկել փողոց «Ես հայ եմ, ես Դինք եմ» կարգախոսով: Նույն ինքը՝ Դինքը, նաև թուրք-հայկական հաշտեցման ջատագույներից էր:/ 2007-ին ստեղծվեց Հ.Դինքի անվան միջազգային հիմնադրամ, որի ջանքերով լույս ընծայվեց նրա « Երկու հարևան ժողովուրդներ» գիրքը/:

-Հայտնի է, որ իրականում նրա սպանության պատվիրատուներն ազատ մնացին: Իսկ Հրանտ Դինքի սպանության մեջ մեղադրվում են բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում՝ Ստամբուլի նախկին նահանգապետը: Այսինքն՝ միշտ մանր գողերն ու հանցագործներն են հայտնվում ճաղերի ետևում, այնինչ առավել մեծ հանցագործները չեն բռնվում: Մեկ է, Հրանտ Դինքի սպանությունից հետո չդադարեցին ցույցերը: Ավելին, առաջադեմ թուրք մտավորականությունը կազմակերպեց համաժողովներ, հրատարակեց գրքեր, գրեց հոդվածներ և հայտնվեց հանրության առաջ՝ բացելու թուրքական անցյալի մութ էջերը:

Որդու խոսքերից Ահմեդի անհանգստությունն ավելի խորացավ: Ասես մեկը մուրձի հարվածով խփեց նրա գանգին: Նա մի գլանակ վառեց:

-Խոհեմ եղի՛ր, Սայի՛դ: Դու ընտանիք ունես, զավակներ, -չափավոր զգուշությամբ խորհուրդ տվեց մայրը:

-Մայրի՛կ, ոչինչ չեմ մոռացել, բայց որպես Թուրքիայի քաղաքացի, որպես երգիչ իմ քաղաքացիական դիրքորոշումն ունեմ: Ես չեմ կարող անտարբեր ապրել մի հասարակության մեջ, ուր ոտնահարվում են մարդկանց իրավունքները: Բոլորովին կապ չունի, թե այդ մարդը

կարող է լինել հայ, հույն կամ արաբ: Մենք պարզապես իրավունք չունենք թշնամաբար վերաբերվելու ազգային փոքրամասնություններին:

-Ճաշը տաքացրել եմ, Սայիդ, գուցե մի բան ուտես,- խոհանոցից եկավ կինը:

-Ո՛չ, քաղցած չեմ: Հետաքրքիր է, դու ինչո՞ւ չես մասնակցում մեր գրույցին, -դիմեց նա կնոջը:

-Որովհետև իզուր ջուր եք ծեծում, ինչո՞ւ խառնվեմ,- անտարբերությամբ պատասխանեց կինը:

Սայիդն ավելի զայրացավ կնոջ վերաբերմունքից:

-Տեսա՞ք, ձեր հարսն էլ պակաս անտարբեր մարդ չէ այս հասարակության մեջ,-այս անգամ փոքր-ինչ զավեշտով հնչեցին Սայիդի խոսքերը:

-Երկրի հարցերը մեր ընտանիքո՞ւմ պիտի քննարկենք: Ղա՞ է քո ուզածը,- վրդովվեց Ռահիմեն՝ դիմելով ամուսնուն:

Սայիդն ամպամած հայացքով նայեց կնոջը, որի կոպերին սովորականի պես չկար ընդգծված սուրման ու նրա թուխ մաշկն իր աչքին ավելի սև երևաց: Նա շատ կուզենար, որ կնոջ հետ ունեցած տարածայնությունների մասին ծնողները չիմանային, քանի որ տանն այնպիսի դիրք էր դրել, որ ծնողների մոտ կնոջը դիտողություն չէր անում, քանի որ կինն ի սկզբանե խայթիչ, նույնիսկ սարկաստիկ բնավորություն ուներ:

Ծնողները զգացին, որ որդուն դժվար էր շեղել սկսած խոսակցությունից: Նա սաստիկ վրդովված էր, հիասթափված:

-Ո՞վ գիտե, վաղն էլ իմ որդին իրավաբան դառնալով՝ ինչպե՞ս կվերաբերվի ազգային փոքրամասնությունների շահերին ու իրավունքներին... Սա է վտանգավորը,-իր խոսքը շարունակեց Սայիդը: -Ինչո՞ւ, որովհետև մեր պատմությունը ստեղծվել է ստերի վրա: Դպրոցական դասագրքերում հայերը դեռևս ներկայացվում են որպես դավաճաններ: Սերունդներն այս գաղափարներով են կրթվում: Պետք է սխալներն ուղղվեն, որ երիտասարդներն էլ արդարացի լինեն, ճիշտ դատեն, ի վերջո չամաչեն, որ ապրում են այս երկրում: Հասկացե՞ք, վերջապես, եթե իրավական պետությունում ապրեինք, այս բոլորը գոյություն չէին ունենա:

Ռահիմեն, որ մոխրագույն շալ էր կապել գլխին, լուռ հենվել էր ճաշասենյակի դռանը: Լսելով ամուսնուն՝ ամենևին չէր ընդունում նրա ասածները ու վեճից խուսափելու համար չէր բարձրաձայնում իր մտքերը: Նա կողմնակից էր Թուրքիայի վարած քաղաքականությանը:

-Ալլահ իմ, էլի՞ սկսեցիր... Վախեցի՞ր ալլահից, որդի՛ս,- մայրը նեղսրտած երկու ձեռքերը դեպի առաստաղ պարզեց՝ տեսնելով, թե ինչպես էր որդին անվերջ պաշտպանում հայերին:

Հայրը, ավարտված համարելով խոսակցությունը, գնաց իր առանձնասենյակը: Հեռացավ նաև Սայիդի կինը: Ու թեև սենյակում մնացին մայր ու որդի, սակայն այլևս ոչինչ չխոսեցին: Նրանցից յուրաքանչյուրի համար լռությունն իր խորհուրդն ուներ...

Ստամբուլը շատ ռոմանտիկ ու հիասքանչ քաղաք է, որը հարելով Բոսֆորի նեղուցին, գտնվում է երկու մայրցամաքների վրա: Այն եվրոպականի և ասիականի, մահմեդականության ու քրիստոնեության համադրությունն է: Ստամբուլը եղել է երեք մեծ տերությունների՝ Բյուզանդիայի, Հռոմի, Օսմանյան Թուրքիայի մայրաքաղաքը՝ ձեռք բերելով մշակութային վիթխարի ժառանգություն: Այն Թուրքիայի խոշորագույն քաղաքն է, որն ունի շուրջ 15 միլիոն բնակչություն: Քաղաքը հիմնադրվել է մ.թ.ա. 667 թվականին: Նրա առաջին անվանումը եղել է Բյուզանդիոն, ապա՝ Նոր Հռոմ: 5-րդ դարից սկսած՝ հռոմեական կայսեր անունով քաղաքը կոչվեց Կոստանդնուպոլիս /1453թ-ին Թուրքիան նվաճեց այն/: 20-րդ դարում՝ 1930 թվականին, պաշտոնապես անվանափոխվեց Ստամբուլի: Այդ անունն առաջացել է թուրքերեն «իջնենք քաղաք» արտահայտության աղավաղված արտասանությունից: Ջրուսաշրջիկների համար այն գայթակղիչ քաղաք է: Ամեն տարի այստեղ է այցելում 7 միլիոն մարդ: Ցավոք, պատմական գրավչություն ունեցող այս քաղաքը լի է այնպիսի դավադրություններով, որոնք ռեալ վտանգ են ներկայացնում օտարերկրյա զբոսաշրջիկների կյանքի համար, և օրեցօր կրճատվում է նրանց թիվը:

Առավոտյան Սայիդը նոր էր նախաճաշել և դուրս գալով պատշգամբ՝ հիանում էր իր համար թանկ ադամանդի նմանվող Ստամբուլով, որը ողջ երկրի զարդն էր: Նա պատրաստվում էր հանդիպել իր նվազախմբի տղաների հետ, երբ բջջային հեռախոսը զանգեց: Իր համախոհներից էր՝ գրող, լրագրող Մուրադ Ազիզօղլին, որի հետ էր երեկ ցույցի ողջ ընթացքում: Նա ցանկություն հայտնեց հանդիպել երգչի հետ: Հայտնեց, որ կարևոր ասելիք ու առաջարկություն ունի: Սայիդը մի պահ երկմտեց, մտածելով, գուցե հարմար կլիներ հանդիպել երեկոյան որևէ ժամի, բայց Մուրադը, չգիտես ինչու, շտապեցնում էր նրան:

-Լավ, որտե՞ղ հանդիպենք,-հարցրեց Սայիդը:

-Կուզե՞ս ինձ մոտ՝ գրախանութում կամ էլ Արա Գյուլերի սրճարանում:

-Ավելի լավ է՝ հանդիպենք Գյուլերի մոտ: Քեզ հետ մի բաժակ սուրճ կխմեն:

Սայիդը զանգեց նվազախմբի տղաներից մեկին ու զգուշացրեց, որ մի փոքր կուշանա:

Սրճարանը, որ գտնվում էր Ստամբուլի ամենահայտնի Գալաթասարայ թաղամասում, մարդկանց գրավում էր իր տիրոջ՝ անվանի լուսանկարիչ Արա Գյուլերի անվան շնորհիվ: Սրճարանում մշտապես հերթեր էին: Ալկոհոլային խմիչքներ այստեղ չկան, բայց մեծ հարգանք էին վայելում մատուցվող հնդկական թեյը, թուրքական սուրճը, տաք շոկոլադը: Բարձր էր գնահատվում նաև խոհանոցը, որի մենյուն ներառում էր սպագետի, քեբաբ, սենդվիչներ և սրճարանի պատերին կախված լուսանկարիչ Գյուլերի սև-սպիտակ ֆոտոները: Այդտեղ հաճախ էին ոչ միայն կազմակերպվում կինոդիտումներ, այլև լուսանկարիչների ու նկարիչների աշխատանքների ցուցահանդեսներ: Սրճարանի վերնահարկում էր գտնվում լուսանկարների թանգարանը՝ Արա Գյուլերի աշխատասենյակը:

Երբ Սայիդը ներս մտավ, նախասրահում հանդիպեց ծեր լուսանկարչին:

-Հարգանքներս մեր տաղանդավոր երգչին ու երգահանին: Դուք սովորաբար այստեղ եք գալիս ու ժամերի: Այդ ո՞ր քամին մեզ մոտ բերեց:

-Մուրադ Ազիզօղլու հետ հանդիպում ունեմ:

Արա Գյուլերը ժպտաց երիտասարդ երգչին:

- Ի՞նչ կցանկանայիք, Սայիդ: Հիմա կկանչեմ մատուցողին:

- Առայժմ ոչինչ: Ասացե՛ք ինձ, թե վերջին շրջանում ո՞ր հայտնի դեմքն է հայտնվել ձեր ֆոտոխցիկում:

Սայիդը տեղյակ էր, որ նա ցուցահանդեսներ է կազմակերպել աշխարհի ոչ միայն շատ երկրներում, այլև նկարել էր այնպիսի դեմքերի, ինչպիսիք են՝ Ուինստոն Չերչիլը, Ինդիրա Գանդին, Ալֆրեդ Հիչքոքը, Մարկ Շագալը, Պաբլո Պիկասոն, Մարիա Կալլասը, Սալվադոր Դալին, Սոֆի Լորենը, Վիլյամ Սարոյանը: Նրան անվանում են ոչ միայն «Ստամբուլի լուսանկարիչ»: Գյուլերի անունն ընդգրկված է աշխարհի ամենահայտնի լուսանկարիչների թվում: Նա բազմաթիվ մրցանակների էր արժանացել: 2000-ին Գյուլերը Թուրքիայում ճանաչվեց որպես «Դարի լուսանկարիչ»:

- Եթե թույլ կտաք, հիմա ձեզ էլ կնկարեմ...

- Գուցե Մուրադն էլ գա, հետո մեզ միասին կանմահացնեք:

Ստանալով Սայիդի համաձայնությունը՝ Գյուլերը գնաց լուսանկարչական ապարատը բերելու: Երգիչը, անկասկած, գիտեր, որ Գյուլերն ազգությամբ հայ էր, Ստամբուլի հին բնակիչներից: Ավելին, լուսանկարչի հայրը կռվել էր Չանակքալեի ճակատամարտում ու վիրավորվել: Այդ մասին իրեն Գյուլերն էր մի անգամ պատմել, մի մարդ, ով հավասարաչափ սիրված էր բոլորի կողմից:

Մի փոքր ուշացումով հայտնվեց Մուրադը:

-Ի՞նչ ենք խմելու, սո՞ւրձ, թե՞ թեյ,- հարցական հայացքը նա դարձրեց Մուրադի կողմը:

-Իհարկե՝ սուրձ: Տաք շոկոլադն էլ չէր խանգարի:

Մատուցողի հեռանալուց հետո հայտնվեց Արա Գյուլերը: Այս անգամ նա ջերմորեն ողջունեց թուրք գրողին:

- Ձեզ միասին հավերժացնե՞մ լուսանկարի մեջ, թե՞...,-նա հարցական հայացքով դիմեց երկուսին:

- Ուրեմն պիտի նաև լուսանկարվե՞նք: Վայ թե օրը լավ ենք սկսում: Եթե հայտնի ու սիրված լուսանկարիչը գրող, Նոբելյան մրցանակակիր Օրհան Փամուկին է նկարել, գուցե՞ ինձ էլ մի օր հաջողվի նման մրցանակի արժանանալ,- կատակեց Մուրադ Ազիզօղլին: Հետո դիմելով Սայիդին՝ հարցրեց.-Գիտեի՞ր, որ Գյուլերը ոչ միայն նկարագարող է Օրհան Փամուքի գիրքը, այլև նկարել էր նրան: Դա եղել է մրցանակ ստանալուց առաջ: Մեր սիրելի լուսանկարիչը երևի հավատացած էր, որ իր թեթև ձեռքով նրան հաղթանակի դափնեպսակ կշնորհվի:

Փորձառու լուսանկարիչը գործի դրեց իր վարպետությունը՝ լուսանկարելով նրանց միասին: Հետո քաղաքավարությամբ հեռացավ՝ նրանց թողնելով մենակ:

Մատուցողը բերեց նրանց պատվերը:

-Դու երևի անակնկալի կգաս, բայց ես լավ առաջարկ ունեմ,-ասաց Ազիզօղլին:

-Եթե լավ առաջարկ է, միանգամից ասա՛:

-Ուզում եմ մի քանի օրով ինձ հետ Հայաստան գաս...

Սայիդը մի պահ շվարած հայացքն ուղղեց Մուրադին՝ սեղմելով գեղեցիկ շուրթերը:

-Ի՞նչ կա Հայաստանում: Քեզ հրավիրե՞լ են:

- Այո՛, ես գիրք եմ գրել Հայոց Ցեղասպանության մասին: Հավաքել եմ Եղեռնի ականատեսների վկայությունները, փաստաթղթերը...

-Իսկապես լավ աշխատանք ես կատարել: Հայերը թող իմանան ու համոզվեն, որ թուրք մտավորականության շարքերում կան մարդիկ, ովքեր դատապարտում են ցեղասպանությունը և իշխանություններին կոչ են անում չժխտել պատմական իրողությունը:

-Ուրեմն տալի՞ս ես ինձ հետ ճանապարհորդելու քո համաձայնությունը:

-Անկեղծ ասած, իմ ցանկությունն է՝ լինել Հայաստանում: Մի քանի օրն ինձ չէր խանգարի՝ կտրվել իմ առօրյայից: Ե՞րբ ենք մեկնելու:

-Երկու օրից:

-Տղաները հիմա ինձ են սպասում,- Սայիդը նայեց ձեռքի ժամացույցին:-Լրացուցիչ կզանգես ինձ:

-Եթե շտապում ես, գնա՛, ես կվճարեմ,-ասաց Մուրադ Ազիզօղլին՝ օգտվելով տաք շոկոլադից:

Երեկոյան երբ Սայիդն իր առաջիկա ճամփորդության մասին հայտնեց տանը, ծնողները վախվորած հայացքով իրար նայեցին: Սայիդի համար անհասկանալի էր նրանց տագնապը: Չէ՞ որ Հայաստանն ի տարբերություն Թուրքիայի, բռնապետական երկիր չէր: Ինչի՞ց էին ծնողները զգուշանում, մանավանդ որ ինքը ընդամենը արվեստագետ էր, երգիչ, չէր զբաղվում մութ գործերով:

-Եթե ես հայտարարեի, որ մեկնում եմ Ֆրանսիա կամ Մոզամբիկ, այդքան չէիք զարմանա...Մինչդեռ մեր հարևան պետություն մեկնելը արտառոց էք համարում: Թե՞ սխալվում եմ,- Սայիդի հարցն ուղղված ծնողներին, իր հստակ պատասխանին էր սպասում:

-Դու ամեն ինչ չափազանցում ես, -ի պատասխան ասաց հայրը: Միաժամանակ նա խուսափեց բացելու այնպիսի փակագծեր, որոնց վարագույրների ետևում էր պահվում դառը ճշմարտությունը:

-Ամեննին: Մենք անհանգստանում ենք քո անվտանգության համար,- ամուսնուն պաշտպանեց մայրը:

-Բայց ես կռվի դաշտ չեմ մեկնում` զենքը ձեռքիս: Գրողի հետ հանդիպման ենք գնում,-
ժպտաց Սայիդը:

-Իսկ եթե քեզ սկսեն հետապնդել,-հարցրեց հայրը:

Որդին զգաց, որ իր խոսքերն այնքան էլ համոզիչ չհնչեցին ծնողների համար, թե չէ սկիզբ
առած հարցերի շարանն իր վերջակետը կունենար: Սայիդը տեղի տվեց:

-Ովքե՞ր պիտի հետապնդեն, հայրի՛կ: Ո՞ւմ մասին է խոսքդ:

-Ինքդ էլ լավ ես հասկանում, որ Թուրքիայի իշխանությունները նշանակետի տակ են
առնում բոլոր նրանց, ովքեր մեկնում են Հայաստան, շփվում են հայերի հետ: Եթե քեզ
նորի՞ց բանտարկեն...

Սայիդը քմծիծաղեց: Նա իսկապես մտածեց, որ ծնողներն իզուր են իրենց ուշադրությունը
սևեռում վախի կամ տագնապի վրա, քանի որ մարդու կյանքն առհասարակ առօրյա կյանքում
էլ միշտ վտանգի տակ է: Առանց երկրից բացակայելու էլ առավել ըմբոստները պարբերաբար
հետապնդվում ու բանտարկվում են:

-Ահա՛ թե ինչ: Ես ոչ մեկից չեմ վախենում: Ձեր կարծիքով իրավո՞ւնք չունեն շփվելու
հայի, հույնի կամ արաբի հետ: Չէ՞ որ մեր բողոքների նպատակը հիմնականում մեկն է, սիրելի
ծնողներ, ապրել ժողովրդավարական հասարակության մեջ, ուր հարգում են բոլոր
քաղաքացիների իրավունքները:

Ահմեդն ու Ջեյնաբը տխուր օրորեցին իրենց գլուխները: Միաժամանակ հասկացան, որ
անհիմաստ է թերևս ճնշել որդուն, մանավանդ որ նա ուներ իր հստակ մոտեցումները շատ
ցավոտ ու իրեն հուզող խնդիրների հանդեպ:

Ներս մտավ Սայիդի որդին` Մուստաֆան, որը խնդրանքով դիմեց հորը:

-Հայրի՛կ, մեքենայիդ բանալիները չե՞ս տա: Ընկերոջս հետ մեկ ժամով տեղ ենք գնում:

-Աղջիկների հետ հանդիպելո՞ւ:

-Ղե, այո՛:

-Վերցրո՛ւ,-Սայիդը բանալիները հանձնեց որդուն:- Ջգույշ եղի՛ր և շատ չուշանաս...

Սայիդ Ակչամը և Մուրադ Ազիզօղլին առաջին անգամն էին այցելում Հայաստան, և Երևանն
իր ճարտարապետական ինքնատիպ կառույցներով ու հետաքրքիր հուշարձաններով
հիանալի տպավորություն թողեց նրանց վրա: Սակայն ավելի հուզիչ էր երկուսի համար հայերի
ջերմ ընդունելությունը: Նրանք սրտանց կուզենային չեզոքացնել ատելությունը երկու
ժողովուրդների միջև: Նաև լավ էին հասկանում, որ հաշտություն չի լինի այնքան ժամանակ,
մինչև որ թուրքական իշխանությունները չփոխեն իրենց դիրքորոշումը, չառերեսվեն
պատմական ճշմարտության հետ:

Մուրադի գրքի շնորհանդեսը կազմակերպվեց Հայաստանի գրողների միության կլոր սեղանի շուրջ: Այնտեղ էին եկել ոչ միայն գրողներ, հասարակական կազմակերպությունների ղեկավարներ, քաղաքական գործիչներ, այլև տարբեր լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Ներկայացնելով իր գիրքը Հայոց Ցեղասպանության մասին՝ հեղինակն ընդգծեց, որ այնտեղ հավաքել է տեղեկություններ 1915 թվականի Խարբերդի, Դիարբեքի, Վանի, Բիթլիսի, Սեբաստիայի կոտորածների մասին՝ վկայակոչելով Եղեռնից փրկվածների պատմածները: Նա պատրաստվում էր գիրքը թարգմանել անգլերեն լեզվով: Միաժամանակ խոսելով թուրք առաջադեմ մտավորականության անունից, նա ներկա գտնվողներին թվարկեց մի շարք անուններ, որոնք մշտապես իրենց բողոքն են ուղղում թուրքական կառավարությանը նամակների, հոդվածների, գրքերի, ցույցերի միջոցով: Դրանց թվում էին Ահմեդ Ինսելին, Բասկըն Օրանը, Չինգիզ Աքթարը, Սարհադ Քենթելը, Թաներ Ակչամը, Ֆիկրետ Ադանիրը, Մուրադ Բելգեն, Օսման Բարդեմիրը, Այշե Հյուրը, Ահմեթ Ալթանը և ուրիշներ: Մուրադ Ազիզովին մասնավորապես ընդգծեց.

-Թուրքիայի իշխանությունները պատրաստ չեն ընդունելու իրողությունը ավելի քան 100 տարի առաջ կատարված սարսափելի իրողությունը, իսկ մտավորականների հորդորները՝ ճանաչել Ցեղասպանության փաստը, մշտապես ճնշվել են և այդ ճնշումների բարձրակետն է եղել 2007 թվականին իրագործված թուրքահայ լրագրող Հրանտ Դինքի սպանությունը: Նա համարձակ ասում էր, որ եթե հայերը շարունակեին ապրել, Վանը արևելքի Փարիզը կդառնար: Դինքն իրավացի էր: Մենք կորցրինք Եղեռնի ժամանակ տաղանդավոր մտավորականների, այդ թվում՝ հանճարեղ Կոմիտասին, որը նաև մեր պետության մեծ երգահանն էր:

-Անկասկած, ամաչում ենք մեր պետության վարած քաղաքականությունից: Այնինչ մենք՝ մտավորականներս, հեռու ենք ռասիստական ու ազգայնական մտածողությունից,- գրողի միտքը լրացրեց Սայիդ Ակչամը, որը ոգևորվեց Մուրադի խոսքերից:

Հյուրերի հետ երկխոսությունը գնալով թեժանում էր:

-Իրականում ձեր պատմությունը հիմնված է կեղծ փաստերի վրա: Թուրքիայի դպրոցներում ուսուցանվող դասագրքերում երեխաները որտեղի՞ց իմանան ճշմարտությունը: Այնինչ նրանց համար օրինակելի կերպարներ են Թալեթն ու Էնվերը, ովքեր ամենամեծ ոճրագործներն են, սակայն թուրք երեխաների համար ազգի հերոսներ,-ասաց ներկա գտնվող լրագրողներից մեկը:

-Դուք ճիշտ եք ասում,- նրա խոսքը հաստատեց թուրք գրողը,- այդ սխալը ժամանակի ընթացքում անպայման կշտկվի: Թուրքիայի քաղաքացիներն այսօր երկու տարբերակ ունեն հիշելու իրենց հերոս նախնիներին: Նրանք որպես հերոս պետք է ընտրեն կամ զանգվածային սպանությունների ու թալանի տարբերակը, կամ էլ մաքուր խղճի տեր մարդկանց, ովքեր փորձեցին կանխել այդ հանցագործությունները: Թուրքերը գուցե կարողանան ձերբազատվել արդեն չորս սերունդ ձգվող ժխտողական պատմության կապանքներից:

-Ես վստահ չեմ, որ ձեր կառավարությունը նման քայլ կանի: Նա պատմության մեջ հաստատված իր հերոսներին երբեք ոճրագործներ չի ներկայացնի,-վրդովված ասաց մեկ ուրիշ լրագրող:

-Բայց մեր պետությունն այլ ելք չունի: Նա պարտավոր է վերագնահատել իր պատմությունը: Կարծում եմ՝ սառույցն իր տեղից շարժվել է, -ի պատասխան լրագրողին ասաց Սայիդ Ակչամը:

-Դուք 2006-ի գրականության Նոբելյան մրցանակակիր թուրք գրող Օրհան Փամուքի պես աներկյուղ ասում եք, որ թուրքերը մեկուկես միլիոն հայ են սպանել, թեև, ինչ խոսք, դուք ավելի համարձակ գտնվեցիք, որովհետև ձեր գիրքն ամբողջությամբ Հայոց Ցեղասպանությանն է նվիրված: Չե՞ք վախենում ձեր իշխանությունների հետապնդումներից, -գրողին դիմեց միջին տարիքի մեկ այլ լրագրող:

Մուրադ Ազիզօղլին առանց երկմտելու հանգիստ պատասխանեց.

-Ես արդարացումներ չեմ փնտրելու և գիրքս մեծ հաճույքով ներկայացնելու եմ թուրքական իշխանություններին:

-Իսկ եթե Ձեզ կալանավորե՞ն,- հարցրեց նույն լրագրողը:

-Թող կալանավորեն, թեկուզ ինձ արդեն մի անգամ բանտարկել են: Միևնույն է, ես կշարունակեմ պայքարել մարդու իրավունքների պաշտպանության համար: Մեր պետության մեջ արհամարիված են ազգային փոքրամասնությունների մարդկային իրավունքները: Բազմազգ պետություն ենք, բայց մեր սահմանադրության մեջ գրված է, որ Թուրքիայում միայն թուրքեր են ապրում: Այդպիսի թյուրիմացություն ոչ մի երկրում չկա: Այդ նույնն է, եթե ասենք, թե Անգլիայում միայն անգլիացիները են ապրում, Ֆրանսիայում՝ միայն ֆրանսիացիներ և այլն,- պատասխանեց թուրք գրողը:

-Դուք՝ թուրք մտավորականներդ, ինչպե՞ս եք պայքարում, եթե Թուրքիայում ազատ մամուլ չկա,- նորից գրողին դիմեց մի ուրիշ հեռուստալրագրող:

-Այո՛, Թուրքիայում ազատ մամուլ չկա, բայց ազատ խոսք կա: Ասենք գիտնականները, պատմաբանները, ուղղակի մարդիկ կարող են հավաքվել, խոսել հայկական թեմայի, ցեղասպանության մասին, քննադատել թուրքական իշխանություններին, սակայն դա չի կարող լուսաբանվել մամուլում:

-Դուք նաև սեփական գրախանութ ունեք: Ինչպե՞ս են ձեզ մոտ վաճառվում գրքերն ու թերթերը,- հարցրեց ներկաներից մեկը:

Մուրադ Ազիզօղլին բարեհամբույր ժպտաց, երբ թարգմանիչը նրան ուղղեց երիտասարդ լրագրողի իրեն տրված հարցը: Դա այն ցավոտ խնդիրներից էր, որը հուզում է առհասարակ աշխարհի բազմաթիվ երկրների մարդկանց: Թերևս գլխավոր պատճառներից մեկը համակարգչային համակարգն է ու ժամանակակից տեխնոլոգիաները:

-Թուրքիայում վաղուց գիրք չեն կարդում: Ես երկու գրախանութ ունեի: Մեկը փակել եմ, մյուսը դեռ կա: Երևի դա էլ շուտով կփակեն: Ինչ մնում է թերթերին, պաշտոնական տվյալներով՝ Թուրքիայում օրական 6 միլիոն տպագիր թերթ է վաճառվում, որից 5 միլիոն

իշխանական թերթերն են կազմում: Պատկերացրեք, 70 մլն բնակչությունից օրական միայն 6 միլիոնն է կարդում: Անշուշտ, դա վատ ցուցանիշ է:

Գրքի շնորհանդեսի ավարտից հետո հյուրերին թարգմանչի ուղեկցությամբ տարան Ծիծեռնակաբերդի բլրի վրա կառուցած Հայոց Ցեղասպանության զոհերի հուշահամալիրը: Նրանք ծաղիկներ դրեցին և հարգեցին անմեղ զոհերի հիշատակը: Հյուրերին բացատրեցին, որ Ցեղասպանության հուշարձանի բացումը տեղի ունեցավ 1967-ի նոյեմբերի 29-ին: Այդ օրից ի վեր ամեն տարի ապրիլի 24-ին /և ոչ միայն այդ օրը/ բազմաթիվ մարդիկ են այցելում Ծիծեռնակաբերդի հուշարձան, ծաղիկներ են դնում հավերժական կրակի մոտ: Հյուրերին նաև տեղեկացրին, որ հուշարձանի շուրջը տարածվող այգում գտնվում է 100 մետրանոց պատ, որի վրա փորագրված են ջարդերի ենթարկված ամենահայտնի քաղաքների և գյուղերի անունները: Այնուհետև նրանց ուղեկցեցին հուշահամալիրի տարածքում 1995-ին բացված ստորգետնյա թանգարան, որտեղ կարելի է գտնել տեղեկություններ 1915 թվականի դեպքերի մասին: Թանգարանում մասնավորապես ներկայացված են գերմանացի լուսանկարիչների լուսանկարները:

Թե՛ Մուրադ Ազիզօղլին, թե՛ Սայիդ Ակչամը ցնցված էին այն զարհուրելի տեսարաններից, որոնք պատկերված էին օտարազգի լուսանկարիչների գործերում: Թանգարանի գիղը նրանց ներկայացրեց բազմաթիվ պատմական փաստեր, ցույց տալով Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում արտասահմանյան մամուլի էջերում զետեղված իրողությունն այն մասին, որ Թուրքիայում կազմակերպվել է հայերի ջարդ:

Մուրադ Ազիզօղլին Սայիդին հիշեցրեց Ստամբուլի քաղաքական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող Չենգիզ Աքթարին, ով երկար տարիներ պաշտպանում էր Հայոց ցեղասպանության ճանաչումը Թուրքիայի կառավարության կողմից:

-Նա իրավացի է, երբ ծաղրի է ենթարկում վարչապետ Ահմեդ Ղավուբօղլուի՝ «պատմաբանների համատեղ հանձնաժողով» ստեղծելու կոչը, քանի որ այն բաղկացած կլինի պատմությունն ուրացող պրոֆեսորներից:

-Մեր իշխանությունները շատ լավ կոծկում են ամեն ինչ,- պատասխանեց Սայիդը:- Թող Թուրքիայում էլ բոլոր արխիվները բացեն...Ինչպե՞ս կարելի է անվերջ սուտ պատճառներ փնտրել, երբ հայերի ցեղասպանության մասին աղաղակող բազմաթիվ փաստեր կան, երբ ողջ է Եղեռն ապրած ականատեսների մի զգալի մասը:

Դուրս գալուց առաջ Սայիդը թանգարանի հուշամատյանում իր մակագրությունը թողեց՝ գրելով.«Ես ասես գտնվում եմ ցավի կենտրոնում: Մինչև ոսկորներս զգում եմ կատարվածը՝ առանց ապրելու: Վստահ եմ, որ Թուրքիան ի վերջո կընդունի Հայոց Ցեղասպանությունը և թույլ չի տա, որ մարդիկ մահանան Հրանտ Դինքի պես: Միայն այդ ժամանակ կամուրջ կծգվի երկու ժողովուրդների միջև»:

Օրվա տպավորություններն այնքան շատ էին, որ նրանք որոշեցին իրենց հուզող թեմայից մի փոքր շեղվելու համար քայլել Երևանի փողոցներով, լինել գրախանութներում ու որոշ

խանութներում: Երկուսով ճաշեցին Մաշտոցի պողոտայի վրա գտնվող «Կակտուս» ռեստորանում:

Հաջորդ օրը նրանք ցանկություն հայտնեցին իրենց ուղեկցել հայ-թուրքական սահման: Երիտասարդ թարգմանչի հետ մեկնեցին Արարատի մարզի Լուսառատ գյուղի մոտ գտնվող նշանավոր ուխտատեղին, Խոր վիրապի վանքը, որը հինգերորդ դարի համալիր է: Երբ տեղ հասան, թարգմանիչը նրանց տեղեկություն տվեց ինչպես վանքի, այնպես էլ Գրիգոր Լուսավորչի մասին, որը Տրդատ 3-րդի հրամանով 14 տարի փակված էր մնացել խցում: Եվ միայն այնտեղից դուրս գալուց հետո ստանալով արքայի աջակցությունը, նա քրիստոնեություն է տարածել Հայաստանում:

Այնուհետև թարգմանիչը հյուրերին ցույց տվեց հայ-թուրքական սահմանը: Նրանք ցավով հասկացան, թե որքան մոտ է այդ սահմանը:

-Արաքս գետի ձախ կողմում մենք ենք, մյուսում՝ Թուրքիան է,- ձեռքով մատնացույց արեց թարգմանիչը:

-Կարելի է Արաքսի վրայով կամուրջ կառուցել, այդպիսով կարճ ճանապարհ կբացվի դեպի մեր երկիր: Ափսո՛ս, որ առայժմ անմիտ է այդ մասին մտածելը,- ասաց Մուրադ Ազիզօղլին:

-Ի դեպ՝ Հայաստանի և Թուրքիայի սահմանը Եվրոպայում միակ փակ սահմանն է,- ավելացրեց Սայիդը:

-Այո՛, Հայաստանի անկախացումից երկու տարի անց՝ 1993-ին, փակվեց այն Թուրքիայի կողմից,- հավելեց թարգմանիչը:- Հայ-թուրքական հարաբերությունների վրա իր բացասական դերն ունի Ադրբեջանը: Նա անվերջ լարված է պահում այս տարածաշրջանը: Մեր սահմաններում պատերազմական իրավիճակ է ու հաճախ զոհեր ենք ունենում:

Հետո երեքով լռեցին, հավանաբար մտածելով, թե արդյոք երբևիցե կբարելավվե՞ն հայ-թուրքական հարաբերությունները, քանի որ լույսի կետը դեռ մնում էր հեռու՝ հորիզոնում:

Նրանք շտապեցին վերադառնալ Երևան: Կեսօրին Հայաստանի նկարիչների միությունում ցուցահանդեսի բացում էր՝ նվիրված Եղեռնի թեմային: Թուրք մտավորականները երկու օրով այցելել էին Հայաստան՝ հենց առնչվելու հայերի անցյալի պատմությանը, ականատեսը լինելու այն փաստերին, որոնք պահպանվում էին 100 տարի շարունակ: Ու քանի որ ոչինչ չի մոռացվում, ցեղասպանության մասին հուշերը, պատկերացումները սերնդեսերունդ փոխանցվելով՝ ապրում ու միշտ թարմ են մնում հայերի հիշողության մեջ:

Նկարիչների տանը կազմակերպած ցուցահանդեսին մարդիկ խմբերով էին գալիս, նկարների առջև կանգնում, կարծիքներ կազմում ու դառը հուշերով ծանրաբեռնված՝ հեռանում:

Այնպես պատահեց, որ Սայիդը նկարները դիտելիս առանձնացավ Մուրադից: Այդ պահին նրան մոտեցավ մի հեռուստալրագրող՝ խոսափողը ձեռքին:

-Ձեզ ինչպե՞ս հաջողվեց այսքան ցնցող պատկերներ ստեղծել: Գուցե պատմե՞ք, թե Ձեր նախնիներն Արևմտյան Հայաստանի ո՞ր շրջանից էին:

Սայիդը զարմացավ իրեն ուղղված հեռուստալրագրողի հարցից և գլուխը բացասաբար շարժելով՝ անգլերենով պատասխանեց, որ ինքը չէ այդ գեղանկարների հեղինակը:

-Բայց ինձ ասացին, որ Ձեզ մոտենամ, -զարմացավ լրագրողը՝ շփոթված շուրջը նայելով ու հանկարծ նկատեց Սայիդին շատ նման հայ նկարչին, որն ինչ-որ մեկի հետ զրուցում էր սրահի անկյունում: -Ահա՛ նա, կներե՞ք ինձ,- լրագրողը երգչի հայացքն ուղղեց հայ նկարչի կողմը:

Սայիդ Ալչամն այս անգամ կարծես իր աչքերին չհավատաց: Իսկապես հայ նկարիչն արտաքինով սաստիկ նմանություն ուներ իր հետ: Այնպիսի տպավորություն էր, որ նա իր երկվորյակն էր: Նման զուգադիպության չէր հանդիպել ոչ մի տեղ՝ բազմիցս լինելով եվրոպական շատ քաղաքներում: Սայիդը ցանկություն զգաց անայսման շփվել իր նմանակի հետ:

-Անչափ հավանում եմ Ձեր գործերը, -մոտենալով նրան՝ ասաց երգիչը դարձյալ անգլերենով, քանի որ թարգմանիչը Մուրադ Ազիզովու կողքին էր:

Հայ նկարիչը բարեհամբույր ժպտաց, նույնպես նմանություն նկատելով իր և օտարերկրացու միջև:

-Դուք որտեղի՞ց եք,-հարցրեց նա:

-Ստամբուլից: Ես երգահան եմ, նաև՝ երգիչ: Ձե՞ք գտնում, որ մենք արտաքինով իրար շատ նման ենք:

-Այո՛, հեռուստալրագրողն էլ նկատեց, անգամ խոստովանեց, որ Ձեզ ինձ հետ շփոթել էր: Դե, պատահում է...Մեզնից յուրաքանչյուրն էլ իր նմանակն ունի: Ուղղակի միմյանց գրեթե չենք հանդիպում:

-Գիտեմ: Հետաքրքիր է ինձ համար, թե որտեղից են քո նախնիները:

-Դիարբեքիրից էին: Առաջ այն կոչվում էր Տիգրանակերտ:

Սայիդը մի ակնթարթ լռեց, մտածելով, գուցե նա իր հետ բարեկամական կապ ունի: Սակայն անհեթեթություն համարեց իր ուղեղում ծագած այդ մտքից:

-Ինչ-որ բան այն չէ՞, -նայելով դիմացինի տարակուսած դեմքին՝ հարցրեց նկարիչը:

Խուսափելով հայ նկարչի հարցի պատասխանից՝ Սայիդն ասաց.

-Ես հուզվեցի Ձեր նկարները նայելիս: Ինչքա՛ն տառապանք կա բոլոր կտավներում պատկերված մարդկանց հայացքներում: Երեկ էլ Ծիծեռնակաբերդի թանգարանում էինք: Ինձ վրա խոր տպավորություն թողեցին ֆրանսահայ նկարիչ ժանսեմի գործերը: Անբացատրելի զգացում ունեցա...

-Այո՛, նա շատ մեծ նկարիչ էր:

Այդ պահին նկարչին ուրիշ մարդիկ մոտեցան, և նրանց խոսակցությունը կիսատ մնաց: Սայիդը փնտրեց Մուրադ Ազիզովուն, որն ինչ-որ պատմաբանի հետ հաճույքով զրուցում էր, մտքեր փոխանակում:

Դուրս գալով նկարիչների շենքից, նրանք դարձյալ քայլեցին փողոցներով՝ միմյանց հետ կիսելով իրենց տպավորությունները: Սակայն Մուրադ Ազիզովին նկատեց, որ Սայիդը մի տեսակ շփոթված էր, իրեն համարյա չէր լսում:

-Սայիդ, ինձ թվում է, թե ես ինքս ինձ հետ եմ բարձրաձայն խոսում: Ինչո՞ւ ոչինչ չես արձագանքում:

Սայիդն անհարմար վիճակի մեջ ընկավ: Գրողի հարցադրունից նա իրեն մեղավոր զգաց:

-Իսկապես մտքերով տարվեցի: Տպավորություններս այնքա՞ն շատ էին...

-Գուցե ափսոսո՞ւմ ես, որ հետո ճամփա եկար:

-Ամենահին: Ճիշտ ընդհակառակը, սրտանց ուզում էի լինել Հայաստանում: Չէ՞ որ մենք մեր երկրում պաշտպանում ենք հայերի շահերը, կոչ ենք անում ընդունել Ցեղասպանության փաստը, չիմանա՞նք, թե Հայաստանն ինչ երկիր է, ինչպես են մարդիկ ապրում, ինչպես են արարում:

Սայիդ Ակչամը չուզեց իրեն տանջող խոհերը կիսել Մուրադի հետ: Չկամեցավ ասել, թե իրեն մտահոգելու համար ինչքան տեղիք տվեց հայ նկարչի հետ իր նմանությունը: Չէ՞ որ ինքը եվրոպացի չէ, այլ՝ ազգությամբ թուրք: Թեկուզ թուրքերը խառնվելով հույների, հայերի, բուլղարացիների, լեհերի և ուրիշ ազգերի հետ, այլ մարդաբանական տեսակ են ձեռք բերել: Սակայն Սայիդը կյանքում առաջին անգամ հակասության մեջ մտավ ինքն իր հետ, իր անցյալի պատմության հետ: Նա մտածեց, թե ովքեր են իր նախնիները, որտեղ են իր արմատները: Ցավոք, իրեն հուզող հարցերի պատասխանները ինքը կարող էր ստանալ միմիայն ծնողներից:

Այժմ նա ավելի շատ մտածեց Ստամբուլ վերադառնալու մասին:

Ազատ հասարակությունը պահանջում է, որ մարդիկ պատասխանատվության զգացումով ղեկավարեն իրենց գործողությունները, որոնք ավելին են իրենց պարտականություններից: Թեև դա ամենահին չի նշանակում, թե մարդը միշտ հանդիսանում է իր ստեղծած հետաքրքրությունների լավագույն դատավորը: Սակայն հատկապես պատասխանատվության զգացումն է թույլ տալիս նրան անցնել փորձությունների միջով և լինել ազատ: Ցավոք, հենց դա էլ պակասում է շատ հասարակությունների:

Սայիդը վերադարձավ Ստամբուլ: Նա ապրում էր քաղաքի եվրոպական հատվածում: Հենց այդ հատվածում են հիմնականում բնակվում պոլսահայերը: Այդտեղ են գտնվում քաղաքի պարծանքը հանդիսացող Սուրբ Սոֆյայի տաճարը, Ստամբուլի ժամանակակից արվեստի թանգարանը, հայտնի գրախանութները, արվեստի ժամանակակից կենտրոնները:

Սայիդը մնում էր բավականին հարմարավետ երկհարկանի սեփական տանը, որն իր միջոցներով էր գնել տարիներ առաջ: Տան անդամներից յուրաքանչյուրն ուներ իր

առանձնասենյակը: Տունը շրջապատված էր գեղեցիկ այգիով, իսկ մուտքի առջև լողավազանն էր:

Երգչի ծնողները ուրախացան որդուն տեսնելով տան շենին:

- Ինչպե՞ս անցավ ճանապարհորդությունդ, որդի՛ս - հարցրեց հայրը, նաև նկատելով, որ նա չափազանց մտահոգված տեսք ուներ:

-Լավ էր: Չեմ դժգոհում, -սառը պատասխանեց Սայիդը:- Ինձ հետաքրքրում է մի կարևոր հարց՝ ո՞վքեր են իմ նախնիները:

Ամուսինները շփոթված իրար նայեցին: Նրանք մտածեցին, թե ինչ կարող էր պատահել իրենց որդու հետ Հայաստանում:

-Դեռ ներս չմտած՝ հարցաքննությա՞ն ես անցել,- մի տեսակ խոժոռված տեսքով հարցրեց հայրը:

-Մի՛ նեղացեք ինձնից: Ես ամբողջ ճանապարհին միայն այդ հարցի մասին էի մտածում: Շատ եմ ուզում իմանալ, թե ինչու Երևանում գտնվելիս մի հայ նկարիչ իր արտաքին տվյալներով այնքան էր ինձ նման, որ լրագրողը շփոթությամբ ինձ մոտեցավ՝ ճեպագրույց անցկացնելու: Ինչո՞ւ ամեն անգամ հայկական երաժշտության, մանավանդ դուդուկի ձայն լսելիս մարմինս փշաքաղվում է այնքան, որ քիչ է մնում արտասվեմ, իսկ երկու օր առաջ Երևանում Ցեղասպանության թանգարանում սարսափելի վավերագրական պատկերներ դիտելիս խեղդվում էի հուզմունքից: Ինչո՞ւ...Ի՞նչ եք թաքցնում ինձնից: Ես թուրքի ու հայի խառնո՞ւրդ եմ: Ո՞վ եմ ես:

Ծնողները զգացին, որ այլևս անհնար է թաքցնել ճշմարտությունը, որը տասնյակ տարիներ ի վեր փակի տակ էին պահել: Սայիդն իր սուր ու արդարացի հարցադրումներով ասես մամլիչի տակ էր առել իրենց: Անտանելի էր այլևս տեսնել, թե որդին ինչպես էր տանջվում:

Հայրը ծանրորեն նստեց բազմոցին: Հետևելով նրա շարժումներին, որդին նույնպես տեղավորվեց աթոռին, դեմառդեմ նայելու ծնողներին: Զգաց, որ նրանք ոչ միայն նկատելիորեն հուզված էին, այլև գաղտնիք ունեն բացելու:

-Քո նախնիները հայեր էին,- առանց նախաբանի խոստովանեց հայրը:

-Ահա թե ի՞նչ,- ըմբոստացավ Սայիդը:- Նրանք հայեր էին, իսկ մենք՝ ուրանալով մեր կրոնը՝ դարձանք մահմեդականներ:

-Ո՛չ, տղա՛ս: Ամեն ինչ այդքան հեշտ չէ միանգամից բացատրել, -միջամտեց մայրը:

-Իսկ դուք բացատրեք, որ հասկանամ,- պատասխանեց Սայիդը, թեև գիտեր, որ Եղեռնից հետո ողջ մնացած հայերի մի մասը ստիպված իսլամացել էր՝ մահից փրկվելու նպատակով:

-Մեծ պապդ Վանից էր: 1915 թվականին թուրքերը կոտորեցին նրանց ողջ գերդաստանը՝ 20 հոգու, միայն նա ազատվեց ջարդից: Տատդ Դիարբեքիից էր: Նրանց ողջ ընտանիքից ողջ էր մնացել ինքը քրոջ հետ: Մեծացել էին որբանոցում: Վախենալով, որ իրենց էլ կսպանեն, հարկադրաբար իսլամացան: Ես էլ չգիտեի, թե ով եմ: Երբ ծնվեցի, որպես թուրք մեծացա: Ավելի ուշ՝ 90-նն անց հայրս, երբ մահամերձ էր, խոստովանեց, որ հայ է: Նույնը շարունակեցի

ես, երբ դու ծնվեցիր, որոշեցի ոչինչ չասել,- Ահմեդի աչքերը թացացան:- Կարծում ես՝ ինձ համար հե՞շտ է արյամբ, գենով լինել քրիստոնյա, բայց ընդունել իսլամը, ապրել որպես թուրք:

Սայիդը կյանքում երբևիցե իր հորն այդքան հուզված ու խեղճացած չէր տեսել: Նա ասես ոչ թե որդու, այլ Աստծո առջև էր խոստովանում իր մեղքը, միաժամանակ պարզելով հոգում կուտակված խոր ցավը, որն իր հետ գերեզման կտանի:

-Ուրեմն մենք ծպտյալ հայե՞ր ենք,- Սայիդը նույնպես սաստիկ հուզվեց: -Արյա՞ն կանչով եմ այսպես ինձ հանդուգն զգում, ցավում հայերի համար և դեռ բողոքի ցույցերի մասնակցում, հույս ունենալով ներողություն խնդրել հայերից: Ջավեշտալի է, ստացվում է, որ ինքս ինձնի՞ց պիտի ներողություն խնդրեի:

-Իմանալով ճշմարտությունը, քո կյանքը չի՞ ծանրանա, որդիս: Չէ՞ որ այսօր էլ Թուրքիայում հայերին հետապնդում են: Նրանց ամեն աշխատանք չեն տալիս, քանի որ իրենց հավասար չեն համարում,- դառնացած ասաց հայրը ու լռեց:

-Ես պետք է ընդունեմ իրականությունը, ինչպիսին որ կա, -պատասխանեց Սայիդը:- Բայց դու ինչո՞ւ լռեցիր, հայրիկ: Ինչո՞ւ չասացիր, որ հայերին անվանում են դավաճաններ, «գյավուրներ»: Թե՞ դու կարծում ես, որ մայրիկի հետ իսլամ ընդունեցիք, նրանք ձեզ հավատում են: Ո՛չ: Թուրքիայում ազգային փոքրամասնություններին, այդ թվում՝ հայերին, կողավորում են: Հիշեցնեմ քեզ, որ նույն հույները, հայերը և իրեաները ներառված են համապատասխանաբար 1,2,3 կողերի տակ: Չէ՞ որ Թուրքիայում բոլոր ազգերը կողավորված են: Այդ կողավորումը թուրքական պետությունը ժառանգել է Օսմանյան կայսրությունից: Այնպես որ, նրանք մեզ որպես իրավահավասար քաղաքացիներ չեն ընկալում:

Ջեյնաբ խանումը բոլորի համար տաք թեյ լցրեց՝ նստելով ամուսնու կողքին:

-Ի՞նչ պիտի անես, երբ իմացար ճշմարտությունը,- հարցրեց հայրը զգուշավոր տոնով:

-Կվերադառնամ իմ ինքնությանը: Կփոխեմ անձնագիրս, անունս: Ես դուրս կգամ այս կեղծիքից,- համարձակությամբ պատասխանեց Սայիդը:

Ծնողները թերևս նրանից այլ պատասխան չէին սպասում:

-Իսկ քո շրջապատը...Նրանցից շատերը քեզնից երես կթեքեն: Չէ՞ որ նրանց մեծ մասն ազգայնամուլ է:

- Ինձ այդ ամենն արդեն քիչ է մտահոգում:

-Բայց դա վերաբերում է նաև քո երեխաներին:

-Նրանք արդեն հասուն մարդիկ են: Թող իրենք որոշում ընդունեն՝ ինչպես ապրել:

Ծնողները լռեցին և վախվորած հայացքով նայեցին որդուն:

-Ես այսօր Ռահիմեի հետ կխոսեմ,- ասաց Սայիդը:

-Դրա կարիքը չկա: Նա իսկական մահմեդական է,- կամաց ասաց մայրը:

Որդին չկարողացավ զսպել զայրույթը: Նա միանգամից պռոթկաց կատաղությունից:

-Ինչո՞ւ թողեցիք, որ ես մահմեդականի հետ ամուսնանամ: Ձեր շրջապատում չկայի՞ն ծպտյալ հայերի ընտանիքներ: Թե՞ ուզում էիք, որ զավակներս վերջնականապես ծուլվեին մահմեդականների հետ, որ մեր գենը վերանա՞ր...

- Մի՛ մոռացիր, որ բոլորս ապրում ենք Թուրքիայում,- ասաց հայրը:

-Այսինքն՝ մոռանալով մեր ինքնությունը, ուրանալով մեր կրոնը, հավատը, պետք եղած դեպքում դուրս պիտի գանք հայերի՞ դեմ,- վրդովված շարունակեց Սայիդը:

-Նման բան չասացի: Մենք ի վերջո բացառություններից չենք: Հասկացիր, որ ցեղասպանությունից հետո մեր երկրում միլիոնավոր կրոնափոխ հայեր են ապրում: Նրանք իրենց չեն բացահայտում, որովհետև շատ վտանգավոր է...

-Ես տեղյակ եմ, հայրիկ, որ թուրքացած հայերից շատ քչերն են կարողանում ամերեսվել իրականության հետ: Հետևաբար, եթե թուրքացած հայը չի կարողանում ձակատ առ ձակատ կանգնել իր անցյալի հետ, ապա Թուրքիան ինչպե՞ս է ամերեսվելու ճշմարտությանը, երբ խնդրո առարկան նրա սեփական պատմությունն է, -Սայիդը ջղային հանկարծ ոտքի կանգնեց ու կիսատ թողնելով մոր պատրաստած թեյը՝ դուրս եկավ տնից:

-Այդ ո՞ւր,-մայրն անօգնական հայացքով կանչեց որդուն:

Սայիդը ոչինչ չպատասխանեց: Նա մինչև հոգու խորքը վիրավորված հայտնվեց փողոցում: Սաստիկ գայրացած՝ այլևս չուզեց տուն վերադառնալ:

Այդ օրը նա գիշերեց Ստամբուլի Սուլթանահմեթ պատմական թաղամասի կենտրոնում գտնվող «Four Seasons» հյուրանոցում: Այն յոթաստղանի հյուրանոց էր, ուր գրեթե յուրաքանչյուր իր կրում էր պատմության դրոշմը՝ 15-րդ դարի բազկաթռներ միլանյան պալատներից, թուրք սուլթանի օգտագործած խալիներ, պատմական աթոռ, դաշնամուր: Ամեն ինչ շնչում էր պատմությամբ:

Հյուրանոցն աչքի էր ընկնում նաև հրաշագեղ ամառային այգիով, գեղեցիկ սպասարկմամբ և բարձրակարգ ռեստորանով: Այս ամենին չի զիջում նաև սպա կենտրոնը, որտեղ 130 եվրո վճարելով՝ արժանանում ես «սուլթանական» մերսման:

Սայիդը հյուրանոցում նախևառաջ քայլերն ուղղեց դեպի սպա կենտրոն՝ նյարդերը հանգստացնելու: Համոզված էր, որ 90 րոպե տևող մերսումն իրեն փոքր-ինչ կգոհացներ...

Երեկոյան Սայիդը նստել էր ծովափին ընկած մի նստարանի վրա: Եղանակը տաք էր, և թափանցիկ էր ջուրը: Երկնքում հայտնվել էր զարմանալիորեն պայծառ, կարմրագույն վերջալույսը, որի արտացոլումը երևում էր ծովերի ջրերի և ավազների վրա: Օդը լի էր երկնքի, ջրերի բուրմունքով: Սայիդի աչքերը փայլում էին այդ գեղեցկությունից: Զգաց, որ ծովերը պատրաստվում էին ննջելու: Զխանգարելով նրանց անդորրը՝ երգիչը հետևում էր վայրի ձայերին, որոնք թաքնվում էին ծովափնյա եղեգների մեջ: Այնուհետև ամենուրեք լռություն տիրեց:

Սայիդը մտախոհ հայացքը չէր կտրում ջրերից: Հասկացավ, որ իր կյանքը հիմա նման էր այդ ջրերին: Սրտի զարկերակը հանգիստ էր խփում, քանի որ իրեն մտատանջող հարցերի պատասխանները գիտեր: Միայն մտածում էր, թե ինչպես ճշմարտությունն իր մասին

կընդունենին շրջապատի մարդիկ: Ահա ինչու ցանկացավ ծովափին մի ողջ հավերժություն անցկացնել:

Սակայն մի քանի օր մեկուսանալով՝ Սայիդին թվաց, թե իրեն գլխիվայր շուռ են տվել: Նա իր տեղը չէր գտնում: Անջատել էր բջջային հեռախոսը, որ զանգերին չպատասխաներ: Իր նվազախմբի տղաներին էլ զգուշացրել էր, որ մրսել, հիվանդացել է և բարձր ջերմություն ունի: Երանի՛ չէր այդպես լիներ: Համաձայն էր, թեկուզ հիվանդանոցում պառկած լիներ: Այնտեղ ծանր հիվանդներին անգամ կոմայից դուրս են բերում: Չէ՞ որ ֆիզիկական ցավը հեշտ է հաղթահարել, քան հոգեկան ցավը: Սայիդը լավ էր հասկանում, որ իր ազգային ակունքներին վերադառնալով՝ շրջապատում ամեն ինչ կփոխվի, քանի որ գիտեր, թե ինչպես են թուրքիայում վերաբերվում հայերին: Բայց դա իրեն չէր վախեցնում: Ջգում էր, որ վճռական քայլ պիտի կատարել... Ճակատագրական ուշացած քայլ: Թող բոլորն իմանան, որ ինքը հայ է իր գենով, արմատներով: Մի՞թե հայերը քիչ բան են արել հենց իր քաղաքի՝ Ստամբուլի համար:

Թարմ օդ շնչելու նպատակով նա որոշեց մի քիչ զբոսնել, անցնել երեկոյան Բոսֆորի նեղուցով: Հենց Բոսֆորի երկայնքով տեղակայված շքեղ կառույցները հայկական Պալլանների գերդաստանի գործերն են: Հրաշալի է հատկապես 19-րդ դարի կեսերին կառուցված Դոլմաբախչե պալատը, որի ճարտարապետը Կարապետ Պալլանն էր: Միայն շենքի ներքին հարդարման վրա ծախսվել է 14 տոննա ոսկի: Պալատի պատերը զարդարում են Հովհաննես Այվազովսկու կտավները: Եվ ոչ միայն պալատը, հայերը կառուցել են հանրահայտ դղյակներ, շենքեր: Սուրբ Փրկիչ, Սուրբ Աստվածածին, Պատրիարքարանի Սուրբ Աստվածածին, Սուրբ Թագավոր, Սուրբ Պողոս եկեղեցիները, Պեյլերպեյի պալատը, Մահմուդ Բ-ի, Հարպիե Մեքթեպի թանգարանները, Պաշտպանության նախարարություն շենքը, բազմաթիվ մզկիթներ, հիվանդանոցներ, պալատներ: Ստամբուլի վարչական շենքերը հայ ճարտարապետների ձեռքով են ստեղծվել:

Եվ ամենուր ծածանվում էին թուրքական դրոշները: Հանկարծ Սայիդն իր հայացքը հառեց Այա Սոֆյայի կառույցին, որը կառուցվել էր մեր թվարկության 330-ական թվականներին քրիստոնյաների կողմից: Այն սկզբում կոչվում էր Սուրբ Սոֆյայի տաճար: Բայց երբ 1453 –ի մայիսի 30-ին Մեհմեդ 2-րդ սուլթանը նվաճեց Ստամբուլը, հրամայեց տաճարին կից կառուցել չորս մինարեթներ և այն վերածել մզկիթի: Հետագայում՝ 1935-ին, Աթաթուրքի հրամանով մզկիթը վերածվեց թանգարանի, իսկ որմնանկարները և խճանկարները ջնջեցին ու սվաղեցին: Իսկ վերջին շրջանում խոսակցություններ են պտտվում, որ իշխանությունները կրկին ուզում են թանգարանը վերածել մզկիթի:

Երգիչը խոր հոգոց հանեց, մտածելով, թե ինչպես են թուրքերը դարեր շարունակ աղավաղում ամեն ինչէ՛ թե՛ պատմությունը, թե՛ մշակութային կառույցները, թե՛ ազգերի պատկանելությունը: Թուրքիան կարծես վաղուց դարձել էր կեղծիքի երկիր: Այո՛, դա իր երկիրն էր, իր հայրենիքը: Նա չէր ուզում լքել այն, պատրաստ էր ապրել այդտեղ՝ շարունակելով

պայքարել բռնության դեմ, արդարության, ազգային փոքրամասնությունների իրավունքները պաշտպանելու համար:

Իր ծանր մտքերը ցրելու ու մի բաժակ թունդ թեյ խմելու նպատակով Սայիդը որոշեց գնալ Գյուլերի սրճարան: Ինչպես միշտ, այստեղ մարդիկ շատ էին: Իրեն մատուցող երիտասարդ սպասավորից հարցրեց տնօրենի մասին: Բարեբախտաբար, նա իր սենյակում էր: Երբ դուռը կամաց ծեծեց, լսվեց ծեր լուսանկարչի բամբ ձայնը՝ ներս մտեք: Այդ ուշ ժամին Գյուլերի համար թերևս անսպասելի էր երգչի այցը: Նա բարձրացավ տեղից և աթոռ առաջարկեց՝ նստելու:

-Ձեր լուսանկարների ետևի՞ց եք եկել,- հարցրեց նա ու առանց պատասխանի սպասելու՝ դարակից հանեց օրեր առաջ արված գործերը:

Սայիդը թախծալի ժպիտով նայեց դրանց: Այնտեղ ինքը ուրիշ մարդ էր՝ լուսավոր հայացքով, ինչ-որ տեղ երազկոտ: Ինքը ընդամենը թուրք երգիչ ու երգահան էր, իսկ հիմա կարծես փոխվել էր 180 աստիճանով: Եթե մինչ այդ հիմնականում թուրքական երաժշտությունն էր պրոպագանդում, հիմա իմանալով իր հայկական ծագման մասին, գիտակցում էր, որ ամեն ինչ պետք է սկսել մաքուր էջից, այն էլ՝ քառասուն տարեկան հասակում:

-Եթե Մուրադ Ազիզօղլուն տեսնեք, նրան փոխանցեք լուսանկարները,- ասաց Գյուլերը, բայց հետո տարակուսանքով ծանր արտաշնչեց:- Ասենք, դժվար թե դուք նրան տեսնեք...Երևի առայժմ դրանք ինձ մոտ կպահեն:

Երգիչը միանգամից զգաստացավ:

-Իսկ ի՞նչ է պատահել նրա հետ:

-Դուք միասին չէի՞ք: Ինչքան գիտեմ, երկուսով էլ Հայաստան մեկնեցիք:

-Այո՛, երկու օրով մեկնեցինք ու հաջողությամբ վերադարձանք: Երեք օր է, ինչ Ստամբուլում ենք:

-Նրան ձերբակալել են հենց իր գրքի համար, որ նա ոչ միայն անդրադարձել է Եղեռնի թեմային, այլև այցելել է Երևան: Այսօր են իմացել: Նա մեղադրվում է թուրքերի ազգային ինքնությունը վիրավորելու համար:

Սայիդը զայրացած փլվեց աթոռին: Թվաց, թե Արա Գյուլերը սաստիկ ապտակ հասցրեց իրեն:

-Դուք էլ հավանաբար իշխանությունների ուշադրության կենտրոնում եք:

Կարծես մի քանի վայրկյանում նրա երակի մեջ մագնեզիում սրսկեցին ու նրա ողջ մարմինն այնպես տաքացավ, որ բոցեր արձակվեցին աչքերից:

-Ես միշտ էլ ընդդիմադիրների շարքերում եմ եղել: Չե՞ք հիշում, որ ինձ երկու անգամ բանտարկել էին: Բայց, միևնույն է, ոչնչից չեմ վախենում: Ես մինչև վերջ իմ սկզբունքների համար պիտի պայքարեմ, թեկուզ կյանքի գնով:

-Առյուծի սիրտ ունես,- արձագանքեց Գյուլերը՝ անցնելով դու-ի:

-Ոչ թե առյուծի, այլ՝ հայի:

Սայիդը չէր կարող չնկատել, թե ինչպես փոխվեց լուսանկարչի դեմքը: Ծերունին շփոթմունքը թաքցնելու համար վառեց սեղանին զցած չիբուխը:

-Երբեք ինձ այդ մասին չես ասել:

-Ո՞նց ասեի, երբ ես միայն Երևանից Ստամբուլ վերադառնալուց հետո եմ իմացել: Չգիտեի, որ գեներով, արյամբ հայ եմ, և ծնողներս այսքան ժամանակ թաքցրել են ինձնից:

Եվ քանի որ Գյուլերը սեղմել էր սեղանին ամրացված իր զանգի կոճակը, սպասավորը արագ ներս մտավ:

-Մեզ համար երկու բաժակ թունդ թեյ բե՛ր,- պատվիրեց նա ու մոտեցավ Սայիդին՝ գրկախառնվելով նրա հետ: -Աստված իմ, միշտ էլ քո հանդեպ առանձնակի համակրանք եմ ունեցել: Պարզվում է, որ մարդիկ գեներով միմյանց զգում են: Ձերոնք որտեղի՞ց են:

-Վանի և Դիարբեքրի նահանգներից: Իսկ դուք այստե՞ղ եք ծնվել:

-Այո՛, Ստամբուլում եմ ծնվել, սակայն մենք արմատներով Շապին-Գարահիսարից ենք: Հայրս սովորում էր Ստամբուլում: Նա 19 տարեկան էր, երբ 1915-ին եղեռն սկսվեց: Շապին-Գարահիսարում մնացած նրա ողջ ընտանիքը ցեղասպանության զոհ դարձավ:

-Հայի դժբա՛խտ ճակատագիր,- ցավով արձագանքեց Սայիդը: -Իսկ ինչո՞ւ հայկական ազգանուն չունեք:

-Մեր ընտանիքի ազգանունը Տերտերյան է եղել, բայց 1934 թվականին Թուրքիայում ազգանունների թուրքացման մասին օրենքի ընդունումից հետո, մերոնք վերցրել են Գյուլեր ազգանունը:

-Ես որոշել եմ փոխել անունս, անձնագիրս և հայերեն կտվորեմ: Դու ինձ կօգնե՞ս հայերենի լավ մասնագետ գտնել,- Սայիդը նույնպես անցնելով դու-ի, հոգեպես իրեն մի քիչ թեթևացած զգաց, քանի որ իր գաղտնիքի մասին առաջին անգամ բարձրաձայնեց:

-Իհարկե, կօգնեմ: Դու հայերենին կտիրապետես, որ հետո նաև հայերենով երգեր երգես: Ստամբուլահայ երգչուհի Սիբիլին ճանաչո՞ւմ ես:

- Ո՞վ չի ճանաչում նրան:

-Հայտնի թուրք երգահան Չենք Թաշքանին նույնպե՞ս գիտես:

-Այո՛: Իսկ ինչո՞ւ ես հարցնում:

-Նրա իսկական անունը Մաժակ Թոշկյան է: Նա ազգությամբ հայ է, իր համար նման կեղծանուն է ընտրել, որպեսզի խուսափի հետապնդումներից: Թոշկյանի հեղինակած երգերը շատ երգիչներ են կատարում: Հենց նրա երգերի լավագույն կատարողներից մեկը Սիբիլն է:

-Իսկապես չգիտեի այդ մասին:

- Տարիներ առաջ Սիբիլը մեծ հաջողություն ունեցավ, երբ նրա հայերեն լեզվով «Նամակ» տեսահոլովակը սկսեցին ցուցադրել թուրքական առաջատար հեռուստաալիքները: Նա համագործակցում է նաև թուրք երգիչների հետ: Դու հայերեն սովորի՛ր, ես մոտիկից կձանդթացեմ նրա հետ:

Սայիդը բարեհամբույր ու մտածկոտ ժպտաց: Նա զգաց, թե ինչպիսի հպարտությամբ է Գյուլերը պատմում հայ երգչուհու մասին: Այդ պահին նա շատ ափսոսաց, որ չէր մեծացել հայկական միջավայրում, ուստի մանկության ու պատանեկության հասակում ազգությամբ հայ ընկերներ չի ունեցել, հայկական ավանդույթներով չի դաստիարակվել: Այսինքն՝ իր ջուրը ձիշտ առվով չի հոսել ոչ իր մեղքով:

- Իսկ ձեր տնեցիներն ինչպե՞ս արձագանքեցին քո համարձակ քայլը,- Գյուլերը հասկացավ, թե ինչպիսի մեծ խնդիրների առաջ էր կանգնած երգիչը:

-Ես նրանց ոչինչ չեմ ասել: Այժմ ապրում եմ Ստամբուլի հյուրանոցներից մեկում:

Սայիդը փոքր- ինչ մռայլվեց:

-Եթե ի սկզբանե իմանայի իմ հայ լինելու մասին, երբեք թուրք կին չէի առնի: Որտեղի՞ց իմանայի, եթե ծնվելուց ի վեր ծնողներս ինձ հետ թուրքերեն են խոսել, իսլամ են ընդունել, օրական հինգ անգամ մասնակցում ենք նամազների և մզկիթներ ենք հաճախում: Հասկանո՞ւմ ես, մեր տանն անգամ չկար թաքուն մի անկյուն, որ քրիստոնեական մի պատկեր լիներ կամ... Ինչե՞ր են խոսում, եթե մերոնք որպես թուրք են ինձ մեծացրել...

Սայիդն իր հուզմունքով վարակեց Գյուլերին: Նա կրկին դիմեց իր անհանգստությունը փոքրիշատե փարատող չիբուխին, որն իր կրակով փորձեց թուլացնել տիրոջ նյարդերը:

-Հնարավոր է, որ մարտի դաշտում բոլորովին մենակ մնաս,- խորհրդավոր տոնով արտահայտվեց ծեր լուսանկարիչը՝ քաշելով չիբուխը:

-Ծնողներս կողքիս կմնան: Ես համոզված եմ...

-Նրանք կարող էին մինչև վերջ գաղտնիքը պահել, բայց չստացվեց: Ուրեմն, քեզ չեն լքի: Ե՞րբ ես քո որոշման մասին հայտնելու նրանց:

-Այսօր պետք է հանդիպեմ մտերիմ ընկերներիցս երկուսին, որ նրանց էլ ասեմ,- Սայիդը նայեց ձեռքի ժամացույցին:- Ես գնամ, նրանք արդեն հյուրանոցի մոտ ինձ են սպասում:

Նա վերցնելով իր լուսանկարները, սիրով հրաժեշտ տվեց Գյուլերին: Սակայն Սայիդը խոր հիասթափություն ապրեց, երբ Արիֆը և Սուլեյմանը տհաճությամբ ընդունեցին իր հայ լինելու մասին լուրը: Հիշեց Գյուլերի խոսքերը, որ թուրքերի մեծ մասը ազգայնամուլներ են: Ցավոք, իր ընկերները ևս նրանց շարքերում էին: Նաև հիշեց հայտնի ասացվածքը. «Մարդիկ բարեկամանում են աստիճանաբար, տարիների ընթացքում, իսկ դառնում են թշնամիներ մեկ օրվա մեջ»:

-Դե՛, եթե հայ ես, գնա՛ Հայաստանում ապրի՛ր,- չարությամբ շարտեց Արիֆը:

-Իմ հայրենիքը Ստամբուլն է: Այստեղ են ծնվել ծնողներս, ես, երեխաներս...Այստեղ էլ ձեր կողքին կապրեմ որպես հայ և կպաշտպանեմ հայերի ոտնահարված իրավունքները:

-Կարծում ես՝ քո երկրպագուները կողջունե՞ն քո հայ լինելը: Դու առաջվա նման մեծ հեղինակություն չես վայելի,- ավելացրեց Սուլեյմանը:

-Լավ երգչին ընդունում են ոչ թե ազգության, այլ՝ ձայնի համար,- Սայիդը մի պահ ուզեց տալ հայազգի երգչուհի Սիբիլի անունը, բայց հետո լեզուն կծեց, չսաստկացնելու նրանց զայրույթը: -

Բայց մենք ընկերներ ենք, չէ՞ որ ընկերության մեջ ազգային պատկանելությունը դեր չպիտի ունենա: Այնքան աղուհաց ենք կիսել միմյանց հետ,- դառնությամբ ավարտեց իր խոսքը:

-Քեզ չե՞ն սովորեցրել դպրոցում, որ թուրքը միայն թուրքի հետ պիտի ընկերություն անի, թե՞ մոռացել ես,-ցինիկաբար հարցրեց Արիֆը:

-Իսկ տասնյակ տարիների մեր մտերմությունը: Մի՞թե մեր կապվածությունը ոչ մի արժեք չունի:

-Հայի կողքին ոչինչ էլ արժեք չունի,-հստակ եզրակացության հանգեց Սուլեյմանը:

Ընկերների հեռանալուց հետո Սայիդը մռայլվեց: Այս անգամ հիշեց, թե ինչպես է նրանց անվերջ օգնության հասել, այնինչ նրանք մի ակնթարթում ամեն բան ուրացան ու իր հետ թշնամիներ դարձան: Այնուհետև ծանր մտքերը նրան տարան դեպի հեռուն՝ 1915 թվականը, թե ինչպես թուրքական մեջլիսի հայ պատգամավորներից Վարդգեսը, ով մի քանի անգամ փրկել էր մարդասպան Թալեաթի կյանքը, վերջինիս հրամանով Գր.Զոհրապի հետ դաժանաբար սպանեցին: Երևի դա է թուրքի իսկական դեմքը: Նա հիմա իր մաշկի վրա էր զգում դարերի ընթացքում չմարվող այդ ատելությունը: Սայիդը մտածեց, որ, ցավոք, ժամանակները չեն փոխել ո՛չ նրանց հոգեբանությունը, ո՛չ մտածելակերպը: Եթե Աստված ոչ արասցե, նորից կոտորած լինի, իր արդեն նախկին ընկերներն էլ նույն հաճույքով իրեն կզլխատեն...

Մարդու կյանքում լինում են ճակատագրական պահեր, երբ ցանկություն է առաջանում փոխելու ինքդ քեզ:

Սայիդի համար ժամանակը կանգ էր առել, վայրկյանները դադարել էին այս ու այն կողմ թռչելուց: Ժամերը հալվում ու ծուլվում էին ժամանակի մեջ՝ մեղրամոմի պես: Նա ուզում էր, որ իր «երջանկության թռչունը» թռչեր՝ աստիճանաբար կտրվելով մեղսավոր երկրից և իր թռիչքը հասցներ ավետյաց երկիր: Սակայն նա հասկանում էր, որ ինքը միայնակ էր ու տխուր: Միայնակ էր ու ազատ: Ու զգում էր, որ երջանկության թռչունը իրեն հեռու կտանի երկրի «մոխրագույն-սպիտակ» հորիզոնից:

Վաղ առավոտյան Սայիդը գնաց անձնագրային բաժին՝ փոխելու անունը, նաև մահմեդականի փոխարեն գրելու ազգությունը՝ հայ: Որպես անուն ընտրել էր Գրիգոր՝ Սբ.Գրիգոր լուսավորչի անունով: Բեմական անունը կլինի Գրիգ, ազգանունը կմնա նույնը՝ Գրիգ Ակչամ: Նրա համար այլևս հետդարձի ճամփա չկար: Հետո գնաց հանդիպելու իր նվազախմբի տղաներին: Մեկ շաբաթից համերգ ուներ Անկարայում: Փորձերը տևեցին ևս մի քանի ժամ: Կեսօրին ազատելով խմբի երաժիշտներին, զանգեց իր պրոդյուսերին՝ միասին ճաշելու Գալաթասարայ թաղամասում գտնվող «Զեզայիր» ռեստորանում: Որոշել էր նրան նույնպես անպայման հայտնել ճշմարտությունը՝ նախքան այդ մասին նա կիմանար ուրիշներից կամ թեկուզ

լրատվամիջոցներից: Եթե պրոդյուսերն էլ իր ընկերների պես հրաժարվեր իրենից, ստիպված պիտի լիներ նոր մարդ գտնել, հավանաբար հայկական արմատներով:

Մտքերի մեջ Սայիդն անհանգիստ տեղավորվել էր ռեստորանի մի անկյունում, երբ հեռվից նկատեց Ռուստամին: Նա վայելչակազմ, թիկնեղ, արտահայտիչ խոշոր աչքերով մի տղամարդ էր, որը երգչից մեծ էր յոթ տարով: Սայիդը նրան հեռվից ձեռքով ժեստ արեց: Մոտենալով նրան՝ Ռուստամը ջերմորեն սեղմեց երգչի ձեռքը և ասաց.

-Հայաստանը քեզ վրա ինչպիսի՞ տպավորություն թողեց:

-Երկու օրը շատ քիչ ժամանակ էր Հայաստանը ճանաչելու համար, բայց գոհ եմ ճամփորդությունից:

-Իմացա՞ր, որ Մուրադ Ազիզովուն են ձերբակալել:

Սայիդը թեթևակի մռայլվեց: Նա պատասխանեց, որ այդ լուրն իմացել էր ծեր լուսանկարիչ Գյուլերից: Հիշեց Մուրադին, որը ոչ ոքից չէր վախենում, քանի որ նա կարգին մտավորական է, այն մտավորականներից, ով չի կորցրել խիղճը, բարոյական իր նկարագիրը:

Այդ պահին մոտեցավ մատուցողը՝ տալով նրանց մենյուն:

-Ի՞նչ ենք ուտելու,- դարձյալ մտազբաղ հարցրեց Սայիդը:

Ռուստամը գերազանց գիտեր նրա նախասիրած ճաշատեսակներն ու ուտեստները և իր հայեցողությամբ ինչ-որ բան պատվիրեց:

-Ի՞նչ ենք խմելու,-ընկերոջը դիմեց Ռուստամը:

-Կարմիր ֆրանսիական գինի:

-Շատ լավ, մի շիշ գինի կմատուցեք,-մենյուն հանձնելով մատուցողին՝ նա դիմեց Սայիդին:- Ինչի՞ մասին էինք խոսում:

-Այն մասին, որ Մուրադ Ազիզովուն բանտարկել են Հայոց Ցեղասպանության մասին գիրքը գրելու և տարածելու համար: Կուզենայի նրան տեսնել, բայց ինչքան որ տեղյակ եմ, միայն հարազատներն իրավունք ունեն նրան տեսակցելու: Համենայն դեպս կփորձեմ հանդիպել նրան...

-Իմ կարծիքով, Թուրքիան երբեք չի ընդունի Եղեռնի փաստը: Նա միայն արդարանում է՝ ընդգծելով, որ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայերին տեղահանել են: Այնինչ պատմական ճշմարտությունն այն է, որ պաշտոնապես կառավարությունն է որոշել բնաջնջել հայերին:

-Իսկ դու ինչպե՞ս ես վերաբերվում այն հայերին, ովքեր շարունակում են ապրել Թուրքիայում:

-Շատ նորմալ: Գիտես, որ մեզ մոտ հայերից բացի բնակվում են հույներ, քրդեր, արաբներ, եզդիներ, ասորիներ: Թեև Թուրքիայի սահմանադրության 66-րդ հոդվածում ասվում է, որ Թուրքիայի յուրաքանչյուր քաղաքացի հանդիսանում է թուրք, որ բնակչության 90 տոկոսը թուրքեր են: Մինչդեռ սուտ են այդ տվյալները: Միայն քրդերը, որոնց քանակը ողջ աշխարհում կազմում է 38 միլիոն, մեզ մոտ նրանց թիվը հասնում է 20 միլիոնի:

-Իսկ դու հայ ընկերներ ունե՞ս,- մի տեսակ վախվորած հարցրեց Սայիդը:

-Իհարկե, ունեմ: Իսկ ինչո՞ւ ես հարցնում:

Մատուցողը բերեց գինին և մի քանի ուտեստներ:

-Սպասի՛ր, գինի լցնեմ ու անպայման կպատասխանեմ հարցիդ,- նա լցրեց երկուսի բաժակները:-Ղե՛, վերցրո՛ւ, մեր հանդիպման կենացը:

Նրանք կիսով չափ վայելեցին գինին:

-Մի քանի օր առաջ իմացա, որ ես էլ հայ եմ: Կարո՞ղ էիր պատկերացնել,- խոստովանեց Սայիդը:

-Այդ ինչպե՞ս պարզեցիր,- հանկարծակիի եկավ Ռուստամը:

-Հավանաբար արյան կանչով: Ծնողներիս ստիպեցի, որ ասեմ, թե ովքեր են իմ նախնիները: Պարզվեց, որ նրանք հայեր էին, հետո ստիպված իսլամ ընդունեցին ջարդերից խուսափելու համար: Այսինքն՝ կրոնավորյալ հայեր են թե՛ մայրս, թե՛ հայրս:

-Ուրախ եմ հետաքրքիր անակնկալի համար:

Սայիդը զարմացավ նրա ջերմ վերաբերմունքից: Նման պատասխանի չէր սպասում: Նա չթաքցրեց իր հուզմունքը:

-Անկեղծ ասած, չգիտեի, թե ինչպես կընդունեիր այդ լուրը: Իմ ամենամտերիմ ընկերները՝ Արիֆը և Սուլեյմանը ինձնից հրաժարվեցին, նույնիսկ ծաղրեցին ինձ՝ ասելով, որ եթե հայ եմ , գնամ Հայաստան:

-Ամոթ նրանց: Սակայն ուզում եմ ուրախությանդ չափը մի փոքր ավելացնել ու ասել, որ ես էլ արմատներով հայ եմ, թեև թուրքական անուն, ազգանուն ունեմ: Այսինքն՝ մենք էլ ծպտյալ հայերից ենք, -իր հերթին խոստովանեց Ռուստամը:

-Ի՞նչ ես ասում,- Սայիդը կանգնեց և մոտենալով՝ գգվեց պրոոպյուսերին:-Որտեղի՞ց են ձեր նախնիները:

-Խարբերդից:

-Հավանաբար դու էլ հայերեն չգիտես:

-Գիտեմ, նաև խաչ եմ կրում,- Ռուստամը թաքուն ցույց տվեց իր վերնաշապիկի տակ թաքնված խաչը:

-Դու հայկական եկեղեցի հաճախո՞ւմ ես:

-Երբեմն: Ասեմ, որ դժվար է ծպտված հայերի վիճակը: Նրանք վախենում են նոր ջարդերից: Քո բացակայության ժամանակ, Եղեռնի հիշատակման նախօրեին, Թուրքիայի մեջլիսի հայազգի պատգամավոր Կարո Փայլանը խորհրդարան էր տարել 1915 թվականին նահատակված Օսմանյան պառլամենտում գործող թվով յոթ հայ մտավորական-պատգամավորների լուսանկարները, հայտարարելով, որ նրանք սպանվել են Ցեղասպանության ժամանակ և պահանջել է թուրքական խորհրդարանից՝ հետաքննություն սկսել նրանց սպանության առթիվ: Պատկերացնո՞ւմ ես, առաջին անգամ Թուրքիայում Ազգային ժողովում հայը բարձրաձայնում է նրա սխալը , պահանջում, որ ընդունի այն:

-Չափազանց համարձակ քայլ է Փայլանի արածը: Նման դեպք չեն հիշում:

-Սակայն դա ամենը չէ: Նրա ելույթից հետո թուրք պատգամավորները դահլիճից բղավել են. «Այս հողերում ցեղասպանություն չի եղել, Մեջլիսի ամբիոնից թուրք ժողովրդին չես կարող վիրավորել, Աբդուլ Համիդին չես կարող վիրավորել: Դու Հայաստանի պատգամավոր չես, Թուրքիայի Մեջլիսի պատգամավոր ես»:

-Փայլանը կո՞ւլ է տվել այդ վիրավորանքը: Ինչպե՞ս թե ցեղասպանություն չի եղել,-Սայիդը մի պահ հիշելով Երևանում ցեղասպանության թանգարանում թողած իր մակագրությունը, հասկացավ, որ Հայաստանի հետ դիվանագիտական հեռավորությունը հնարավոր է հաղթահարել երկու ժողովուրդների մերձեցմամբ, միայն թե դրան խոչընդոտում են ամենից առաջ Թուրքիայի պետական այրերը:

-«Ցավում եմ, որ ցեղասպանություն բառն արտաբերելը այստեղ ընկալվում է որպես հանցանք, սակայն ես չեմ դադարելու ասել այն, ինչին հավատում եմ», - պատասխանել էր հայ պատգամավորը: Այդ հայտարարությունից հետո այժմ Կարոն սպառնալիքներ է ստանում իր հասցեին, որ նրան էլ կարժանացնեն Հրանտ Դինքի ճակատագրին: Նա հիմա թիկնապահով է շրջում: Հայ համայնքը մտահոգված է նրա կյանքի ապահովության հարցով- իր խոսքն ավարտեց Ռուստամը և ի հավելումն ասաց:-Այնպես որ, վտանգավոր է հայ լինելը: Ավելին ասեմ, թուրք հայտնի լրագրող, գրող, Եղեռնի կազմակերպիչներից Ջեմալ փաշայի թորը՝ Հասան Ջեմալը, T24 կայքի իր սյունակում անդրադարձել է Թուրքիայում շարունակվող բախումներին և ահաբեկչություններին, նշելով, որ իր հայրենիքը դժոխքի է վերածվել: Ի դեպ, նա նույնպես դատապարտում է Հայոց Ցեղասպանությունը:

Ուշադիր լսելով Ռուստամին՝ երգիչն արձագանքեց.

-Արի խմենք մեր ազգի հարատևման կենացը...Թող այլևս ցեղասպանություն չլինի: Ալլահը թող Թուրքիայի կառավարությանը դարձի բերի...

Ռուստամը ներողամտորեն ժպտաց: Հոգու խորքում նա շարունակում էր չհավատալ, որ Թուրքիան մի օր կընդունի իր նախնիների սխալը: Նա իր երկրում բոլոր ազգերին էր ճնշում, այդ թվում՝ ամենից շատ քրդերին, որոնք մահմեդականներ են: Քրդաբնակ վայրերում կառավարական ուժերը 70 տոկոսով ավերել են աղքատ շրջանների շատ քաղաքներ: Ավելի քան 500 հազար մարդ ստիպված են եղել լքել իրենց տները: Անգամ Սիրիայում նման մասշտաբի ավերվածություններ չեն եղել: Ավելին. Թուրքիայի ԶԼՄ-ները բազմիցս նշել են, որ նախագահ Էրդողանն իր փարիսեցիությամբ ոչնչով չի զիջում երիտթուրքերին և նրանց արժանի հետնորդն է: Նա ոչ միայն մերժողական քաղաքականություն է վարում Հայոց Ցեղասպանության ճանաչման հարցի վերաբերյալ, այլև առիթ եղած դեպքում սպառնում է արտաքսել Թուրքիայի տասնյակ հազարավոր հայերի:

Նրանց գրույցը ձգվեց այնքան, մինչև գինին կվերջանար:

Երբ Սայիդը մտավ հյուրանոց, անջատեց հեռախոսը և փռվեց բազմոցին՝ խոր քուն մտնելով: Անքուն գիշերներից հետո այդ օրն առաջին անգամ իսկապես թուլացան նրա նյարդերը, և անբացատրելի խաղաղությամբ պարուրվեց հոգին:

Ընդունված է, որ մարդու էթնիկ պատկանելությունը որոշվում է նախնիների ազգությամբ, ինչը չի պահպանվել թուրքերի մոտ: Թուրքիայում հայը լինելով ծպտյալ, ծնվելով «թուրք» կամ «քուրդ» և իմանալով իր արմատների մասին, սկսվում է նրա մոտ խառնաշփոթ վիճակ ու պայքար ոգու, արյան, գենետիկ ժառանգության, հիշողության և իրականության միջև, որը հաճախ ծայրահեղ դրսևորումներ է ունենում /ատելություն, չարություն, անզորություն, բարոյութ/: Այն հայերը, ովքեր կարողանում են իրենց մեջ արթնացնել իրենցից օտարված, քնած գեները, վստահաբար անվախ են: Հայությունից հեռանալը նրանց համար նաև հայաստյացություն է, որը հենց հայի դեմ գործող գեներ է օտարի ձեռքին:

Մի շաբաթվա բացակայությունից հետո, երբ Սայիդը տուն վերադարձավ, ծնողները խեղճացած դեմքերով նրան դիմավորեցին: Այնպիսի տպավորություն էր, որ նրանք լքված են, անօգնական ու միայնակ: Սայիդը հոգու խորքում սուր ցավ զգաց: Որպես կրտսեր որդի՝ նա շատ էր կապված ծնողների հետ:

-Իսկ մեզ թվում էր, որ դու այլևս տուն չես գա,-ասաց մայրը:

-Ես պիտի մենակ մնայի, որպեսզի ծանր ու թեթև անեի իմ ծրագրերն ու անելիքները:

-Եվ ի՞նչ որոշեցիր...Թեև ինչո՞ւ են հարցնում: Քաղաքի լրատվամիջոցներն արդեն անդրադարձել են քեզ, նշելով քո հայկական ծագման մասին և որ...

Հոր խոսքերը կիսատ թողնելով՝ որդին շարունակեց.

- Այո՛, ինձ սրանից հետո Գրիգոր կանվանեք: Ես այդպես եմ ուզում:

-Կարծում եմ՝ գիտակցում էիր, թե ինչ շրջադարձ ես կատարել քո կյանքում,- զգուշաբար հարցրեց Ահմեդը՝ խորասույզ հայացքն ուղղելով որդուն:

-Անկասկած, դուք երկուսով պիտի ընդունեք իմ որոշումը:

-Բայց Ռահիմեն լրատվամիջոցներից իմանալով լուրը՝ երեխաների հետ հեռացավ: Նա գնաց ծնողների մոտ,- կնոջը լրացրեց ամուսինը:-Գուցե փորձե՞ս կնոջդ հետ խոսել, համոզել...

Սայիդը մռայլվեց հոր խոսքերից: Նա մտածեց, թե ինչ էր նշանակում համոզել մեկին, ով իր կողքին ապրել է շուրջ 20-21 տարի: Ուրեմն նա երբեք էլ հավատարիմ անձ չի եղել, եթե առիթ եղած դեպքում հանգիստ կարող է լքել իրեն: Հիշեց, որ այդպես միայն առնետներն են թողնում նավը խորտակումից առաջ:

-Եթե նա, առանց ինձ հետ հանդիպելու, նման որոշում է կայացրել, նրա ետևից չեմ գնա...Մանավանդ որ նրա հայրը թուրք ազգայնական կազմակերպության անդամներից է: Ես հենց ձեզնից էլ նեղացած հեռացա այն պատճառով, որ ինձ համար ժամանակին զտարյուն

թրքուհի ընտրեցիք: Ահա մեր միասնության վերջը և նաև ձեր անհեռատեսության արդյունքը,-
փոքր –ինչ զայրացած խոսեց Սայիդը:

Ծնողները մի ակնթարթ լռեցին՝ մեղսավորի հայացքով նայելով իրենց որդուն:

-Իսկ զավակներ՞ո՞րդ,- հարցրեց հայրը:

-Այժմ թող նրանք մնան իրենց մոր հետ: Ժամանակի ընթացքում կփորձեմ տղայիս՝
Մուստաֆային իմ կողմը քաշել, եթե ինձ հաջողվի...

-Ավագ եղբայրդ՝ Քյերիմը, նույնպես խիստ զայրացած է քո դեմ,- ասաց Ջեյնաբ խանումը:-
Նա երեկ էր այստեղ եկել:

-Որպես ոստիկան իր հրամանները տվեց ու գնա՞ց,- հարցրեց Սայիդը:- Նա երբեք էլ չի
թաքցրել իր ատելությունը հայերի հանդեպ: Իմ խնամու պես էլ նա «Գորշ գայլեր» ազգայնական
շարժման անդամներից է: Հայտնի է, որ նրանց գործունեությունը երկրի ներսում ուղղված է
ժողովրդավար ուժերի, ազգային փոքրամասնությունների դեմ է... Նրանք նույնպես ժխտում
են Հայոց Ցեղասպանությունը:

-Քո հարազատները միանգամից թշնամիներդ դարձան: Եղբայրդ քեզ չի ների,- ասաց Ահմեդը:

-Թող չների: Մենք երբեք էլ մեր հայացքներով իրար նման չենք եղել,- սառնասրտորեն պատասխանեց
Սայիդը:

-Բայց դուք եղբայրներ եք, ոչ թե՛ թշնամիներ,-անհանգիստ ասաց մայրը:

-Մայրիկ, նա անգամ եթե չի ընդունում իմ ազգային ինքնությանը վերադառնալու արարքը, թշնամիս
լինել չի կարող: Կարծում եմ՝ նաև որևէ ոտնձգություն չի անի իմ դեմ: Ես ազատ երգիչ եմ, երգահան, իմ
ազգային պատկանելությունն ընդգծելով՝ դրանից իմ մարդ լինելը չի փոխվում:

«Նա քեզ կոչնչացնի», - Ահմեդը քիչ էր մնում իր մտքերը բարձրաձայն արտահայտեր Քյերիմի
մասին, բայց իրեն հագիվ զսպեց: Այո, ավագ որդին կատաղած էր, որ իր արմատներում հայի
արյուն կար: Նա դրա համար անգամ իրենց անիծեց: Սակայն այդ մասին Սայիդին ոչ մի խոսք:

-Իսկ ձեզ մոտիկ հարևաններն ինչպե՞ս արձագանքեցին իմ հայկական ծագումն իմանալով,-
հարցրեց Սայիդը:- Խոսքս Նունուֆարի և Չինգիզի մասին է: Նրանք նույնպե՞ս իմ պատճառով
ծեզնից երես թեքեցին:

-Ո՛չ: Նրանք միայն վախեցած էին,- ասաց Ջեյնաբ խանումը:

- Ինչո՞ւ հայերից պիտի վախենալ կամ փախչել:

-Ո՛չ, ո՛չ,- ի լրացումն ասաց Ահմեդը:- Նրանք ևս ծպտյալ հայեր են: Սակայն չեն ուզում մինչև
մահ բացահայտվել: Վախենում են, որ հանկարծ ցեղասպանություն կլինի կամ զանգվածային
գաղթ, եթե հայերը որոշեն նորից քրիստոնյա դառնալ...

-Նրանց չի կարելի մեղադրել, որ մահմեդականներ են դարձել ձեզ նման: Թուրքիայի
պատմության մեջ չէ՞ որ հայերի կոտորածները հաճախ են կրկնվել: Իսկ նրանք, ովքեր
ջարդերի ականատեսներն էին, իրենց սարսափն են փոխանցել սերունդներին: Բայց դուք մի
վախեցեք, ես միշտ ձեր կողքին կլինեմ:

-Իմացի՛ր, որդի՛ս, աշխարհում ինչքան էլ մեծ տերությունների ուժերը վերադասավորվեն, միևնույն է, նրանցից յուրաքանչյուրն իր հետաքրքրությունն ու շահն է հետապնդում: Նրանց համար մարդկային զոհերն ու մարդկանց ճակատագրերն այնքան չեն հետաքրքրում, որքան տարածքների ու նյութական ռեսուրսների յուրացումը:

Ծնողների ու Գրիգորի գրույցը դեռ կշարունակվեր, եթե երգչի ձեռքի հեռախոսը չզնգար: Իր նվագախմբի տղաները նրան էին սպասում:

Գրիգոր Ակչամը շուտափույթ դուրս եկավ տնից:

Ստամբուլի ոստիկանության անվտանգության ծառայության աշխատակից Քյերիմ Ակչամն իր աշխատասենյակում անհանգիստ ու ջղաձիգ քայլում էր: Օրեր առաջ լրատվամիջոցներից տեղեկանալով այն մասին, որ եղբայրը հայկական ծագում ունի և փոխել է անունը, իր տեղը չէր գտնում: Քաղաքի բոլոր ծանոթներն ու բարեկամները լավ էին ճանաչում իրենց: Իսկ եղբոր անունը, որպես երգչի, հայտնի էր ողջ Թուրքիայում:

Քյերիմն իրեն կարծես ոչնչացված էր զգում: Ատելով հայերին, նա երբևիցե չէր կարող պատկերացնել, որ իր նախնիները եղել են հայեր, ծնողներն էլ կրոնափոխ եղած հայեր են: Ո՛չ, նա ամենևին պատրաստ չէր հաշտվելու այդ անդուր ու դառը ճշմարտության հետ: Ղա իր համար նույնիսկ ծանրագույն վիրավորանք էր: Ջայրույթով մտածեց այն մասին, որ եղբոր այդ հանդուզն քայլն ինքը երբեք չի ների, թեկուզ իրենք իրար հետ համերաշխ չեն եղել, քանի որ տարբեր մտածելակերպ ու աշխարհայացք ունեին: Ամենից խոցելին թերևս իր համար ոստիկանական բաժանմունքի պետի հետ ունեցած երեկվա խոսակցությունն էր: Գործերի բերումով նրա մոտ էր հայտնվել, երբ պետն իրեն հարցրեց.

-Ճի՞շտ է, որ դու հայկական արմատներ ունես:

-Զգիտեմ,-պատասխանել էր նա:- Ես մահմեդական եմ, այսինքն՝ թուրքից էլ թուրք եմ:

Պետը բազմանշանակ օրորել էր գլուխը:

-Եթե եղբայրդ որպես անվանի երգիչ համարձակվել է հայտարարել այդ մասին, անգամ փոխելով անձնագիրը և անունը, ուրեմն՝ դա է իրականությունը: Փաստորեն դուք կրոնափոխ հայերի սերունդ եք:

Քյերիմ Ակչամը գունատվել էր: Նրան մի պահ թվացել էր, թե պետն իրեն աշխատանքից ազատման հրաման կարձակի:

-Ես ասում եմ հայերին և երբեք չեմ հաշտվի այն մտքի հետ, թե 100 տարի առաջ ովքեր են խառնվել մեր ազգի հետ:

-Բայց տեղյա՞կ ես, որ կրոնափոխ հայերի թիվը մեր երկրում հասնում է մի քանի միլիոնի: Ստամբուլում էլ ապրում են հազարավոր հայեր, որոնք հաճախում են հայկական դպրոցներ:

-Այո՛, սակայն հայերը քրդերի հետ իրենց բողոքի ձայնն են բարձրացնում՝ պահանջելով իշխանություններից հարգել իրենց իրավունքները:

Ոստիկանության պետը դառն քննիչները:

-Թող բողոքեն: Ո՞վ է նրանց լսողը կամ պահանջները կատարողը: Մի՛ մոռացիր, մեզ որպես ժողովրդավարական երկիր պիտի ճանաչեն թե՛ Եվրոպայում, թե՛ աշխարհի այլ երկրներում: Մենք բացահայտ իրավունք չունենք դիմելու բռնությունների: Իսկ բողոքների դուրս գալը մեր երկրում սովորական է դարձել, մանավանդ շաբաթ ու կիրակի օրերին: Մեզնից պահանջվում է միայն օրինազանցների, ահաբեկիչների, ծայրահեղականների ականջները պինդ քաշել... Հետո էլ հայերը մեզ գրեթե չեն անհանգստացնում: Նրանք «խելոքացել են», այնինչ քրդերն իսկական պատուհաս են դարձել մեր գլխին: Քիչ է, որ Սիրիայի, Իրաքի տարածքներում ինքնավարություն են ստեղծել, ուզում են մեզ մոտ էլ նույնն անել:

-Մեր երկրի իշխանությունները շատ լավ են հասկանում նրանց պահանջները և անպայման կձգեն նրանց, ինչ անում են հիմա Ղիարբեքի մահանգում,-ասել էր ինքը:

-Է՛հ, չգիտեմ,- ձեռքը թափ էր տվել պետը:- Ամեն ինչ պիտի անենք նրանց սանձերը քաշելու համար, թեկուզ արյունահեղությունն անխուսափելի է... Նրանք բանակցությունների լեզուն չեն հասկանում: Լավ, Քյերիմ, դու էն ասա՛, երեկ ռեստորանում անկարգության համար երկուսին ոստիկանական բաժանմունք էին բերել: Ի՞նչ արեցիք նրանց հետ:

-Ոչ մի բան: Նրանք դեռ այստեղ են:

-Ո՛չ դանակահարություն է եղել, ո՛չ էլ սպանություն: Այդ հիմարներին ազատ արձակեք: Թե չէ եթե ամեն չնչին արարքի համար մարդկանց ձերբակալենք ու դատենք, մեր բանտերում տեղ չի լինի: Առանց այն էլ չափից շատ կալանավորներ ունենք: Հո՞ հարևան երկրներում էլ վարձով բանտեր չենք կառուցի, բան ու գործ չունե՞նք:

-Հիմա ձեր կարգադրությամբ նրանց ազատ կարձակեմ,-պատասխանել էր Քյերիմը:

Ինքը ոստիկանական պետի աշխատասենյակից դուրս գալով՝ հազիվ խորը արտաշնչել էր: Նրան մի պահ թվացել էր, թե ներքին գալույթից կոկորդը սեղմվել էր ու թթվածնի պակաս էր զգացվում: Սակայն շարունակում էր ատելությամբ մտածել հայերի մասին.«Եվ դեռ հայերը սիրում են բարձրաձայնել, թե հայկական գենը դոմինանտող է, և գրեթե անհնար է նրանց ձուլել, թեկուզ 100 տարի անցնի: Այնինչ և՛ 1915-ից առաջ, և՛ հետո շատ հայեր իրենց կյանքը փրկելու համար ընդունել են իսլամ, կա՛մ թրքացել են, կա՛մ էլ քրդացել՝ կորցնելով իրենց լեզուն և ինքնությունը: Ավելին. նրանցից շատերը մոլեռանդ մահմեդականներ են», - իր մտքում եզրահանգեց Քյերիմ Ակչամը: Այնուհետև սևեռուն հայացքն ուղղելով առաստաղի մի կետին՝ հանկարծ ձեռքի հեռախոսով ինչ-որ համար հավաքեց ու իր մոտ կանչեց իրեն մտերիմ սպաներից մեկին: Քիչ անց երիտասարդ սպան հայտնվեց նրա մոտ:

-Ի՞նչ կա, Քյերիմ:

-Մի հանձնարարություն պիտի տամ քեզ, բայց այդ մասին ոչ ոք չպիտի իմանա: Խոսքը եղբորս մասին է:

-Սայի՞դ Ակչամի:

-Այո՛: Մեկին էլ հետո վերցրու, հետևեք եղբորս և ծեծեք նրան:

-Ձեր եղբորը...Ես ճիշտ հասկացա,-զարմացավ թուրք սպան, որի անունը Շուքուր էր:

-Այո՛, ծեծեք, բայց չսպանեք: Նրան պետք է լավ դաս տալ:

-Ինչպես կասես, ես անմիջապես կզբաղվեմ այդ գործով:

-Երբ հանձնարարությունը կատարեք, ինձ անմիջապես տեղեկացրու:

Շուքուրի հեռանալուց հետո Քյերիմը նորից լարված նստած մնաց տեղում: Նա մտածեց, որ եղբոր պատճառով ամեն օր աշխատանքի վայր էր մտնում կասկածելի հայացքների ուղեկցության ներքո:

Ստամբուլը Գրիգոր Ակչամի համար երջանկության քաղաք էր: Լինելով աշխարհի գեղեցիկ վայրերից մեկը, այն նաև աղմկոտ էր, մարդաշատ, անտեղի իրարանցման ենթարկվող: Սակայն ինքը հնարավորություն ուներ ցանկացած պահի շնչել ծովերից եկող թարմ օդը, վայելել ավերախության աղմուկը, տեսնել ճչացող ճերմակ ձայերին, հետևել նավերի ընթացքին:

Նա երազում էր այն ժամանակների մասին, երբ Թուրքիան բռնապետական երկրից կդառնա ժողովրդավարական երկիր, ուր կողք կողքի խաղաղ կապրեն ազգային փոքրամասնությունները, ուր ամեն օր ազգամիջյան բախումներից չեն զոհվի մարդիկ, չի թափվի արյուն: Շատ կուզենար, որ այն դասվեր ամենաքաղաքակիրթ երկրների շարքը, ուր սիրով ու բերկրանքով կապրեն իր զավակներն ու թոռները:

Ուշ երեկոյան Գրիգորը հերթական փորձից հետո բաժանվելով իր նվազախմբի տղաներից, մեքենայով վերադարձավ տուն: Սակայն նա նոր էր անջատել մեքենայի շարժիչը և դուրս եկել մեքենայից, որպեսզի բացեր դարպասը, երբ չգիտես որտեղից առանց համարանիշերի մի ավտոմեքենա ուժեղ թափով արգելակեց իրենից շատ մոտ ու այնտեղից դուրս եկան դիմակներ հագած երկու տղամարդիկ և հարձակվեցին իր վրա: Իզուր էր Գրիգորը հարցնում, թե ովքեր են նրանք, ինչ պահանջներ ունեն և ով է նրանց պատվիրատուն, միևնույն է, նրանք ոչինչ չպատասխանեցին: Փայտե ծանր մահակներով այնքան ծեծեցին, որ վերջինս արյունվա փռվեց ասֆալտին: Մոտիկ հարևաններից Չինգիզը, որ և տան դիմաց կատուների համար նախատեսված ամանների մեջ կեր էր լցնում, մի պահ շփոթվեց մարտական ֆիլմից դաժան դրվագ հիշեցնող այդ տեսարանից, բայց հետո անմիջապես ոստիկանություն զանգեց: Այնուհետև տեղի ունեցածի մասին տեղեկացրեց երգչի ծնողներին, որոնք էլ մի կերպ իրենց որդուն ներս տարան: Գրիգորի հոնքը հարվածից պատռվել էր, և վերնաշապիկը կիսով չափ արյունոտվել էր: Որդուն պառկեցնելով բազմոցին՝ փորձեցին մինչև շտապ օգնության ժամանելը, որևէ ձևով արյունը դադարեցնել:

- Ո՞վ կարող էր քեզ այս օրը հասցնել,- մղկտում էր մայրը՝ լացակումած աչքերով: -Մարմնիդ ո՞ր մասն է ավելի շատ ցավում:

-Կողերս, չեմ կարողանում շարժվել,- հազիվ շշնջաց Գրիգորը, որը ցավից դժվարությամբ էր շնչում:

Հայրը՝ Ահմեդը, որ կիսով չափ կանգնած էր մնացել դռան շեմին, իսկույն մտածեց, որ կրտսեր որդու հետ կատարվածն ամենայն հավանականությամբ ավագ որդու սարքածն էր: Եվ չսխալվեց: Նրա բջջային հեռախոսին զանգ եկավ: Քյերիմն էր:

-Տղադ հո՞ չի սատկել,- հեռվից լսվեց նրա ծայրը:

-Չե՞ս ամաչում քո խոսքերից: Ամո՞թ քեզ: Ալլահից վախեցիր:

-Թող նա վախենա ալլահից: Ես վախենալու ոչինչ չունեմ:

Հոր ձեռքերը զայրույթից դողացին: Նրա ձեռքից ընկավ հեռախոսը, իսկ ինքն իրեն հազիվ զցեց դռան անկյունում ընկած բազկաթռռին՝ շշնջալով. «Ձեյնա՛ք, սրտի կաթիլներից տուր»:

-Ախր քեզ հետ ի՞նչ պատահեց, - կինն արագ գնաց դեղի ետևից:

Այդ ընթացքում էլ տան դռան զանգը հնչեց: Ոստիկանությունից էին: Տան աշխատակիցը՝ Շաֆակը, նրանց ներս հրավիրեց: Գրիգորը ցավից համրացած՝ աղոտ հայացքով նայեց ոստիկաններին, ովքեր իսկույն ևեթ ճանաչեցին նրան:

-Կարո՞ղ եք խոսել,- հարցրեց նրանցից ավելի ավագը:

-Ի՞նչ ասեմ, ես այդ ավագակներին չեմ ճանաչում: Նրանց մեքենան համարներ չունեի, իսկ նրանք սև դիմակներով էին:

-Ոչ ոքի վրա չե՞ք կասկածում: Ո՞ւմ հետ եք վերջին անգամ վիճել, ի՞նչ խնդիրներ ունեք,- շարունակեց հարցաքննել ոստիկանը:

-Ես խնդիրներ չունեմ:

-Բայց պիտի պարզենք, թե ինչու էին հարձակվել ձեզ վրա: Ուրեմն, ինչ-որ մեկն ատամ ունի ձեր դեմ: Մենք պետք է գտնենք պատվիրատուին:

-Եթե գտնեք, շնորհակալ կլինեմ,- Գրիգորը նայեց հորը, որի աչքերն իրեն մատնում էին: Նա էլ հասկացավ, որ իր ոստիկան եղբոր սարքած գործն էր:

Ժամանեցին նաև շտապօգնության բժիշկն ու բուժքույրը: Հետո պատգարակ բերելով՝ ոստիկաններին խնդրեցին օգնել երգչին տեղափոխելու իրենց մեքենան:

-Նրա հետ ոչ ոք չի՞ գալիս,- հարցրեց բժիշկը:

-Ո՛չ, բժիշկ: Հայրս իրեն լավ չի զգում, ավելի լավ կլինի մայրս մնա տանը: Ինձ կզննեք, հետո ես տաքսիով մի կերպ տուն կվերադառնամ,- պատասխանեց Սայիդը:

Բարեբախտաբար, հիվանդանոցում պարզվեց, որ նա լուրջ վնասվածքներ չունեի: Անկասկած, ուժեղ հարվածներից ցավում էր ողջ մարմինը, բայց ներքին արյունահոսություն չկար: Միայն կոտրվել էին աջ կողերից երկուսը: Այդ գիշեր նա մնաց հիվանդանոցում, իսկ մյուս օրը կեսօրին տաքսի պատվիրեց ու տուն վերադարձավ:

Գրիգորի ծնողները նրանից ոչ մի բան չէին հեռանում: Հայրը սրտի խորքում իրեն մեղավոր էր զգում, որ որդուն խոստովանել էր ճշմարտությունը: Այլևս ոչինչ ուղղել հնարավոր չէր:

Այդ օրերին Գրիգորին այցելեցին նվագախմբի տղաներն ու պրոոդյուսերը՝ Ռուստամը: Նրանք չափազանց անհանգստացած էին, քանի որ ստիպված էին հետաձգել Անկարայում կայանելիք համերգն անորոշ ժամանակով:

-Կարծում եմ՝ քո վրա հարձակումը երկրպագուների հետ կապ չունի,- Ռուստամը հարցական հայացքով նայեց երգչին:

-Այսքան ժամանակ նման դեպք հիշո՞ւմ ես:

-Այդ դեպքում ո՞վ կարող էր իր չարությունը նման ձևով արտահայտել: Գուցե ընկերնե՞րդ, որ երես են թեքել քեզնից: Խոսքս Արիֆի ու Սուլեյմանի մասին է:

-Երևի՞ ոչ: Ո՞րն է նրանց նպատակը: Ինչո՞ւ պիտի վրեժխնդիր լինեն ինձնից:

Ռուստամին տարօրինակ թվաց Գրիգորի պահվածքը:

-Դու պաշտպանո՞ւմ ես նրանց: Թե՞ ուրիշ կասկածյալներ կան:

-Ամենևին: Ես զուր մեղքեր չեմ ուզում փաթաթել նրանց վզին, ովքեր կապ չունեն այս ամենի հետ:

-Զարմանալի ես, Գրիգոր: Այնպես ես խոսում, կարծես գիտես իսկական մեղավորներին:

-Զգիտեմ, -այս անգամ չոր հնչեց Գրիգորի պատասխանը: Նա չուզեց բարձրաձայնել, որ պատվիրատուն իր եղբայրն է:- Գուցե խոսենք մեր ծրագրերի՞ց: Ոստիկանները եթե հայտնաբերեն նրանց, առաջինը ես քեզ կտեղեկացնեմ այդ մասին,- թեև նա զգաց, որ արդարացի չէր վարվում իրեն մտերիմ դարձած մի մարդու հետ, որն իրականում խիստ անհանգստացած էր իր համար:

Մայրը նրանց թունդ թեյ մատուցեց:

Հիվանդ պառկած ժամանակ Գրիգորը հաճախ ժամերով իր ծանր մտորումների գիրկն էր ընկնում: Ցավալին այն էր, որ իր զավակներից ոչ մեկն այդ ընթացքում նրանով չհետաքրքրվեց: Ո՛չ զանգեցին, ո՛չ էլ նրան տեսության եկան: Այնպիսի տպավորություն էր, որ նրանց կյանքում ինքը երբևիցե չէր եղել: Այնինչ բոլոր լրատվամիջոցներն անդրադարձել էին իր հետ կատարված այդ տխուր միջադեպին: Իր համար անհասկանալի էր, թե միանգամից ինչպես երես թեքեցին իրենից: Գրիգորը ցավով մտածեց, որ այդ ամենի մեջ բավականին մեծ էր իր կնոջ՝ Ռահիմեի ազդեցությունը: Անկասկած, նա արգելել էր, որ երեխաները շփվեին իր հետ: Որպես մանկավարժ, այդպիսով նա բացահայտ կերպով ցույց տվեց հայերի հանդեպ ունեցած արհամարհանքը: «Բայց ինչո՞վ են մեղավոր հայերը, որ քրիստոնյա են, թե՞ Թուրքիան միայն թուրքերի հայրենիքն է», - տխուր մտածեց երգիչը:

-Դու շատ մտահոգ ես երևում, գուցե խոսե՞ս ինձ հետ, -հարցրեց հայրը՝ նստելով բազմոցի մի անկյունում:

- Զավակներիս մասին եմ մտածում: Դուք երևի նրանց կարոտել եք ինձնից ոչ պակաս, արձագանքեց Գրիգորը:

-Շա՛տ ենք կարոտել, որդիս,- հառաչանքով պատասխանեց հայրը:-Գիտե՞ս, ինձ այնպես է թվում, որ նրանք երբեք մեզ հետ չեն ապրել:

-Երևի լավ ծնող չեմ եղել նրանց համար:

-Չէ՛, այդպես մի՛ խոսիր, որդի՛ս: Այս նոր տանը նրանցից յուրաքանչյուրն իր առանձնասենյակն ուներ: Նրանց համադասարանցիներից կամ կուրսեցիներից քանի՞սն ունեն այդ պայմանները: Մենք էլ խոնարհաբար ծառայում էինք նրանց:

Գրիգորը զգաց, որ հայրը սաստիկ հուզմունքից քիչ մնաց արտասվեր: Ներս մտավ Շաֆակը՝ հրավիրելով նրանց ընթրիքի: Գրիգորը հոր հետ այլևս ոչինչ չխոսելով՝ կամաց քայլերով գնացին դեպի խոհանոցի կողմը, իսկ արդեն ընթրիքից հետո որոշեցին թեյել բաց պատշգամբում:

Մուրադ Ազիզօղլուն բանտարկել էին Ստամբուլի Մալթեփիի բանտում: Նա գտնվում էր ոչ միայն հարյուր բանտարկյալի հետ նույն խցում, այլև չուներ մահճակալ, որի պատճառով էլ գրող-լրագրողը ստիպված քնում էր բետոնե հատակին: Նա զայրացած էր իր երկրի վերին ատյանների դեմ, որ իր պես առաջադեմ մտավորականների հետ դաժանորեն հաշվեհարդար են տեսնում քաղաքական անաչառ վերաբերմունքի համար: Ավարտելով սկզբնապես Ստամբուլի, այնուհետև Կոլումբիայի համալսարանները, նա ձգտում էր իր գիտելիքներն ի նպաստ դնել հանուն արդարության, մարդու իրավունքների պաշտպանության: Նա չէր ուզում, որ ուրիշ ազգերի աչքում թուրքը կրեր բռնակալ կամ մարդասպան պիտակը: Իսկ քանի որ ներկայիս Թուրքիայի իշխանությունները շարունակում են ժխտել Հայոց Ցեղասպանությունը, իր երկրի ներսում ոտնահարելով ուրիշ ազգերի իրավունքները, թուրք ազգն իր ուսերին կտանի մեղքերի ծանր բեռը:

Նա աշխատել էր «Միլլիեթ», «Բիրգուն», «Ակչամ» և մի շարք այլ թերթերում: Վերջին շրջանում թուրքական մամուլում հանդես էր գալիս որպես ազատ լրագրող՝ ինքնուրույն որոշելով, թե ո՞ր հոդվածը, հրապարակախոսությունը կամ հետաքննությունը ո՞ր թերթում տպագրի: Իր քննադատական բնույթի հոդվածներով նա միշտ էլ իշխանությունների նշանառության տակ էր:

Մուրադին արգելված էր տեսակցությունը լրագրողների հետ: Նա իրավունք ուներ տեսակցվել փաստաբանի և իր հարազատների հետ: Այդպես է նաև բոլոր երկրներում: Տվյալ համակարգի, պետության դեմ պայքարող կալանավորի կամ դատապարտյալի հետ շփումը սահմանափակված է:

Մուրադը ծանր մտքերի մեջ էր խորասուզված, երբ օրվա հսկիչը կանչեց նրան տեսակցության: Մուրադը, որն այդ պահին նստած էր բանտարկյալներից մեկի մահճակալի ծայրին, արագ բարձրացավ տեղից՝ հետևելով հսկիչին:

Սպասարահում իրեն տեսակցության էր եկել եղբայրը՝ Ռասուլը: Նա ջերմորեն ողջագուրվեց եղբորը, որը մեկ շաբաթվա ընթացքում նկատելիորեն նիհարել էր:

- Ինչպե՞ս ես, եղբայրս: Այստեղ քեզ հո՞ չեն նեղացնում,- անհանգիստ հարցրեց Ռասուլը:
- Ո՛չ, պարզապես պայմաններն են անտանելի: Բանտախցում օդ չկա շնչելու:
- Բանտապետին չե՞ս դիմել, որ քեզ առանձնացնեն ուրիշներից:
- Բանտապետի մոտ եղա և իմ պահանջը ներկայացրի: Գիտե՞ս ինչ էր ասել ինձ,- դառն քնժծաղեց՝ նայելով եղբորը:
- Նա չգիտե՞ր, որ գրող և լրագրող ես:
- Իհարկե, գիտեր: Բայց ասել էր .«Ով էլ լինես դրսում, ինձ համար դու այստեղ գտնվող հանցագործներից մեկն ես»:
- Ռասուլը մի անթարթ շշմեց եղբոր խոսքերից: Նա հոգու խորքում չափազանց խղճաց նրան:
- Ինչո՞վ կարող եմ քեզ օգնել, Մուրադ: Ասա՛, ի՞նչ անեմ:
- Է՛հ, դու ինչ կարողացել, արդեն արել ես: Հուսով եմ, որ քո ընտրած փաստաբանն իմ շահերը կարգին կպաշտպանի:
- Նա մեր քաղաքի հայտնի փաստաբաններից է: Խոստացել է ամեն ինչ անել քո շուտափույթ ազատման համար: Ախր ինքդ էլ խելացի մարդ ես, ինձնից էլ շատ լավ ես հասկանում, որ միշտ կրակի հետ ես խաղում, որ քո հրատարակած գրքով կյանքդ վտանգի տակ ես դնում: Ի՞նչ ասեմ...
- Մուրադը տարակուսանքով նայեց եղբորը:
- Վատն այն է, որ ինձ նման մտավորականների թիվը քիչ է: Մենք պետք է շատանանք, որ հասարակ ժողովրդին էլ կարողանանք մեր կողմը քաշել, հասկացնել, որ թուրքերից բացի մեր երկրում ուրիշ ազգություններ կան, որոնք ճնշված են:
- Կարծում ես՝ աշխատանքդ գնահատվե՞ց,- Ռասուլը հարցական նայեց եղբորը:
- Ո՞վ պետք է գնահատի: Իմ գրքում վավերագրական նյութեր էի հավաքել, փաստեր անցյալի Օսմանյան պետության սարսափելի արարքների մասին: Ես այն թուրքերեն եմ հրատարակել, որ մեր ժողովուրդը կարդա, թե չէ հայերի մոտ արխիվներում հարյուր հազարավոր փաստեր կան:
- Եղբայրը տեղի տվեց: Նա համամիտ էր Մուրադի հետ: Հասկանում էր, որ ներկայիս իշխանություններն ամեն բան անում են հայերի հանդեպ ատելությունը խորացնելու համար:
- Դու խիզախ ես, դիմացի՛ր, մինչև ազատության մեջ կհայտնվես:
- Իհարկե, դուրս կգամ այստեղից: Ժամանակի խնդիր է: Ես դեռ շատ անելիքներ ունեմ: Չես պատկերացնում, թե ինձ համար ինչ է նշանակում չգրելը, համակարգչից չօգտվելը...Բանտում գտնվելն իմ կյանքի լավագույն օրերն են խլում, ու ես պարապուրդի մեջ եմ հայտնվել: Եթե առանձին խցում գտնվեի, գոնե հուշեր կգրեի, մի բան կանեի...
- Հետո նա եղբորից հարցրեց իր ծանոթներից, ընկերներից, թե ովքեր են իրենով հետաքրքրվել կամ զանգել և ինչ են պատրաստվում անել:
- Հա՛, քիչ մնաց մոռանալի: Երգիչ Սայիդ Ակչամն էր զանգել ինձ, քեզանից էր հարցնում:

-Նա կարգին մտավորական է, ըմբոստ բնավորությամբ և անվախ է: Հո իմ պատճառով նրա՞ն էլ չեն հետապնդել ինձ հետ Հայաստան մեկնելու համար,-անհանգիստ հարցրեց Մուրադը:

-Չեմ կարող ասել: Միայն գիտեմ լրատվամիջոցներից, որ նրա վրա անժամոթ մարդիկ դիմակներով հարձակվել են ու ծեծել: Հիմա նա հիվանդ պառկած է տանը:

-Հեչ լավ լուր չհաղորդեցիր: Գուցե այդ դեպքն անմիջապես ինձ հետ կա՞պ ունի,-մտահոգվեց Մուրադը:

-Դժվար է միանշանակ որևէ բան մտածել: Ոստիկանները դեռ որոնում են այդ հանցագործներին: Հասկանալի է, որ ինչ -որ մեկն էր պատվիրել...Հա՛, նաև հաղորդեմ, որ Սայիդը ծնողներից իմացել էր, որ արմատներով հայ է: Այսինքն՝ նրանք իրականում կրոնափոխ հայեր են, որոնց սերունդներն իսլամ են ընդունել: Սակայն Սայիդը վերջերս է այդ մասին իմացել:

-Դա արդեն շատ հետաքրքիր է,- զարմացավ Մուրադը՝ հանկարծ հիշելով, որ Երևանում եղած ժամանակ, երկրորդ օրը Խոր Վիրապից վերադառնալիս Սայիդը բավականին մռայլ էր, անհանգիստ, հուզված: Իր հետ անգամ չկիսվեց, միայն ասաց, որ սաստիկ ազդված էր ստացած տպավորություններից: Մի՞թե այն ժամանակ նա գիտեր իր ծագման մասին:

-Հը՛...Ի՞նչ ես մտածում: Ինչո՞ւ լռեցիր:

-Սայիդը ե՞րբ է իմացել իր ինքնության մասին:

-Ճամփորդությունից հետո, երբ վերադարձել էիք Ստամբուլ: Ի դեպ, նա հիմա փոխել է իր անձնագիրը և անունը:

-Մաշալլա՛...Նա իմ աչքում ավելի շատ բարձրացավ: Դա նրա կողմից արված համարձակ քայլ է: Այնպես կուզենայի սրտանց շնորհավորել նրան այդ առթիվ,- Մուրադը պայծառ հայացքն ուղղեց եղբորը:

-Բայց նա 40 տարի շարունակ որպես մահմեդական է ապրել, ստեղծագործել: Հիմա ո՞նց կլինի...Ես չէի կարող փոխել իմ անունը, կրոնը...

-Մի՛ մոռացիր, որ Սայիդի նախնիները բռնությամբ են մահմեդականներ դարձել: Հասկանո՞ւմ ես, այդ ժողովրդին բռնի ուժով ձուլել են մեզ: Ահա որն է ողբերգությունը...Չի բացառվում, որ հենց այդ փաստը բարձրաձայնելու համար էլ նրան ծեծել են:

Ռասուլը մի պահ լռեց: Հետո փոխելով զրույցի թեման՝ ասաց.

-Ես քո փաստաբանի հետ նորից կխոսեմ: Գուցե նրան հաջողվի քեզ ուրիշ բանտ տեղափոխել:

-Անպայման թող փորձի միջնորդել...Շնորհակալ կլինեմ:

Հսկիչը մոտեցավ՝ ազդարարելով, որ տեսակցությունն ավարտված է:

Յուրաքանչյուր մարդու համար գոյություն ունի հարազատ անկյուն, որի հետ ամուր կապված է լինում իր կյանքի ողջ ընթացքում և սրբությամբ է պահպանում այն: Այդպիսի հարազատ ու ցանկալի անկյուն էր Գրիգորի համար Ստամբուլը, որտեղ նա ծնվել է, հաճախել դպրոց, ստացել բարձրագույն կրթություն, ընտանիք կազմել: Ինչ խոսք, որ մարդուն հարազատ վայրերի հետ կապող օղակը հանդիսանում է հայրենի օջախը: Նա ուրախ էր, որ իր կողքին էին ապրում ծնողները, ընկերները, ծանոթները, երկրպագուները:

Հաճախ համերգային շրջագայությունների պատճառով լինելով տարբեր երկրներում և այնտեղ անսպասելիորեն հանդիպելով իր համաերկրացիներին, անկեղծորեն ուրախանում էր՝ նրանց հարցեր ուղղելով. «Ի՞նչ կա մեր քաղաքում», «Ի՞նչ նորություններ կան» և այլն: Ստամբուլն ասես միացնում էր մարդկանց, տալիս էր նրանց հավատ, ուժ, ուրախություն, ինչպես որ Բոսֆորի նեղուցն էր միացնում իրար Սև ծովն ու Մարմարա ծովը:

Գրիգորը հիշեց, որ երբեմն երեկոյան ժամերին քաղաքում պտտվելիս, արվեստագետի իր հայացքն իրեն ստիպում է հավատալ, որ քաղաքի տները բարի հսկաներ են, սովորական փողոցների նստարանները՝ գահեր: Բավական է ինքը փորձեր շատ սովորական իրերին սրտի աչքով դիտել, դրանք իսկույն ևեթ վերափոխվում էին՝ դառնալով հրաշալի և անսովոր պատկերներ:

Երգչին հաճելի խոհերից պոկեց մայրը:

-Սայիդ, նախաճաշը պատրաստ է: Կգա՞ս խոհանոց, թե՞ Շաֆակին ասեմ, որ այն այստեղ բերի,- ներս մտնելով որդու առանձնասենյակը՝ հարցրեց Ջեյնաթ խանումը:

-Ես ինքս կգամ, մայրիկ,- տեղից դժվարությամբ շարժվելով՝ պատասխանեց Գրիգորը:

Նա սկզբում նստեց, հետո կանգնեց, հենվելով հենակին՝ կամաց քայլեց լողասենյակի կողմը: Սակայն լվացվելիս, երբ նա նայեց հայելու մեջ, կարծես ուրիշ մարդու տեսավ: Ջգաց, որ ինքն այլևս առաջվանը չէ: Փոխվել է հայացքը, աչքերի արտահայտությունը... Նա փորձեց ճանաչել ինքն իրեն: Ո՞վ էր նա: Ահավասիկ, այժմ ինքը Գրիգորն էր, բայց դեռ ծնողները շարունակում են իրեն Սայիդ անվանել: Այդ դեպքում ինչո՞ւ է փոխել անունը, ինչո՞ւ է ուզում վերադառնալ իր ինքնությանը, երբ առաջին քայլերից հետո աննշան փոփոխություն չի գրանցում հենց իր հայրական օջախում:

Լվացվելուց հետո նա այս անգամ վճռական տրամադրությամբ մտնելով խոհանոց՝ խորունկ հայացք ձգեց ծնողների վրա: Հայրը զգալով նրա հայացքի մեջ ծվարած երկվությունը, հարցրեց.

-Ինչ-որ բան այն չէ՞, Սայիդ:

-Ոչ թե Սայիդ, այլ՝ Գրիգոր: Դուք գիտեք, որ իմ անունը փոխել եմ: Հետևաբար ուզում եմ ինձ այդ անունով կոչել: Գուցե մի տեսակ անսովոր կինչի այն, բայց եթե ինձ այդպես անվանեք, աստիճանաբար կսովորեք:

-Դու իրավացի ես, որդիս: Եթե մենք խոստովանել ենք, որ դու հայկական արմատներ ունես, ուստի պետք է քո ցանկությունների հետ հաշվի նստենք:

-Ես ձեզնից շատ բան չեմ պահանջում,- ասաց Գրիգորը:

Հայրը մեղմ ժպտալով՝ իր համար թեյ լցրեց: Այնուհետև ողջ նախաճաշի ընթացքում լուռ մնացին: Միայն նախաճաշի ավարտից հետո, երբ տեղափոխվեցին ճաշասենյակ, Գրիգորը ծնողներին խնդրեց մի քիչ պատմել իրենց նախնիներից լսած պատմություններից:

-Ես սովորաբար շատ ժամանակ չեմ ունեցել ձեզ հետ երկար զրուցելու հասկանալի պատճառներով: Իսկ հիմա այդ ժամանակը նույնիսկ չափազանց շատ է:

Ամուսիններով իրար նայեցին:

-Մայրիկ, գուցե քեզնի՞ց սկսենք: Հայրիկն այն ժամանակ ասաց ինձ, որ դուք Դիարբեքիրից էիք:

-Այո՛: Մեծ հայրս պատմում էր, որ իր պապին փրկել է գյուղի աղաներից մեկը:

-Ո՞ր գյուղի:

-Փասուրի: Նրան թուրքերենով Ազիզ էին անվանում, սակայն հայկական անունը Վահան էր: Այդպես փրկվել էր նաև մեծ տատս: Գյուղապետը թուրքացրել էր նրան: Իհարկե, ասեմ, որ թուրքերի մի մասն այդ լավությունն անվարձահատույց չի արել: Նրանք օգնել են, որպեսզի տիրանան հայերի ունեցվածքին: Իսկ մեծ պապիս եղբայրներին նրանք խաբել էին, և իբրև օգնություն ձեռք մեկնելու համար տարել են ու ճանապարհին կոտորել: Մերոնք հետո տեղափոխվել են Ստամբուլ: Նրանք ստիպված էին դառնալ մահմեդականներ, որպեսզի ջարդերից խուսափեն:

Մի պահ ծանր լռություն տիրեց: Այժմ Գրիգորը մտածում էր այն մասին, թե ովքեր են հիմա ապրում Դիարբեքիրում:

-Մայրիկ, բայց այնտեղ հիմնականում քրդեր են բնակվում:

-Այո՛: 19-րդ դարի վերջին Դիարբեքիրում ապրում էր 10 հազար հայ, քաղաքում գործել են երկու՝ հնգախորան Սուրբ Սարգիս և յոթնախորան Սուրբ Կիրակոս եկեղեցիները: Սակայն կանադահայ դաշնակահար, ինժեներ-շինարար Ռաֆֆի Պետրոսյանի և նրա համախոհների ջանքերով վերանորոգվեց Սուրբ Կիրակոս եկեղեցին: Այնտեղ պատարագին ներկայանում են իսլամացած հայեր: Վերջերս իմացա, որ քրդերի և թուրքերի բախումներից եկեղեցին վնասվել է: Իսկ առհասարակ ասեմ, որ հայերի զգալի մասը զոհվել է 1895 թվականի համիդյան ջարդերի ընթացքում: Հինգ հազար հայ բնաջնջվել է 1915թ. մեծ Եղեռնի ժամանակ: Այսօր Դիարբեքիրն ունի մոտավորապես 845.000 բնակչություն, որի գերակշռող մասը քրդեր են: Մոտ 100 տարվա մեջ հայերը ձուլման են ենթարկվել, ինչի հետևանքով համարյա թե արդեն քրդացել են:

Գրիգորը դարձյալ մտածմունքի մեջ ընկավ: Նա դառնությամբ մտածեց, որ այդ նույն քրդերի մի մասի նախնիները հայեր էին, ովքեր այսօր կռվում են նույն թուրքերի դեմ ու դեռ այդ արյունահեղության վերջը չի երևում, այն էլ 21-րդ դարում: Իրականում թուրքերը քրդերի դեմ են ցեղասպանություն իրականացնում, և աշխարհի գերտերություններն աչքերը փակել են այնպես, ինչպես անցյալ դարասկզբին էին անում:

-Այսօր Ղիարբեքիրում ընդհանրապես հայեր չկա՞ն,-անհանգիստ հարցրեց Գրիգորը:

-Ընդամենը 40-150 հայ կա: Նրանց մեծ մասը ինքնությամբ մահմեդական են, բայց իրենց ներկայացնում են որպես հայեր, այսինքն՝ տեր են կանգնում նաև իրենց հայկական ինքնությանը,- լրացրեց հայրը:

-Նրանց բոլորի կյանքը վտանգված է, քանի որ թեժ կռիվները շարունակվում են թուրքերի և քրդերի միջև: Հավաստի լուրերից ինձ հայտնի է, որ թուրքերը սառնասրտորեն են հաշվեհարդար տեսնում տեղի բնակչության հետ: Թուրքերից շատերը համոզված են, որ կռվում են հենց հայերի դեմ, թեև դա այնքան էլ իրականությանը չի համապատասխանում: Այդպիսով, կրկին մատնացույց է արվում նրանց դարավոր ատելությունն ընդդեմ քրիստոնյաների,- մռայլ տոնով արտահայտվեց Գրիգորը:

Դռան զանգը հնչեց: Նրանց զրույցը կիսատ մնաց: Հարևաններն էին՝ Չինգիզը և Նունուֆարը: Եկել էին հիվանդի առողջության մասին լուր ստանալու:

-Ոստիկաններն այդպես էլ չգտա՞ն հանցագործներին,- բազմոցին տեղավորվելով՝ հարցրեց տարիքն առած Չինգիզը, ով առաջին օգնությունն էր ցույց տվել Գրիգորին:

-Դեռ՝ ո՛չ,- պատասխանեց Ահմեդը՝ թաքցնելով հարևաններից ճշմարտությունը:

-Մի՛ մտածեք, անպայման կգտնեն: Սայիդը փոքր մարդ չէ, բոլորը նրան սիրում ու հարգում են,- ի հավելումն ասաց Նունուֆարը:

Հնչեց Գրիգորի հեռախոսի զանգը: Նա բարձրացավ տեղից՝ հենակներով ուղղվելով իր սենյակի կողմը: Նա պատասխանելով հեռախոսազանգին՝ փռվեց բազմոցին ու նայեց առատադին: Երգիչը շարունակում էր գտնել իր ուղեղում ծագած բազմաբնույթ հարցերի պատասխանները: Մոր պատմածներն իր նախնիների մասին սաստիկ հուզել էին իրեն: Այն դաժան փաստը, որ հայերին հավասարապես թալանել ու կոտորել են թե՛ քրդերը, թե՛ թուրքերը, իրեն մեծ ցավ էր պատճառում: Իհարկե, այդ մասին գիտեր, բայց նորից զայրույթ ապրեց: Իրականում ասիմիլյացիայի է ենթարկվել մի ողջ ժողովուրդ, որն իր սովորություններով, քաղաքակրթությամբ բարձր էր կանգնած եղել թուրքերից: Չէ՞ որ քրիստոնյաներն աշխարհի ամենահին ժողովուրդներից են: «Ինչպիսի՞ն էին իմ նախնիների նախնիները: Ըստ գենետիկական հետազոտությունների, շատ հոգեբանական որակներ անցնում են ժառանգաբար,- մտածեց նա, -անգամ նախնիների տաղանդը, շատ դեպքերում՝ նաև ճակատագիրը, որոնք պատասխան են տալիս իրենց ծնողների, պապերի, նախապապերի մեղքերի համար: Եղե՞նից հետո չորս սերունդ է փոխվել: Ո՞վ կարող է տալ իմ հարցերի պատասխանները: Հայտնի է, որ հենց նախապապերի ու նախատատերի գեների միջոցով մեր ճակատագրում արտահայտվում է կապը սովորությունների հետ: Մեզ են փոխանցվում նրանց կամքը, հաղթելու ցանկությունը: Ո՞վ եմ ես: Ի՞նչ պետք է անեմ՝ վերականգնելու կորսվածը...»:

Կեսօրին՝ ճաշից հետո նա կրկին զրուցեց ծնողների հետ իրեն հուզող թեմայի շուրջ:

-Մայրի՛կ, դու չգիտե՞ս, թե ո՞վքեր էին քո նախապապերն ու նախատատերը,- Գրիգորը դիմեց մորը:- Մեծ հայրդ՝ Վահանը, քանի՞ տարեկան էր, երբ հրաշքով փրկվեց:

-Տասը տարեկան էր:

-Իսկ ո՞վքեր էին նրա ծնողները, տատն ու պապը:

-Հայրը կարծես ֆերմա ուներ, ինքն էլ շնորհքով մարդ էր, լավ երգում էր, հեքիաթներ էր հորինում, բավականին կատակասեր էր: Իմ կարծիքով, դու հենց նրանից ես ժառանգել ձայնդ, այլ՝ ոչ թե մեզնից:

Գրիգորը գոհ ժպտաց: Նա հպարտ էր, որ իրեն էր փոխանցվել նախնիներից ժառանգած շնորհքը:

-Ուրիշ տեղեկություններ չգիտեմ, որդիս:

-Այդ դեպքում ժամանակն է հայրիկին լսելու:

-Գրիգոր, որդիս, ես քեզ արդեն ասել եմ, որ նախապապդ Վանից էր, որ նրա մեծ գերդաստանից միայն ինքն էր փրկվել: Կոտորածների ժամանակ նա յոթ տարեկան էր: Պատմել էր, որ որբանոցում է մեծացել: Հետագայում է Ստամբուլ տեղափոխվել: Հայտնի է, որ ձկնորսների մոտ է մեծացել և զբաղվում էր ձկնորսությամբ:

-Իսկ նրա պապն ո՞վ էր:

-Ցավոք, ոչինչ ինձ հայտնի չէ: Միայն հպարտ եմ, որ իմ արմատները Վանից են, թեկուզ առաջվա Վանից ոչինչ չի մնացել, ո՛չ եկեղեցիներ, ո՛չ հայկական տներ: Ամեն ինչ անհետացել է, մնացել են միայն տխուր, անշուք փողոցներ ու տներ, որտեղ ապրում են քրդերը և իսլամացած հայերը, որոնք թաքցնում են իրենց ինքնությունը: Վանը Դիարբեքիի հետ միասին համարվում է քրդական դիմադրության կենտրոններից մեկը: Սակայն նախկինում վանեցիները հերոսական ժողովուրդ էին: Ինքնուրույն թնդանոթներ, զենքեր էին պատրաստում, կռվում էին թուրքերի դեմ: Հենց 1915-ի ապրիլի 7-ից մինչև մայիսի 6-ը Վան քաղաքի և նահանգի մի շարք գավառների ինքնապաշտպանական մարտերի շնորհիվ փրկվել է ավելի քան 180 հազար հայ:

Գրիգորը դարձյալ մռայլ մտքերի մեջ խորասուզվեց:

-Ո՞վ գիտե, գուցե Վանի պաշտպանությանը ձերոնք էլ են մասնակցել, քաջաբար կռվել ու նահատակվել են,- իր մտքերը բարձրաձայն արտահայտեց նա:

-Հնարավոր է, քանի որ ողջ Վանն էր ոտքի կանգնել: Ինքնապաշտպանական կռիվները շարունակվել էին:

-Միևնույն է, այժմ այդ հերոսական էջերը կարծես կորցրել են իրենց նշանակությունը, քանի որ այնտեղ միայն քրդեր են բնակվում: Այլևս ոչինչ հնարավոր չէ վերականգնել: Քրդերն էլ թուրքերի նման խեղաթյուրում են հիմա պատմությունը, հրատարակելով հոդվածներ, գրքեր, որ Վանի տարածքում իբրև միշտ քրդեր են բնակվել,-վրդովված ասաց Գրիգորը:

-Իրականում Վանի տարածքում, նրա գյուղերում ապրում էին քոչվոր քրդական ցեղեր: Եղեռնից հետո նրանք թուրքերի պես զավթեցին ամեն ինչ, բոլոր տեղանունները դարձրին քրդական, այնինչ այդ գյուղերի 89 տոկոսը հայկական ծագում ունեին: Այնպես որ, եկվորները նրանք են, ոչ թե հայերը, -իր զայրույթով հայրը ոչնչով չզիջեց որդուն:

-Հայրի՛կ, ժամանակի ընթացքում դեպքերը զարգացան նրանց օգտին, և ես չեմ հավատում, թե քրդերը մեր երկրում ինքնավարություն ստանալով կպաշտպանեն հայերին, կընդունեն Հայոց Ցեղասպանության փաստը: Նրանք թուրքերի պես կոտորել են հայերին բոլոր ժամանակներում, սուլթան Համիդից առաջ և հետո...Կարդացել եմ, որ նույն սուլթանը «Համիդիեի» զորախումբ ուներ, որտեղ ամենից շատ ընդգրկված էին քրդերը և ահավոր հանցագործություններ են կատարել: Նրանց հիմնական թիրախը հայերին ոչնչացնելն էր:

-Է՛հ, տղա՛ս,- ձեռքը թափ տվեց Ահմեդը,-երբեք հայոց պատմությունն ուսումնասիրես, ավելի շատ տեղեկություններ կիմանաս: Միայն մի բան կարող եմ ասել, որ հայը միշտ ճնշված պիտի զգա Թուրքիայում, քանի դար էլ անցնի...

- Դեղերս խմելու ժամանակն է: Ես գնամ իմ սենյակ,- տեղից բարձրացավ Գրիգորը:

Որդու հետ ունեցած զրույցից ծնողները նկատելիորեն մռայլվեցին: Նրանք թերևս ափսոսացին, որ Գրիգորի պես ցանկություն չունեցան ուղղելու նախնիների թույլ տված սխալը: Որդին իրենցից ուժեղ գտնվեց: Նրա մեջ ի վերջո արթնացավ նախնիների կանչն ու բողոքը, ցավն ու իրենց արմատներին վերադառնալու անհրաժեշտությունը:

Ստամբուլում բնակչության մեծ մասը կազմում են թուրքերը, սակայն այդտեղ կողք -կողքի ապրում են նաև հույներ, հրեաներ, արաբներ, հայեր, ռուսներ: Մոտակա հաշվարկներով այդ քաղաքում բնակվում են 60-70 հազար հայեր, որոնք հայկական կրթություն են ստանում, խոսում են հայերեն, հաճախում են վարժարաններ, եկեղեցիներ՝ պահպանելով իրենց ինքնությունը:

Միջահասակ, կլոր երեսով մի կին սպասում էր կանգառում, երբ ավտոբուսը մոտեցավ: Այդ երթուղիով առաջին անգամն էր օգտվում: Որոշել էր այցելել մորաքրոջ աղջկան, որին երկու օր առաջ էր պատահամբ հանդիպել Գրանդ շուկայում, որն աշխարհի ամենամեծ շուկայի համբավն ունի: /Այն կառուցվել էր 1453-ին, այն ժամանակ, երբ թուրքերը գրավեցին Կոստանդնուպոլիսը/: Կնոջ բարեկամուհին նոր բնակարան էր տեղափոխվել, որի տեղը չգիտեր: Գուցե պատճառներից մեկն էլ այն էր, որ առհասարակ քիչ էր երթևեկում: Երբ ավտոբուսի դռները բացվեցին, կինն արագ բարձրացավ և տեղավորվեց վարորդի ետևի ազատ նստատեղերից մեկում: Բայց քանի որ նա չգիտեր, թե կոնկրետ որտեղ պիտի իջներ, խնդրանքով դիմեց վարորդին՝ հարցնելով, թե իրեն որտեղ է հարմար իջնելը: Ի պատասխան անձանոթ ուղևորուհուն, վարորդը փոխանակ պատասխանելու, հարցրել էր.

-Առոգանությունդ ճիշտ չէ: Դու հրեա՞ ես, թե՞ հայ:

-Հայ եմ, -փոքր-ինչ շփոթված պատասխանել էր կինը:

Վարորդը սկսեց հայիոյել՝ չքաշվելով մարդկանցից:

-Դու պաշտում ես Քրիստոսի՞ն, որին սատկացրին խաչելով: Ձեր բոլոր հայերին պետք է նրա պես սպանել: Դու գյավուր ես: Դուք բոլորդ դատապարտված եք դժոխքում այրվելու:

Կինը զայրացել էր նրա խոսքերից, փորձել էր հակադրվել ու պաշտպանվել:

-Դու իրավունք չունես ինձ գյավուր անվանելու: Ես քեզ նման այս երկրի քաղաքացի եմ:

-Այս կեղտոտ հային նայիր, ով վիճում է ինձ հետ՝ խոսելով հավասարության մասին: Իմացի՛ր, որ այստեղ թուրքերից բացի մնացած ազգությունները մեր ծառաներն են,- կատաղած վարորդը հանկարծ մեքենան արգելակել էր և շուռ գալով՝ բռնել նրա մազերից ու բռունցքով հարվածել կնոջ դեմքին այնքան, մինչև արյունլվիկ լինելը ու ավտոբուսից դուրս էր շարտել:

Գրիգորը, որն իր մեքենայով անցնում էր այդ փողոցով, հանկարծ մեքենան արգելակեց և դուրս գալով՝ բռնեց կնոջ թևից ու բարձրացրեց: Նա հասցրեց հիշել ավտոբուսի համարը:

-Դուք կարո՞ղ եք քայլել, թե՞,- հարցրեց նա: -Վերցրե՛ք իմ մաքուր թաշկինակը և դրեք ձեր քունքին: Ես ձեզ հիմա հիվանդանոց կտանեմ:

Գրիգորը տեսավ, որ կնոջ հոնքը բացվել էր և արյուն էր հոսում: Նա անծանոթ կնոջն օգնեց՝ տեղավորվելու մեքենայի ետևի նստատեղում ու արագ պոկվեց տեղից: Նայելով մեքենայի դիմապակույն, Գրիգորը նկատեց, որ կինը հավանաբար զայրույթից ու վիրավորանքից դողում էր՝ սրբելով արցունքները:

-Ո՞վ ձեզ դուրս նետեց ավտոբուսից: Դուք կարող էիք վերևից սլացող պատահական մեքենայի անիվների տակ հայտնվել: Լավ էր, որ ես ժամանակին արգելակեցի մեքենա: Վիճե՞լ էիք որևէ մեկի հետ,-հարցրեց Գրիգորը:

-Այո՛, վարորդի: Նա ինձ անպատվեց այն բանի համար, որ ես հայ եմ:

-Որտեղի՞ց իմացավ ձեր հայ լինելու մասին:

-Ինձնից: Ես նրան դիմեցի, թե որտեղ է ինձ հարմար իջնելը, իսկ նա իմ առողջանությունից հասկացավ, որ թուրք չեմ:

-Սրիկա՛, տականք,-իր զայրույթը չկարողացավ զսպել երգիչը:- Ինչպե՞ս կարելի է նման բռնության դիմել: Երևի նա ծայրահեղական ազգայնական էր...

Մինչ շտապօգնության հիվանդանոց հասնելը Գրիգորն այլևս ոչինչ չխոսեց: Նա մտքում կռիվ էր տալիս նույն թուրքերի դեմ. «Եթե մեր ժամանակներում օրը ցերեկով առանց պատճառի թուրքը կարող է հային սպառնալ, վնասել, ծեծել, ապա պատկերացնում եմ, թե ինչպես էր նույն թուրք ժողովուրդը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հաշվեհարդար տեսել հայերի հետ՝ սպանելով, բռնաբարելով, կացնահարելով, այրելով նրանց: Ինչքա՛ն թշնամանք կա նրանց մեջ: Ե՞րբ պետք է ազատվեն հայերի հանդեպ ունեցած ատելությունից: Ասենք, ինչո՞ւ եմ զարմանում, երբ հարազատ եղբայրս է հաշվեհարդար տեսել ինձ հետ՝ վարձելով մարդկանց: Պատճառն այն էր, որ հանդգնել եմ բացահայտել իմ հայ լինելը», -իր ուղեղում բազմաթիվ հարցականներով բեռնված՝ նա հասավ հիվանդանոց՝ անծանոթ հայ կնոջն ուղեկցելով բժշկի մոտ: Կնոջից վերցրեց նրա ամուսնու

հեռախոսահամարը և զանգեց նրան: Գրիգորը չմոռացավ բժշկին փոխանցել նաև ավտոբուսի համարները՝ վարորդին պատասխանատվության ենթարկելու համար:

-Նրանով պետք է անպայման զբաղվի ոստիկանությունը: Հակառակ դեպքում անպատժելիությունը ավելի ողբերգալի հետևանքներ կունենա,- վրդովված տոնով Գրիգորն ասաց բժշկին:

-Նա ձե՞ր բարեկամուհին է,- հարցրեց բժիշկը՝ ճանաչելով երգչին:

-Ո՛չ: Նրան գտել եմ փողոցում ընկած և օգնության եմ հասել,- հետո նայելով ձեռքի ժամացույցին՝ դիմեց անծանոթ կնոջը: -Շուտով ձեր ամուսինը կհասնի: Իսկ ես պետք է գնամ: Վախենում եմ, որ կուշանամ:

-Շնորհակալ եմ, Սայիդ Ակչամ,- շշնջաց կինը,- ես ձեզ միանգամից ճանաչեցի: Աստված Ձեզ ինձ մոտ ուղարկեց:

Գրիգորը բարեհամբույր ժպտալով անծանոթ կնոջը՝ հեռացավ: Նա իսկապես շտապում էր Ստամբուլի համալսարան: Ուզում էր տեսնել որդուն, որի դասերը շուտով կավարտվեին:

Երբ տեղ հասավ, համալսարանի բակում խումբ-խումբ ուսանողներ էին հավաքվել: Տղաներից մեկին խնդրեց կանչել Մուստաֆային: Եվ մինչ անծանոթ տղան հեռացավ, Գրիգորը դուրս գալով մեքենայից, ուշադիր տնտղելով շրջապատը, որդուն դրսում գտավ և հեռվից կանչեց նրան: Որդին, որ շրջապատված էր ընկերներով, լսելով հոր ձայնը՝ շրջվեց: Մի ակնթարթ ուզեց չարձագանքել, բայց հետո, ընկերների զգաստ հայացքների ներքո դանդաղ քայլելով, մոտեցավ հորը և սառնասրտորեն հարցրեց.

-Ինչո՞ւ ես եկել իմ ետևից:

-Ես քո հայրն եմ, իրավունք չունե՞մ քեզնով հետաքրքրվելու:

Մուստաֆան մի պահ լռեց: Նա հորից նեղացած էր այն պատճառով, որ վերադարձել էր իր ինքնությանը՝ ճանաչելով իրեն որպես հայի: Զգալով, թե ինչի մասին էր մտորում որդին, Գրիգորն ասաց.

-Իրականությունից ու ճշմարտությունից փախչել չես կարող:

-Դու չպիտի փոխեիր անունդ, անձնագիրդ, հայրի՛կ, մանավանդ որ բոլորը քեզ ճանաչում են: Իմ ծանոթներն ինձնից հարցնում են, թե ինչու հայրդ այդպես վարվեց, և ես չզիտեմ ինչ պատասխանել:

-Դու ասա՛, որ այդպես էր պետք, որովհետև դա հորս պարտքն էր: Թե՞ դու այնքան ես ատում հայերին, որ ինձ էլ տեսնել չես ուզում:

Մուստաֆան լռեց: Ո՛չ, նա իր հորը չէր ատում, բայց և չէր ողջունում նրա քայլը: Թեև նաև հասկանում էր, որ հայրը ըմբոստ է, որ նա մասնակցում էր հաճախ և՛ հակակառավարական ցույցերին, և՛ պաշտպանում Հայոց Ցեղասպանության փաստը, որը շատերը ժխտում են:

-Դու ոչ մի բանով ինձ մեղադրել չես կարող: Ես քո հայրն եմ՝ հայ եմ, թե թուրք: Ծնողներին չեն ընտրում, նրանց միայն ընդունում են ճակատագրի բերումով: Թե՞ քեզ վատ եմ դաստիարակել կամ ցանկություններիդ չեմ կատարել: Ինչո՞ւ եմ թերացել:

-Ես նման բան չասացի, հայրի՛կ,-Մուստաֆան հոգու խորքում զղջաց, որ հորն այսքան ժամանակ մենակ էր թողել:

-Կարծում եմ՝ լրատվամիջոցներից էլ իմացել ես, որ ինձ վրա ավազակներ են հարձակվել, ու ես հիվանդ պառկած էի տանը: Մի՞թե սիրտդ չլցվեց տագնապով, գեթ մի անգամ զանգեիր կամ այցելեիր: Ես նմա՞ն վերաբերմունքի եմ արժանի:

Մուստաֆան սաստիկ նեղսրտեց հոր խոսքերից: Երբ նրանից հեռու էր գտնվում, ուրիշ կերպ էր մտածում, իսկ հիմա, դեմ-դիմաց կանգնած, գիտակցում էր իր գործած սխալը: Տեսնելով հոր ձակատի վիրակապը, ընդհակառակը, խղճաց նրան և մեղսավոր հայացք ձգեց նրա վրա:

Ընկերները Մուստաֆային կանչեցին: Լսարան մտնելու զանգը հնչել էր:

-Գնա, տղա՛ս, բայց հիշի՛ր իմ խոսքերը: Ետդարձի կամուրջները երբեք չպիտի այրել:

Որդու հեռանալուց հետո նա ուղղվեց դեպի իր մեքենան, միացրեց շարժիչը: Հետո սլացավ հանդիպելու իր նվազախմբի տղաների հետ: Ողջ ձանապարհին, այնուհանդերձ, նա չէր կարող մոռանալ անծանոթ կնոջ հետ տեղի ունեցած դիպվածի մասին:

Վաթսունամյա Ջեյնաբ խանումն իր տարիքի համեմատ թարմ ու առույգ տեսք ուներ: Նրա խոշոր շագանակագույն աչքերից, գանգուր մազերից և դեմքի համաչափ դիմագծերից կարելի էր ենթադրել, որ ջահել ժամանակ բավականին գեղեցիկ ու հմայիչ է եղել: Նա երկու որդի ուներ, որոնք ամուսնացած էին: Ի սկզբանե ինքը ամուսնու հետ ապրում էր կրտսեր որդու՝ այժմ Գրիգորի ընտանիքի հետ: Որդին արտաքնապես նման էր մորը: Ժողովրդի մեջ սովորաբար ասում են, որ եթե որդին արտաքինով նմանվում է մորը, ուրեմն նա երջանիկ բախտ կունենա: Իսկապես, մինչև վերջին դեպքերը, թվում էր, թե նա երջանիկ էր, քանի որ ուներ ընտանիք, զավակներ, սիրած մասնագիտություն: Բայց ամեն ինչ կարծես խարխվեց այն օրից սկսած, երբ որդին իմացավ իր ինքնության մասին: Հարսը՝ Ռահիմեն, առանց բացատրության, երեխաների հետ տեղափոխվեց ծնողների մոտ: Այդ քայլը թերևս Ջեյնաբ խանումի համար ամենածանր հարվածն էր, քանի որ տարիներով ինքն էր նրան օգնել հարսին խնամելու, մեծացնելու իր թոռներին: Հիմա նրանց շատ էր կարոտում: Երբեմն զանգում էր թոռներին՝ ստանալով նրանցից միայն սառը պատասխաններ: Կարծես հաշտության եզրեր գտնելն այլևս անհնարին էր: Համենայն դեպս այդպես էր իրեն թվում: Որդին՝ Գրիգորը, բնականաբար, տառապում էր, բայց չէր արտահայտվում: Բավական էին և նրա հոգեկան անսպասելի ցնցումները. հայ լինելը, մտերիմ ընկերներից բաժանվելը, ընտանիքին միանգամից կորցնելը և ի վերջո ավագ եղբոր՝ Քյերիմի դաժան հարվածն իր եղբորը՝ ուրիշների միջոցով: Իրենց տունն էլ առանց թոռների մի տեսակ ամայացել էր: Ի՞նչ էր իրենց սպասվում ծերության շեմին, դժվար էր կանխագուշակել, միայն թե նոր փորձանքների առաջ չկանգնեին:

Ջեյնաբ խանումը ծանր մտքերից ձերբազատվելու համար որոշեց գնալ մոտիկ հարևանուհու՝ Նունուֆարի մոտ: Կեսօրին խնդրել էր Շաֆակին գաթա թխել որդու համար, որը

քաղցրավենիք շատ էր սիրում: Դրանցից մի քանի կտոր վերցնելով՝ թակեց հարևանուհու դուռը:

Նունուֆարը թախտին ծալապատիկ նստած՝ կրտսեր թռռան համար գուլպա էր գործում:

-Ձեյնա՞բ...հինչ լավ արեցիր, որ եկար: Միասին հաճույքով թեյ կխմենք:

-Ո՞ր եմ տնեցիները...Դու մենա՞կ ես տանը,- հարցրեց Ձեյնաբ խանումը՝ փոքրիկ տոպրակի մեջ գաթան դնելով սեղանին:

-Այո՛: Ամեն մեկն իր գործով դուրս է եկել: Չինգիզին էլ ուղարկեցի շուկա:

- Ես էլ եմ մենակ մնացել,- թախծոտ հայացքով նա նայեց հարևանուհուն:

Նունուֆար խանումը վեր կացավ՝ ինքնատեղով զբաղվելու:

-Արի՛ դուրս գանք պատշգամբ,- դիմեց նա Ձեյնաբին:-Այնտեղ հով է, հետո էլ մաքուր օդ կշնչենք ու կթեյենք:

Ձեյնաբ խանումը հետևեց հարևանուհուն:

-Բայց դու նեղսրտված ես երևում: Հո՞ բան չի պատահել,- անհանգիստ հարցրեց հարևանուհին՝ իր գործին անցնելով:

-Էլ ի՞նչ պիտի պատահեր: Անուսնուս հետ առանց թռռների ենք մնացել: Այնքան տխուր եմ անցնում օրերը...

-Քյերիմի զավակներ՞ն էլ չեն այցելում ձեզ:

-Ո՛չ,-նա Նունուֆարին չուզեց ընտանեկան խնդիրների մասին պատմեր, սակայն շարունակեց իր մտքերը բարձրածայն կիսել մտերիմ հարևանուհու հետ:-Թեև որդիս հիվանդ էր, բայց մենք միասին էինք միշտ: Երեքով հեռուստացույց էինք նայում, զրուցում էինք: Հիմա, փառք Ալլահին, նա աստիճանաբար ոտքի կանգնեց:

-Գուցե պետք չէր, որ Սայիդն իրեն բացահայտեր: Տեսա՞ր, ինչ փորձանքի մեջ ընկավ: Չգիտեմ, ովքեր էին այդ ավազակները, բայց հավանաբար պատճառը նրա հայկական ծագումն էր: Թռռներդ էլ հեռացան ձեզնից: Ո՞րն է այս ամենի խերը:

-Նունուֆար խանում, որդիս այդպես ցանկացավ: Մենք ի՞նչ անեինք:

Հարևանուհին տագնապով լի հայացքը դարձրեց նրան:

-Մենք էլ ծպտյալ հայեր ենք, բայց խոստովանել չենք ուզում, որովհետև վտանգավոր է Թուրքիայում հայ լինելը:

-Բոլորս էլ վախեցած ենք ապրում: Այդպես ապրում էին մեր ծնողները, մեր տատերն ու պապերը: Այդ պատճառով էլ բոլորս մահմեդականներ դարձանք, որովհետև մեր փրկությունն իսլամացումն էր:

-Այո՛, բայց մեր հայկական ինքնությունը գաղտնի իմանալով հանդերձ՝ տարիներով մեր երեխաներին ու շրջապատին գիտակցաբար ստում էինք: Իմացած եղի՛ր, որ իսլամ ընդունելով անգամ մեզ չեն համարում իրական մահմեդականներ: Թուրքիայի իշխանությունները խտրականություն են դնում իսլամացած մարդկանց և մյուս մահմեդականների միջև,- Ձեյնաբ խանումը ծանր հոգոց հանեց:

-Ինչ էլ ասես, մենք մեր ինքնությունը չենք բացահայտի: Քրիստոնեության ընդունումը նոր ջարդերի կհանգեցնի, ինչից շատ ենք վախենում: Քեզ չեն պատմել տատիս պատմությունը: Հիմա կպատմեմ, և դու կհասկանաս, թե որտեղից է գալիս իմ վախը:

-Պատմիր, քանի երկուսով ենք:

-Տատս Ուրֆայից էր:1915-ին նա ընդամենը 15 տարեկան էր: Ջարդերին մի թուրք հարուստ աղա նրան գերի էր վերցրել, քանի որ հրապուրիչ արտաքին ուներ: Նա ուզում էր տատիկիս հետ ամուսնանալ: Ասեմ, որ նա ևս երկու կին ուներ: Երբ տատս համառորեն նրան մերժեց, աղան սպանեց նրա ծնողներին, այնուհետև սպառնաց, որ կսպանի նաև միակ եղբորը, որն իրենից տարիքով փոքր էր: Միայն այդ ժամանակ տատս համաձայնվեց՝ դառնալով նրա կինը: Սակայն նա պայման դրեց աղայի առաջ, որ կպահպանի և՛ եղբորը, և՛ իր հայկական անունը: Այդ դաժան բռնակալը թեկուզ խոստացավ չխախտել պայմանը, բայց ի վերջո սպանեց նրա եղբորը, իսկ տատիկիս միշտ ստորացնում էր, ծաղրում, բռնության ենթարկում: Նույնիսկ նրա մարմնի վրա դանակով խաչ էր փորել: Մի խոսքով, մեծ մորս կյանքը կատարյալ դժոխքի վերածեց: Հետո մանրամասներին ծանոթ չեմ: Հայտնի է, որ ինչ-որ մեկի միջոցով տատիկիս հաջողվեց փախչել:

Այդ սահմըկեցուցիչ պատմությունը լսելով՝ Ջեյնաբ խանումի մարմնով անպատմելի սարսուռ անցավ և նրա վախի զգացումը սաստկացավ:

-Քանի ապրում ենք Թուրքիայում, հայերին միշտ կհետապնդեն,-շարունակեց Նունուֆար խանումը:- Մոռացե՞լ ես, թե ինչպես մի քանի տարի առաջ Ստամբուլի Ֆաթիհ, Սամաթիա և Շիշլի թաղամասերում հայերի և հույների տներին ինչպես էին պարբերաբար կանաչ ու կարմիր պիտակներ փակցվում: Այդ դեպքերի կապակցությամբ ահազանգել էին և հարցը բարձրացրել Թուրքիայի մեջլիսում: Մի՞թե չես հասկանում, որ ոչ մահմեդական բնակչության նկատմամբ սպառնալիքները չեն նվազում: Վա՛յ, թեյը եռաց,- ասաց տանտիրուհին՝ արագ վեր կենալով տեղից:- Հիմա կթեյենք, ու դու քեզ ավելի լավ կզգաս:

Այնինչ Ջեյնաբ խանումի անհանգստությունն էլ ավելի խորացավ: Հարևանուհու պատմություններից հետո նրա մեջ արթնացած տազնապները բազմապատկվեցին: Իսկ դա նշանակում էր, որ ինքը ցմահ կորցրեց հոգեկան անդորրը:

Տանտիրուհին հենց նոր էր լցրել թեյի բաժակները, երբ ներս մտավ նրա ամուսինը՝ Չինգիզը՝ տոպրակները ձեռքին:

-Ի՛նչ լավ ժամանակ եմ եկել,- զվարթ տրամադրությամբ ասաց նա, հետո հարցական հայացքն ուղղեց հարևանուհուն:- Ջեյնաբ խանում, հո՞ հիվանդ չես, դեմքիդ գույն չկա:

-Ո՛չ, երևի անքնությունից է, -շփոթված պատասխանեց վախեցած հարևանուհին:

-Լսե՞լ եք վերջին լուրը: Այսօր քաղաքում կեսօրին ավտոբուսներից մեկի վարորդը մի հայ կնոջ ծեծելուց հետո, մազերից բռնել ու շարտել էր ասֆալտի վրա: Բոլորն այդ մասին են խոսում:

Ջեյնաբ խանումի դեմքը գայրույթից քաթանե գույն ստացավ:

-Պատմեցին նաև, որ այդ կնոջն ինչ-որ երիտասարդ տղամարդ օգնության է հասել ու արյունլվա անծանոթ կնոջն իր մեքենայով հիվանդանոց է տեղափոխել,-շարունակեց Չինգիզը:

-Վա՛յ, ալլա՛հ, մի լավ բան չենք լսում: Ես գնամ,- ասաց Ջեյնաբ խանումը՝ վեր կենալով տեղից:

-Թեյդ խմի՛ր, հետո կգնաս,- նրան դիմեց Նունուֆար խանումը:

-Շնորհակալ եմ: Երևի Ահմեդն էլ եկած կլինի:

Երբ նա տուն մտավ, իսկապես ամուսինն արդեն եկել էր: Նա մզկիթ էր գնացել:

-Ղու վաղո՞ւց ես տանը,- հարցրեց նա ամուսնուն:

-Կես ժամ կլինի: Նունուֆարի մո՞տ էիր:

- Այո՛: Ճնշման դեղս դարակում է՝ ննջասենյակում: Խնդրում եմ բերես:

Ահմեդը շփոթված ուղղվեց դեպի իրենց ննջասենյակ: Նա դեղը վերցրեց, նաև մի բաժակ ջուր բերելով խոհանոցից՝ տվեց կնոջը: Այդ պահին զանգեց ձեռքի հեռախոսը: Քյերիմն էր:

-Ի՞նչ կա: Ինչո՞ւ ես զանգել,- խիստ տոնով հարցրեց հայրը, որի հետ Գրիգորի պատճառով շարունակում էր գժտված մնալ:

-Սիրելի որդուդ քաջագործության մասին չե՞ս լսել:

-Մարդավարի խոսի՛ր, որ հասկանամ:

- Երևում է, որ այսօր Ստամբուլում պտտվող լուրերին չես հետևել,-ասաց Քյերիմը ու թշնամաբար ավելացրեց:-Հայերին ոչ միայն պետք է դուրս շարտել ավտոբուսներից, այլև մեր երկրից:

-Էլի՞ գժվեցիր:

-Գիժը տղադ է, որ փողոցում ընկած արյունլվա անծանոթ կնոջ է օգնության հասել՝ նույնիսկ տանելով նրան հիվանդանոց:

-Ղա ընդամենը մարդկային սովորական արարք է,- ասաց հայրը:

-Իհարկե, բայց նման արարքը դատապարտելի է, երբ հային ես օգնում,-պատասխանեց Քյերիմն՝ անջատելով հեռախոսը:

Երբ Ահմեդը կնոջը պատմեց եղելությունը, վերջինս հանգիստ պատասխանեց.

-Երևի այդ ժամանակ Գրիգորն այդտեղով էր անցնում: Նա հո՞ չգիտեր, թե ով էր այդ կինն ազգությամբ: Միայն մտածել էր օգնություն ցուցաբերել:

-Գուցե փորձե՞ս քեզ հանգիստ պահել: Ես հիմա քեզ համար թան կպատրաստեմ, իսկ դու պառկիր բազմոցին:

Սակայն Ահմեդը հոգու խորքում խիստ զայրացած էր իր ավագ որդու ցինիկ պահվածքի վրա: Նրա ականջներն այրվում էին Քյերիմի խոսքերից.«Հայերին ոչ միայն պետք է դուրս շարտել ավտոբուսներից, այլև մեր երկրից»: Նրա թշնամանքը եղբոր հանդեպ գնալով խորանում էր: Հայրը մտածեց, թե ինչպես Գրիգորին փրկեր վերահաս վտանգից:

Երեկոյան Ստամբուլն անսահման գայթակղիչ է իր բազմերանգ լույսերով, ծովերից եկող հաճելի զովութեամբ, կյանքի կրքոտ եռուզեռով, փողոցներից, ռեստորաններից ու ակումբներից լսվող արևելյան ու եվրոպական երաժշտության տարաբնույթ հնչյուններով: Գրիգորն այդ երեկո մի տեսակ ինքնաբավ զգացողություն ուներ: Ո՞րն էր իրական պատճառը: Չէ՞ որ նա բարեգործական հիմնադրամ չէր ստեղծել, այլ ընդամենը մի կնոջ էր օգնել, և այդ դեպքի առթիվ հեռուստալրագրողներն իր մոտ էին իսկույն վազել: Բայց կար մեկ ուրիշ պատճառ: Ինքը հանդիպել էր որդու հետ, և հավանաբար Մուստաֆան հասկացել էր իր սխալը: Համենայն դեպս որպէս հայր նա այդպէս էր մտածում:

Այդ օրը Գրիգորը, որը թեև ամբողջովին չէր կազդուրվել, հանդիպեց իր նվազախմբի սղանների հետ ու մշակեցին իր առաջիկա ծրագրային երգացանկը: Փորձերից հետո նա շուտ տուն վերադառնալ չէր ուզում: Զանգեց Ռուստամին, ուզեց հանդիպել նրան:

-Գուցե գա՞ս Թաքսիմ հրապարակ: Ես հիմա անցնում եմ Գալաթա կամրջով, շուտով տեղ կհասնեմ: Միասին կմտնենք սրճարան, սուրճ և գարեջուր կըմպենք,- առաջարկեց Ռուստամը:

-Ես ավելի լավ առաջարկ ունեմ՝ Բոսֆորի նեղուցով մի փոքր նավարկենք: Կան նավի վրա սուրճ կխմենք, կան Բոսֆորի ափին,- ասաց Գրիգորը:

-Զգացվում է, որ պայծառ ու ռոմանտիկ տրամադրություն ունես: Եվ դա ինձ դուր է գալիս: Ես շուտով քեզ մոտ կհասնեմ:

Իսկապէս երգիչը շատ էր ցանկանում ձերբազատվել օրեր շարունակ իրեն մտատանջող մտքերից:

Երբ Ռուստամի հետ արդեն նավի մեջ էին, Գրիգորը երազկոտ նայեց ընկերոջը:

-Շնորհակալ եմ, որ ինձ չմերժեցիր,- Գրիգոր Ակչամը թավշյա ժպիտով նայեց իր պրոդյուսերին:

- Կարծում եմ՝ մյուս շաբաթ լրիվ կազդուրված կլինես և ոչինչ քեզ չի խանգարի համերգ տալու Անկարայում,- ասաց Ռուստամը:

-Հուսանք, որ այդպէս էլ կլինի:

Մոտեցավ սպասավորը: Նրանք սուրճ և գարեջուր պատվիրեցին:

-Չէի՞ր ցանկանա իմ փոխարեն սիրածդ կնոջ կողքին լինեիր,- հանկարծ թեմայից շեղվեց Ռուստամը:

-Իհարկէ, բայց սիրած կին չունեմ: Չեմ էլ ունեցել...Անշուշտ, շատ եմ հրապուրվել կանանցով, սակայն սիրե՛լ...Իմ երգերի մեջ էլ սերը որպէս ըմբոստություն է հնչում:

Ռուստամը խորհրդավոր ժպտաց:

-Այ, եթե հայերեն սովորեմ, նաև հայկական երգեր կերգեմ: Անկարայից հետո այդ հարցով կզբաղվեմ: Արա Գյուլերը խոստացել է ինձ համար լավ մանկավարժ գտնել,-ասաց Գրիգորը:

-Ղու այդպէս էլ չասացիր, թե Հայաստանում եղած ժամանակ քեզ ինչ դուր եկավ, ինչը չհավանեցիր,- հետաքրքրությամբ հարցրեց Ռուստամը:

Մատուցողը բերեց սուրճ և զարեջուր:

-Ինքդ էլ հասկանում ես, որ երկու օրը շատ քիչ է որևէ երկրի մասին կարծիք կազմելու համար: Բայց որտեղ էլ որ եղել եմ՝ եկեղեցիներում, թանգարաններում, ամեն ինչ գերազանց էր: Հայերն առհասարակ ջերմ մարդիկ են և հյուրասեր: Պարզեցի, որ ամբողջ աշխարհում 10 միլիոն հայերից միայն երկու միլիոնն է ապրում իր հայրենիքում: Միայն թե այն թանկ երկիր է, քան Թուրքիան:

- Տեղյա՞կ ես «Ռադիկալ» օրաթերթի վերջին տեղեկությունների մասին:

-Ի՞նչ տեղեկությունների մասին է խոսքը:

-Թուրքիայի քաղաքական, տնտեսական և հասարակական հետազոտությունների հիմնադրամի կողմից իրականացված հասարակական կարծիքի հարցման արդյունքում պարզ է դարձել, որ Թուրքիայի բնակչության 73,9 տոկոսը բացասաբար է տրամադրված հայերի նկատմամբ: Թուրքական պարբերականի տեղեկացմամբ՝ հարցումը, որին մասնակցել է երեք հազարից ավելի մարդ, անցկացվել է Թուրքիայի տասներկու նահանգներում:

Այդ մասին իմանալով՝ Գրիգորի բարձր տրամադրությունից գրեթե ոչինչ չմնաց:

-Մինչդեռ եվրոպացիների հանդեպ համակրանք է հայտնել հարցվածների 36 տոկոսը, բացասական վերաբերմունք՝ 35 տոկոսը: Հայերի, հրեաների և հույների հանդեպ վերաբերմունքն ամենաբացասականն է եղել:

Գրիգորը կանչեց մատուցողին նորից սուրճ բերելու համար և հայացքը ձգեց դեպի Մարմարայի կղզիները, որտեղ Թուրքիայի հարուստ հայերն էին ապրում: Այդ ընթացքում նա զանգ ստացավ: Իր նվազախմբի տղաներից էր՝ Դիլերը: Գրիգորը պատասխանելով զանգին՝ դիմեց Ռուստամին.

-Վաղը միասին կմեկնենք Վանի նահանգ: Կարծում եմ, ինձ չես մերժի:

-Ի՞նչ կա: Ո՞վ էր զանգողը:

-Դիլերը: Երևի տեղյակ չես, որ նրա մայրն է մահացել: Քանի օր է, սակայն նրան չի հաջողվում մոր մարմինը հողին հանձնել: Չեն թողնում: Ընդհարումներ են քուրդ զինյալների և թուրք ոստիկանների միջև: Նա մտածում է, որ իմ միջնորդությունը որպես երգչի, կօգնի այդ հարցը լուծել:

Ռուստամը վառեց ծխախոտը: Նրան նույնպես հուզեց իրենց նվազախմբի կիթառահարի մոր հետ կապված միջադեպը:

-Պետք է փորձել: Քո անձնագիրը եթե քեզ մոտ է, տո՛ւր ինձ: Ես վաղը կվերցնեմ տոմսերը և կսպասեմ քեզ օդանավակայանում: Ստամբուլից Վան օդային ճանապարհով ընդամենը 1,5 ժամ է: Կմեկնենք և անմիջապես էլ ետ կվերադառնանք:

-Այո՛: Անձնագիրս մեքենայիս մեջ է, քեզ կտամ, երբ ասի հասնենք: Շնորհակալ եմ, որ համաձայնվեցիր,- Գրիգորը կանչեց մատուցողին հաշիվը բերելու համար:

Գրիգորն անհանգիստ գիշեր անցկացրեց: Նա հասկանում էր, որ մեկնելու էր մի վայր, ուր պատերազմական թեժ օջախներից մեկն էր: Ինչքան էլ Ստամբուլում կամ Անկարայում հարյուրավոր մարդիկ պարբերաբար ցույցեր էին կազմակերպում՝ պահանջելով իշխանություններից վերջ տալ Թուրքիայի արևելյան մասում կառավարական ուժերի կողմից ձեռնարկվող արյունահեղություններին, մեկ է, ոստիկանական ջրցան մեքենաներով ցրում էին մարդկանց, առավել ըմբոստներին ձերբակալում, ճնշում նրանց իրավունքները: Իրականում Դիարբեքիի /նախկինում՝ Տիգրանակերտ/ և Վանի նահանգներում թուրք ոստիկանները մշտապես բախման մեջ էին քուրդ զինյալների հետ: Այսինքն՝ նրանք կռվում էին իրենց երկրի քաղաքացիների դեմ, որոնք բնակչության տասնհինգ տոկոսն են կազմում: Քրդերին անվանելով ահաբեկիչներ, նրանց հետ բանակցություններ վարել չէին կամենում: Մինչդեռ քրդերի թիվը Թուրքիայում հասնում է քսան միլիոնի: Մի՞թե բոլորին հնարավոր է վերացնել: Այդ այն դեպքում, երբ նույն քրդերը որպես մահմեդականներ միշտ կանգնած են եղել նրանց կողքին և տարբեր ժամանակներում ակտիվորեն մասնակցել են հայերի դեմ կազմակերպվող կոտորածներին: Հիմա նրանք արդարանում են՝ պնդելով, որ թուրքերը քրդերին միշտ օգտագործել են իրենց շահերի համար: Աշխարհի երկրներն էլ որպես կանոն մտահոգված են իրենց խնդիրներով, մանավանդ որ հարևան երկրում՝ Սիրիայում տարիներ շարունակ ձգվող պատերազմի հետևանքով միլիոնավոր փախստականների խմբեր են հայտնվել Եվրոպայում և բոլոր երկրներն իրար են խառնվել:

Այդ օրը նա ավելի վաղ արթնացավ: Երբ մտավ խոհանոց, ծնողները զարմացած միմյանց նայեցին:

-Այսքան շո՞ւտ... Այդ ո՞ւր ես գնալու,- հարցրեց հայրը:

-Քո նախնիների երկիր եմ գնում, հայրիկ, Վանի նահանգ,- փորձեց ժպտալ Գրիգորը:

-Կատակո՞ւմ ես:

-Ինչո՞ւ: Այնտեղ մեկնելու պատճառն ունեմ: Մեր կիթառահարի մայրն է մահացել,- երգիչը չուզեց բացել փակագծերը, որ ծնողները չանհանգստանային:

Ձեյնաբ խանումն էլ տագնապով դիմեց որդուն.

-Կարծում եմ, քեզ հայտնի է, որ այնտեղ մշտապես բախումներ են լինում թուրքերի և քրդերի միջև: Մի՞թե վտանգավոր չէ այնտեղ մեկնելը, ինքդ էլ կարգին չես կազդուրվել:

-Մայրիկ, ես ընդամենը հուղարկավորությանը պիտի մասնակցեմ: Ռուստամն էլ հետս կլինի: Եվ հետո մի՞թե անվտանգ է Ստամբուլն ու Անկարան, որտեղ հաճախ ահաբեկիչները պայթյուններ են իրականացնում: Մեզնից յուրաքանչյուրն էլ կարող է պատահաբար ազգայնականների կամ իսլամիստների գոհը դառնալ:

Մայրն այլևս հարցեր չտվեց որդուն:

-Մեկնում ենք ինքնաթիռով: Այսօր էլ ետ կվերադառնանք,- ասաց Գրիգորը՝ տեղավորվելով սեղանի մոտ: -Եթե թեյը պատրաստ է, մի բաժակ թեյ լցրու ինձ համար:

Երգիչն արագ նախաճաշեց և տաքսի պատվիրեց: Ռուստամն արդեն օդանավակայանի սպասասրահում էր:

-Լավ էլ ժամանակին եկար,- ասաց ընկերը:-Մեկուկես ժամից պիտի թռչենք:

-Ես համարյա աչք չեմ փակել: Միայն թե կարողանանք օգնել Դիլերին:

-Հուսով եմ, որ մեր ջանքերն ապարդյուն չեն անցնի: Գնանք մի բաժակ սուրճ խմելու:

Ստամբուլից Վան թռիչքը եղավ ճիշտ ժամանակին: Հետևաբար նշված ժամանակին նրանք արդեն Վանում էին: Մի տաքսի վարձեցին՝ հասնելու Թոնդրակ գյուղ, որտեղ ապրում էին Դիլերի ծնողները: Ամբողջ ճանապարհին ընկերները լուռ էին: Նրանք մտախոհ հետևում էին ճանապարհի եզրերին գտնվող անտառներին, դաշտերին, գյուղերին: Հեռվից կարծես նրանց ուղեկցում էր Վանա գեղատեսիլ լիճը:

Սակայն մինչև Թոնդրակ հասնելը, ճանապարհին նրանք ականատես եղան սարսափելի մի տեսարանի: Թուրք զինված ոստիկաններն իրենց մեքենայից պարանով կապել էին երիտասարդ տղամարդու մարմին ու գետնով քարշ էին տալիս: Տուժածն, անկասկած, ըմբոստ քրդերից էր: Ոստիկանները նրան սպանելուց հետո շարունակում էին խոշտանգել մարմինը՝ ահ ու սարսուռ տարածելու համար: «Եթե քրդերի հետ են թուրքերը նման միջնադարյան դաժանություն կիրառում, ապա պատկերացնում եմ, թե ինչպիսի վայրենություն էին գործադրում հայերի նկատմամբ Եղեռնի ժամանակ», - գայրույթով մտածեց Գրիգորը: Կողքին նստած Ռուստամը կարծես կարդաց նրա խռովահույզ մտքերը:

-Դու վրդովվա՞ծ ես այդ անողոք տեսարանից:

-Ասես երագի մեջ լինեմ: Մեր երկրի ներսում այս ի՞նչ է կատարվում:

-Եթե ամեն բան կարգին լիներ, մենք այստեղ չէինք հասնի:

Այլևս ոչինչ չխոսեցին: Իսկ երբ նրանք հասան գյուղ, այնտեղ էլ սահմռկեցուցիչ տեսարանի ականատես եղան: Ջինված ոստիկանները վառել էին մի քանի քուրդ զինվորների տները, սակայն դրանով չէին բավարարվել: Երեք սպանված քրդերի դիերն այրել էին և իրենց հաջողությունը նշելու համար դիակների շուրջ նրանք շուրջպար էին բռնել ու ցատկոտում էին:

Փողոցի եզրին կանգնած ոստիկաններից մեկը կանգնեցրեց նրանց տաքսին:

-Որտեղի՞ց եք և ո՞ւր եք գնում:

-Ստամբուլից,- քաղաքավարությամբ պատասխանեցին Գրիգորն ու Ռուստամը՝ ցույց տալով անձնագրերը:

Նրանք հայտնեցին, որ ցանկանում են հանդիպել գյուղի ոստիկանապետին: Թուրք ոստիկանը ստուգելով նրանց փաստաթղթերը՝ ցույց տվեց ճանապարհի այն ուղղությունը, որը տանում էր ուղիղ պետի մոտ:

Ոստիկանապետն իսկույն ճանաչեց հայտնի երգչին:

-Սայիդ Ակչա՞մ, էս որ քամին է Ձեզ մեզ մոտ բերել:

-Պարոն ոստիկանապետ, ընկերոջս հետ խնդրանքով ենք Ստամբուլից ձեզ մոտ հասել: Հուսով եմ, որ չեք մերժի:

-Եվ ո՞ւմ եք ուզում, որ ազատ արձակեմ կամ չսպանեմ:

-Ոչ մեկին: Իմ նվազախմբի տղաներից մեկի մայրն է մահացել: Թույլտվություն տալ, որ նրան հողին հանձնեն: Քանի օր է արդեն, սահմանված խիստ ռեժիմի պատճառով հանգուցյալի մարմինը տանն է մնացել և,- հոգու ներսում կուտակված ներքին բողբոջից Գրիգորը հազիվ կարողացավ գայրույթը չարտահայտել: Թեկուզ այդ պահին մեծ ցանկություն ուներ պարսավանքի սյունին գամել նրան:

-Ուրեմն քո՞ւրդ է ձեզ մոտ աշխատում:

-Այո՛: Նա հրաշալի կիթառահար է, խաղաղասեր մարդ: Խնդրում եմ աջակցել մեզ: Անկասկած, Ձեր խնդիրը կարգուկանոն պահպանելն է: Դուք կարող եք Ձեր ոստիկաններից որևէ մեկին տրամադրել մեզ, որը կուղեկցի մեզ և ոչ մի ոտնձգություն չի լինի նրանց կողմից:

Ոստիկանապետը մի ակնթարթ շուրթերը նյարդայնորեն սեղմեց, հետո հոնքերը կիտելով՝ ասաց.

-Միայն նրա համար, որ Ձեզ հարգում եմ և մարդիկ Ձեզ սիրում են, բարություն կանեմ, որպեսզի Ձեր խնդրանքը կատարեմ: Իմացե՛ք, որ ես օրենք եմ խախտում: Պարզապես չգիտեք, թե ինչ սրիկաներ են այդ քրդերը: Առհասարակ նրանց բոլորին պիտի ոչնչացնել, որ մեզ հանգիստ թողնեն:

Ռուստամը և Գրիգորը ոչինչ չպատասխանեցին: Նրանք զգացին, թե ոստիկանապետն ինչպիսի աստելությամբ էր տրամադրված քրդերի դեմ: Անշուշտ, այդ աստելությունն օրեցօր իր սնունդն էր ստանում «վերևից» եկող անմարդկային բնույթ կրող հրահանգներից: Մի՞թե մարդկային կարելի է անվանել այն արարքները, երբ արգելված էր վիրավորների համար բժիշկ կանչել կամ հանգուցյալներին հողին հանձնել: Եվ ի՞նչ էր նշանակում «օրենք խախտել» բառերը, երբ նրանք օրը ցերեկով ջարդեր են կազմակերպում իրենց քաղաքացիների դեմ:

Այնուհետև ոստիկանապետն ամբողջ ծայնով արջի պես գոռաց՝ կանչելով միջանցքում կանգնած հերթապահին:

-Շիրինին ասա՛, թող ներս գա:

Մի քանի վայրկյան անց ներս մտավ կոպիտ կազմվածքով ու մռայլ դեմքով զինված թուրք ոստիկանը, որը ոստիկանապետի հրահանգով միացավ նրանց՝ տեղավորվելով տաքսու մեջ:

Ռուստամը հեռախոսով կապվեց Դիլերի հետ, որը բացատրեց, թե իրենց ինչպես գտնել: Երբ տեղ հասան, և զինված ոստիկանը Շիրինի ուղեկցությամբ դուրս եկավ մեքենայից, Դիլերը միջանցքում սպասում էր նրանց: Գրիգորը Ռուստամի հետ ներս մտան կիսախարխուլ պատերով նրանց տունը, որտեղից այնպիսի ծանր հոտ էր գալիս, որ քիչ էր մնում շնչահեղձ լինելին:

-Շնորհակալ եմ, Սայիդ,- Դիլերը սեղմեց երգչի ձեռքը:- Համոզված էի, որ դու ինձ կօգնես:

-Ամեն բան արագ կազմակերպեք: Ոստիկանը ձեզ հետ կլինի: Ձեր վրա ոչ ոք չի կրակի: Իսկ մենք նորից ետ ենք վերադառնում,-Գրիգորն ավստասանքով լի հայացքով նայեց տանջված կիթառահարի դեմքին՝ այս անգամ ձեռքով հպվելով նրա ուսին:

-Մինչև հիմա այստեղ կատարվող ծանր դեպքերից, մորս մահից ուշքի չեմ գալիս,- հուզված ձայնով ասաց Դիլերը:

-Համբերություն ենք քեզ մաղթում: Պինդ եղի՛ր: Մենք քեզ Ստամբուլում կսպասենք:

Դիլերին հրաժեշտ տալուց հետո Գրիգոր Ակչամը Ռուստամի հետ նստեցին իրենց վարձած տաքսին՝ վերադառնալու համար Վանի օդանավակայան: Նրանք նկատեցին Ճամփեզրին թափված դիակներ, որոնցից տարածված գարշահոտից քիչ էր մնում շնչահեղձ լինելին: Տաքսու վարորդը ստիպված շոգին փակեց բոլոր լուսամուտները: Գրիգորին ու Ռուստամին թվաց, թե անցնում են դժոխքի ճանապարհով: Երկուսն էլ տեսածից ու կատարվածից այնքան մռայլ էին դարձել, որ անուժ էին որևէ բառ փոխանակել: Այն ամենը, ինչին ականատես դարձան նրանք, դեռ երկար ժամանակ պիտի հիշեին:

Քյերիմը, լինելով ազգայնամոլ, եղբոր համարձակ արարքը ոչ միայն չէր հանդուրժում, այլև ոտնահարված էր համարում իր պատիվը, մանավանդ որ հեռուստաեթերից հնչեցվող վերջին լուրերում լրագրողներն անընդհատ ընդգծում էին երգչի հայկական արմատների մասին: Ինչքան էլ նա գիտակցում էր, որ այդ մարդն ի վերջո իր հարազատ եղբայրն էր, միևնույն էր, իր սրտի խորքում բուն դրած վրեժխնդրության զգացումն իրեն հանգիստ չէր տալիս: Նա խելագարի պես ուզում էր կրնկակոխ հետևել եղբորը, անպայման ցավ պատճառել նրան: Քյերիմի մեջ այնպես էր գլուխ բարձրացրել դաժանությունը, որ միանգամից ջնջվել էին մանկության, պատանեկության, ընտանիքի հետ կապված բոլոր հաճելի հուշերը: Այդպես պատահում էր այն մարդկանց մոտ, ովքեր հիվանդանում են հիշողության կորստով: Մինչդեռ նա հիվանդ էր վրեժխնդրության տենչով: Քյերիմը հաշվի չէր առնում այն փաստը, թե իր ծնողներն ինչպես կընդունեին իր հաջորդ քայլը, որ նրանց իր գործողություններով կարող էր հասցնել անգամ մահվան շեմը: Լինելով չարացած, ընդհակառակը, նա ուղիներ էր որոնում իրականացնելու իր դաժան ծրագիրը:

Քյերիմը կրկին իր մոտ կանչեց այն աշխատակիցներին, ովքեր դիմակներով հարձակվել էին իր եղբոր վրա, նրանց նորից այլ առաջադրանք տվեց, որը կապված էր Սայիդ Ակչամի հետ: Նրան հլու կամակատարները հանգիստ հեռացան աշխատասենյակից այն խաղաղությամբ, որ իրենց ոչ ոք երբեք չի մեղադրի, քանի որ հենց իրենք էին «օրենքներին» հետևողները:

Գրիգոր Ակչամը երեկոյան առաջիկա համերգի համար հերթական փորձերն էր անում, երբ իրենց շենքի մոտ հզոր պայթյուն լսվեց: Նվագախմբի տղաների հետ մոտենալով լուսամուտին՝ նրանք տեսան, թե ինչպես էր վառվում իր ավտոմեքենան: Մինչ տղաներից մեկը իսկույն կեթ զանգեց ոստիկանություն, Գրիգորի ներքին ձայնը հուշեց, որ այն դարձյալ իր ոստիկան եղբոր ձեռքի գործն էր: Ցավոք, այնպես ուժգին էր պայթյուն եղել, որ մեքենայից ոչինչ չէր մնացել:

Այրվեցին նաև երգչի բոլոր փաստաթղթերը: Այս անգամ նա մարդկանց բազմությունից հեռու քաշվելով՝ զայրացած հավաքեց Քյերիմի ձեռքի հեռախոսահամարը և ջղային տոնով հարցրեց.

-Մինչև ե՞րբ ես դու ինձ հետապնդելու և վնաս պատճառելու: Հիմա էլ պայթյունով ես ինձ վախեցնում:

-Մինչև վերանաս երկրի երեսից:

-Չե՞ս վախենում ալլահից:

-Դու ո՞վ ես, որ ալլահի անունից ես խոսում: Եթե հայ ես, ուրեմն մտածիր ձեր Քրիստոսին օգնության կանչել:

-Ամոթ է: Դու և՛ քեզ, և՛ ինձ կխայտառակես: Կանգ առ, քանի ուշ չէ:

-Մենք բոլորս քո պատճառով արդեն խայտառակվել ենք,- Քյերիմն անջատեց իր հեռախոսը:

Գրիգոր Ալչամը նյարդայնացած հրաժեշտ տվեց իր խմբի տղաներին, տաքսի նստեց ու վերադարձավ տուն: Նա ուզեց փախչել ոստիկաններից: Եվ ի՞նչ պիտի ասեր նրանց: Սակայն երգչին չհաջողվեց խուսափել նրանց հարցադրումներից, քանի որ ոստիկանները նրա ետևից եկան տուն: Խեղճ ծնողները սարդնած կանգնել էին որդու կողքին: Նրանց համար էլ պարզից պարզ էր, որ Քյերիմի արածն էր: Հայրը լեզվի տակ ինչ-որ դեղ դրեց, իսկ մայրը տագնապով կծկվել էր բազմոցի մի անկյունում: Ոստիկանների կողմից տրված բոլոր հարցերը մի պատասխան ունեին՝ չգիտեմ: Նրանց հեռանալուց հետո Գրիգորը ծնողների հետ անդրադարձան ավագ որդու անամոթ արարքին:

-Ես այդպես էլ չհասկացա, Քյերիմն ինձ դարձյալ ուզում էր վախեցնե՞լ, թե՞ սպանել,- հարցրեց Գրիգորը՝ նայելով ծնողներին:

-Երևի նորից ուզում էր վախեցնել,- շշնջաց մայրը:

-Չի իմացվի, գուցե նրանք կարծում էին, թե Գրիգորը մեքենայի մեջ էր: Չէ՞ որ նրա ավտոմեքենայի ապակիները մուգ են,- Ահմեդի ծայրը դողաց խոսելիս:

-Եթե իսկապես նրա նպատակն ինձ ֆիզիկապես վերացնելն է, ապա դա նրան մի օր անպայման կհաջողվի իրականացնել,- ի պատասխան ասաց Գրիգորը:

-Մենք չպիտի թույլ տանք: Ես դա չեմ թողնի,- զայրույթից այս անգամ կերկերուն դարձավ երգչի հոր ձայնը:

-Որդիս, գուցե որոշ ժամանակ բացակայե՞ս քաղաքից,- աղերսով դիմելով որդուն՝ ասաց Ջեյնաբ խանումը:

-Դա փրկություն չէ: Եթե Քյերիմը չար մտադրություն ունի, նրան պետք է կանգնեցնել,- ասաց հայրը:

-Ես պայթյունից անմիջապես հետո զանգեցի Քյերիմին ու հարցրի, թե նա մինչև ե՞րբ պիտի ինձ հետապնդի: Եվ գիտե՞ք, թե նա ինչ պատասխանեց.«Մինչև վերանաս երկրի երեսից»:

-Մի՞թե նրան կանգնեցնել չի կարելի,- վախեցած հարցրեց Ջեյնաբ խանումը՝ նայելով ամուսնուն:

- Ավելի լավ է դու թեյ պատրաստիր: Կոկորդս զայրույթից չորացել է,- տանտիրոջ ճակատը հուզմունքից պատեց քրտինքով:

Նրա ուղեղում չէր տեղավորվում այն դառը փաստը, որ ավագ որդին բացահայտ առճակատում էր կրտսեր եղբոր դեմ: Քյերիմն իրեն մոլեռանդ թուրքի պես էր պահում, նմանվելով այն մարդասպան թուրքերին, ովքեր վայրենաբար կոտորեցին հայերին Եղեռնի ժամանակ: Այնինչ կրտսեր որդին, որ հպարտանում էր իր հայկական ծագմամբ, բարի էր, խաղաղասեր, գթասիրտ: Նա ամենևին չէր ատում թուրք ժողովրդին, ընդհակառակը, պաշտպանելով բոլոր ազգերի իրավունքները, տանել չէր կարողանում անարդարությունը, դաժանությունը, երկրում ազգային փոքրամասնությունների ճնշումը: Ահմեդը ցավով մտածեց, որ թեև երկու որդիներն էլ իր միս ու արյունից էին, բայց տարբեր էին ինչպես երկիրն ու երկինքը՝ իրենց մտածողությամբ, աշխարհընկալմամբ, մարդկային որակներով: Սակայն ինքը որպես հայր՝ արդարության ու խաղաղության կողմնակիցն էր: Նա երբեք թույլ չի տա, որ արյուն հեղվեր իր ընտանիքում և իր գերակա պարտքը համարեց կանխարգելել եղբայրասպանությունը:

Հոր դեմ կատարված մահափորձից Մուստաֆան շատ վախեցավ: Սկզբում տարաբնույթ լուրեր պատվեցին: Որոշ լուրերի մեջ հաղորդվում էր, որ Սայիդ Ակչամի մեքենան պայթեցրել են անհայտ անձինք, թե իբրև երգիչը փորձերից հետո նստել էր մեքենան, որպեսզի տուն գնար: Մեկ այլ լուրերում ասվում էր, որ երգիչն իր ավտոմեքենայի մեջ էր գտնվում, երբ պայթեցվել էր այն: Ստույգ տեղեկություններ իմանալու նպատակով նա գանգեց հորը: Իմանալով, որ նրա հետ ամեն ինչ կարգին է, նոր միայն հանգստացավ: Սակայն փակվելով ննջասենյակում, նա անվերջ շուռումուռ էր գալիս անկողնում: Այս անգամ նրան հանգիստ չէին տալիս ուղեղում մեխված բազմապիսի հարցերը ու հոր հետ կապված լավագույն հուշերը: Չէ՞ որ ինքը միշտ հպարտացել է նրանով: Հայրը խելացի էր, տաղանդավոր, ուժեղ, բարեկիրթ: Հիշեց, թե ինչպես էին միասին գնում լողավազան՝ լողալու, ու հայրն էր իրեն լողալ սովորեցրել: Իսկ ինչքան էր պարծենում, երբ ընկերների հետ մասնակցում էր հոր մենահամերգներին, և հայրը բոլորին հաճույքով իր ինքնագիրն էր բաժանում: Նույն բարյացակամությամբ իրեն էր տրամադրում այն մեքենայի բանալիները, որ հիմա այլևս չկա: Բայց այդ մեքենան ժամանակի ընթացքում իրեն շատ հարազատ դարձավ, քանի որ դրան մշտապես վերաբերվում էր այնպես, ինչպես տան որևէ անդամի: Մինչդեռ ինքը, ընկնելով մոր ազդեցության տակ, հորը բողբոջին մենակ էր թողել: Ասենք թե հոր նախնիների մեջ հարյուր տարի առաջ հայկական ծագմամբ մարդիկ են եղել: Բայց չէ՞ որ իր տատն ու պապը, իր ծնողները իսլամիստներ են և պահպանում են իսլամի օրենքները: Ու նույնիսկ եթե իր հոր մոտ ցանկություն էր առաջացել վերադառնալ իր ինքնությանը, դա նրա ցանկությունն էր և իրավունքը: Ինքը հոր միակ որդին է և չպետք է երես

թեքեր հորից, ինչ էլ նա աներ: Նա ո՛չ թմրամոլ էր, ո՛չ մարդասպան, ո՛չ սրիկա, որ ինքը արհամարհել է նրան: Հայրն ընդամենը ըմբոստ երգիչ էր, որ ճանաչված էր ամբողջ երկրում:

Մուստաֆան մեղադրեց ինքն իրեն՝ իմանալով այն մասին, որ հոր վրա ավազակային հարձակում է եղել, նրան ծեծել էին ու պառկած էր տանը, սակայն ինքը այդ միջադեպից հետո ուշքի չեկավ: Ո՛չ զանգեց հորը, ո՛չ էլ գնաց նրան տեսնելու: Այնինչ իրականում հենց նման դժվարին օրերին պետք է սատար լիներ հորը: Այն, որ մայրը բոլորովին չէր ուզում տեսնել իր հորը, դա նրա գործն էր: Նրանք իրենց հարաբերությունները երկուսով կարող են պարզել: Իրենք՝ զավակներով, պետք է ընդունեն ու հարգեն նրանց որոշումը, որպիսին էլ այն լինի: Ու եթե հայրը հայկական ծագում ունի, ի վերջո իր արյան մեջ էլ հայի արյուն կար: Իհարկե, ոչ գտարյուն հոր պես: Քանի որ մայրն իսկական մահմեդական է, ինքը հայի ու թուրքի խառնուրդ է: Բայց դրանից ի՞նչ է փոխվում իր մեջ: Գուցե ա՞յն, որ հայերի հանդեպ չպետք է թշնամանքով լցվեր: Սակայն ինքը բոլոր ազգերի նկատմամբ էլ հարգալից վերաբերմունք ուներ: Այդ դեպքում ինչո՞ւ էր իր ուղեղում ծագած բազում հարցերի պատասխաններն իմանալով հանդերձ, նախկինում էլ այդքան սթափ չէր մտածել: Մինչդեռ ինքը ապագա իրավաբան պիտի դառնա և իրավունք չուներ իրեն այդպես պահելու: Թեկուզ մասնագիտությունն էլ կապ չունի, երբ մտածում ես ծնողիդ կողքին լինելու մասին: Այնինչ ինքը սթափվեց միայն հոր հետ կապված դժբախտ պատահարներից հետո: Մուստաֆան տխուր մտածեց, որ իրեն երբեք չէր ների, եթե հայրն այլևս ողջ չլիներ: «Հիմա էլ ուշ չէ, - հուշում էր նրան մի ներքին ձայն, - ուղղի սխալը, որ մեղքի զգացում չունենաս»:

Նա որոշեց հենց հաջորդ օրը հանդիպել հորը, ներողություն հայցել նրանից: Ցավոք, դասերի ընթացքում, երկար դասամիջոցին, երբ տղաներով բակ էին դուրս եկել, տհաճ խոսակցություն եղավ: Նրան հասակակից ծանոթներից մեկը, որ մեկ կուրս բարձր էր իրենից, տեսնելով Մուստաֆային, ցինիկաբար շարտեց.

-Հորդ վրա մահափո՞րձ էին կատարել: Ասում են, որ նրա մեքենան պայթեցրել են, հա՞,- ու չարությամբ խնդաց:

-Բերանդ փակիր, կրկեսի ծաղրածու,-զայրացել էր Մուստաֆան:

-Չե՞ս վախենում, որ քեզ հետ էլ նման դժբախտ պատահար կլինի: Դե՛, ո՞վ գիտե...Չէ՞ որ հայրդ հայ է, ուրեմն՝ դու էլ հայ ես:

Մուստաֆան չդիմացավ ու բռունցքով հարվածեց նրա մշութին: Նա գիտեր, որ Թուրքիայում իշխում է ռասիստական մտայնություն, հետևաբար, հայ կամ հրեա անվանելը համարվում էր անարգանք:

-Չեզ բոլորիդ պիտի ոչնչացնել, կրակների մեջ խորովել, -չարացած ասել էր լկտի երիտասարդը:

Մուստաֆան այլևս բաց չթողեց նրան, զցեց ոտքերի տակ՝ տրորելով ու զայրույթով ոտքերով խփելով նրան, ուր որ կպատահեր: Այդ ընթացքում նրա ընկերները միջամտեցին: Ինչ-որ մեկը

սակայն զանգեց ոստիկանություն: Շուտով նրանք արագ տեղ հասան և մի քանիսին իրենց հետ տարան, այդ թվում Մուստաֆային:

Մայրը՝ Ռահիմեն, իմանալով այդ մասին, հասավ ոստիկանական բաժին: Քյերիմը զարմացավ՝ եղբոր կնոջը տեսնելով իրենց բաժանմունքում: Նրան մի պահ թվաց, թե Ռահիմեն, ամուսնու պատճառով էր այնտեղ եկել՝ իրենից հաշիվ պահանջելու կամ բողոքելու: Ուստի նա շատ խիստ տոնով հարցրեց եղբոր կնոջը.

-Ինչո՞ւ ես եկել: Ո՞վ է քեզ կանչել:

Ռահիմեն շշմեց նրա օտարոտի պահվածքից, քանի որ իրենց հարաբերությունները միշտ լավ են եղել:

-Դու զայրացա՞ծ ես, Քյերիմ: Երևի ժամանակին չեմ եկել,-շփոթված ասաց նա:

-Գործեր շատ ունեմ, եթե կարող ես՝ կարճիր խոսքը:

-Մուստաֆայի համար եմ եկել,- արցունքն աչքերին պատասխանեց Ռահիմեն:- Նա կռվել է ինչ-որ ուսանողի հետ: Երկուսով իրար ծեծել են: Հիմա նա ձեր բաժանմունքում է: Միջնորդիր, որ ազատ արձակեն:

Քյերիմը հասկանալով, որ նրա այցն իր հետ կապ չունի, մեղմացրեց ձայնը.

-Այդ ինչպե՞ս է պատահել: Մուստաֆան կռվարարներից չէ:

-Համալսարանում, երկար դասամիջոցին, բարձր կուրսեցիներից մեկը չարախնդորեն ծաղրել է նրա հորը, հետո՝ իրեն...

-Այժմ հասկանալի է ամեն բան: Ամուսնուդ արարքների պատճառով խեղճ տղան է տուժել,- առանց անոթի ու ընդգծված լայիրշությամբ հնչեցին նրա խոսքերը:

-Ես էլ դա եմ ասոմ, Քյերիմ: Մի բան արա...

Քյերիմը Ռահիմեի հետ դուրս եկավ աշխատասենյակից՝ ուղղվելով այն մեկուսարանի կողմը, ուր պահում էին տղաներին: Տեսնելով որդուն՝ մայրն ասաց.

-Ախր, տղա՛ս, ինչո՞ւ ես կռվել: Ուշադրություն չդարձնեիր այդ հիմարի ասածների վրա:

-Չէի կարող, մայրի՛կ: Նա իմ ընկերների ներկայությամբ ծաղրում էր ինձ:

-Քեզ ամենագորի տեղ էիր դրել: Թե՞ որպես իրավաբան չգիտեիր հասարակական կարգը խախտելու կանոնները,- այս անգամ խստորեն միջամտեց Քյերիմը:

Մուստաֆան լռեց: Հոգու խորքում նա գոհ էր իր արարքից: Նա պաշտպանել էր ոչ միայն հոր, այլև իր պատիվը:

Անշուշտ, Քյերիմը միջնորդեց, որպեսզի տղաներին ազատեին Մուստաֆայի հետ, սակայն մի պայմանով, որ այլևս նման խուլիգանական արարքի համար չհայտնվեն ոստիկանությունում:

Երբ Մուստաֆան տուն հասավ, այս անգամ վեճի բռնվեց մոր հետ: Ռահիմեն առաջինը բորբոքեց որդուն իր անիմաստ հարցադրումներով:

-Հայրդ մեր մասին մտածո՞ւմ է, որ դու նրա պատվի համար կռիվներ ես սարքում,-ջղային տոնով տղային դիմեց մայրը:

-Մայրի՛կ, իսկ ո՞վ էր իր ընտանիքն ըստ պահանջի պահել, երեխաներին քեզ հետ միասին արտերկրներ ուղարկել հանգստանալու...Մոռացե՞լ ես,- հորը պաշտպանեց Մուստաֆան:

-Իսկ հիմա՞... Ի՞նչ մտածեց, երբ փոխեց անունը, անձնագիրը և իրեն որպես հայ է ներկայացրել, որ մեզ բոլորիս անարգե՞ն...

-Նախ, չենք թողնի, որ մեզ վիրավորեն, թե չէ արժանի հակահարված կստանան: Եվ հետո՝ դա նրա իրավունքն է: Եթե հայրիկը հայկական արմատներ ունի, թող հպարտանա: Նա մեզ ինչո՞վ է վնասում: Այդ դու ես մեղավոր, որ առանց նրա հետ զրուցելու բոլորիս այստեղ ես բերել: Այնինչ մեր տունն այստեղ չէ, այլ՝ նրա մոտ, ով մի քանի տարի առաջ մեր պայմանները բարելավելու համար նոր սեփական տուն գնեց:

Ռահիմեին զայրացրին որդու խոսքերը: Նա ոչ միայն բացահայտ կերպով հորն էր սատարում, այլև իրեն էր մեղադրում կատարվածի համար: Մինչդեռ իրեն թվում էր, թե Մուստաֆան երբեք չի ուզենա հանդիպել հորը:

-Ահա՛ թե ինչ... Հայրդ լավ էլ դատապաշտպան ունի,-զավեշտորեն հնչեցին Ռահիմեի խոսքերը:

-Մայրի՛կ, ամոթ է...Մի՞թե նա ընտանիքի մասին հոգ չէր տանում: Ինչո՞ւ ես այդպես թշնամացել նրա հետ:

-Այն պատճառով, որ հայ է, -պատասխանեց մայրը:

-Հետո ի՞նչ: Հաշվի՛ր, որ գիտակցաբար ամուսնացել ես հայի հետ:

-Դու ինձ ծաղրո՞ւմ ես: Երբեք: Ես ատում եմ հայերին:

-Նաև՝ ի՞նձ:

-Դու իմ որդին ես: Դու հայ չես:

-Այդ ինչպե՞ս է ստացվում, որ հայրս հայ է, բայց ես՝ ոչ:

-Որովհետև քո երակներով նաև թուրքի արյուն է հոսում:

Մուստաֆան մի պահ լռելուց հետո՝ ասաց.

-Զգիտեմ, թե ես ով եմ հիմա, սակայն այլևս այստեղ չեմ ապրի: Վերադառնում եմ հորս մոտ,- նա գնաց ննջասենյակ և սկսեց հավաքել իր հագուստներն ու իրերը՝ դասավորելով դրանք իր ճամպրուկի մեջ:

-Դու դա չես անի,- զայրացավ մայրը՝ գնալով նրա ետևից:

-Մայրի՛կ, իզուր քեզ մի՛ տանջիր: Ես քեզ չեմ լքում: Վերադառնում եմ այնտեղ, որտեղ իմ տունն է:

Ռահիմեն այլևս ոչինչ չխոսեց: Զգաց, որ որդու կայացրած որոշումն անբեկանելի էր: Նաև հասկացավ, որ նա այլ կերպ վարվել չէր կարող, եթե պաշտպանելով հոր արժանապատվությունը՝ հայտնվել էր ոստիկանական բաժանմունքում:

Ահմեդը նախնիների արյան կանչով զգաց, որ ավագ որդին իրենց համարում էր թշնամիներ: Գրիգորի հետ կատարված դեպքերից նրա համար պարզ դարձավ, թե հայերի հանդեպ ինչքան հեռուն է գնացել Քյերիմն իր ատելությամբ, որը հաստատապես մտածում էր, որ իսկական հայրենասերն անպայման պիտի ազգայնամուլ լինի: Հիրավի, Ահմեդը լավ էր հասկանում, որ այդ ատելության պատճառը Քյերիմի տարիներ առաջ «Գորշ գայլեր» անվամբ թուրք ազգայնական ամենահայտնի կազմակերպությանն անդամակցելն էր: Ահմեդը գիտեր, որ մերօրյա թուրք ազգայնականությունը իրականում շարունակությունն էր 20-րդ դարասկզբի երիտթուրքական համակարգի, նրա գաղափարախոսության: Եթե պանթուրքիզմի ծրագրերով անցյալում առաջնորդվում էին բժիշկ Նազըմը, Էնվերը, հետագայում՝ Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը, Ջիյա Գյոքալփը, հետո ասպարեզ եկավ Արփարսլան Թյուրքեշը և ուրիշներ, այժմ գորշ գայլեր են կոչվում ազգայնական շարժում կուսակցության բոլոր անդամները: Նրանք իրենց գործունեությունը ծավալում են ոչ միայն Թուրքիայում և թյուրքախոս երկրներում, այլև բոլոր այն պետություններում, որտեղ կա թուրքական սփյուռք և գործում է ուժեղ թուրքական լոբբի: Այլ երկրներում նրանք հիմնականում գործում են մշակութային, սպորտային կազմակերպությունների տեսքով, զբաղվում են թմրանյութի առևտրով, մարդկանց առևանգումով և այլ հանցագործություններով: Թուրքիայում նրանց ուժերն ուղղված են ազգային փոքրամասնությունների դեմ: Այսինքն՝ հայերի, հրեաների, քրդերի, հույների դեմ: Թուրք ազգայնականի նպատակը Մեծ Թուրանն է և այլ ազգերի ոչնչացումը երկրի երեսից ու կամ էլ նրանց թուրքացումը:

Ահմեդը ամբողջ մի օր իր մտքերը ծանրութեթև անելուց հետո, հաջորդ օրն առավոտյան մտավ մզկիթ ու նամազից հետո քայլերն ուղղեց դեպի ոստիկանական բաժանմունք: Բարեբախտաբար, ոստիկանապետը տեղում էր: Պետին ներկայացնելով իր անձը, նա ասաց, որ հույժ կարևոր գործով է եկել նրա մոտ:

-Ձեր որդու միջոցով կարող էիք տեղեկանալ, որ դեռ Սայիդ Ակչամի վրա դիմակներով հարձակվողներին չենք գտել: Հավատացած եղե՞ք, որ անպայման կգտնենք, -ասաց նա:

-Պատվարժան ոստիկանապետ, բայց հանցագործներին ժամանակին չգտնելու պատճառով նրա մեքենան մեկ օր առաջ պայթեցրին:

-Այո՛: Տեղյակ եմ նաև այդ դժբախտ պատահարին: Լավ էր, որ ձեր որդին մեքենայի մեջ չէր, թե չէ...

Ահմեդը ոստիկանապետի խոսքը կիսատ թողեց:

-Իհարկե, եթե այդպես շարունակվի, նա իսկապես ողջ չի մնա:

-Մեզ մոտ քիչ են լինում դեպքեր, երբ հանցագործները չեն բացահայտվում: Եթե ձեր որդու հետ երկու անգամ դժբախտ պատահար է գրանցվել, ուրեմն՝ ինչ-որ պատվիրատու կա: Վա՛յ թե իմանամ, թե այդ հանցագործներն ում պատվերն են կատարել:

Ահմեդը ձգձգում էր գրույցը, որ համարձակությունն ավելանա ի վերջո արտահայտելու իր այցի նպատակը: Ոստիկանապետը հանեց նրան վերահաս շփոթվածությունից:

-Դուք կասկածներ ունեք:

-Ոչ թե կասկածներ, այլ հաստատապես տեղյակ եմ, թե ում ձեռքի գործն է:

-Եվ ո՞վ է նա,- զարմանքից պետի ակնախորշերը լայնացան:

-Իմ որդին՝ Քյերիմը, ով աշխատում է ձեզ մոտ: Այդ ամենը նա է կազմակերպել: Գուցե տարօրինակ թվա իմ անկեղծ խոստովանությունը, բայց վախենում եմ, որ կրտսեր որդուս նա կսպանի,- հուզմունքից նրա ձայնը դողաց:

Ոստիկանապետը տեսնելով ընկճախտից սրացած հոր դեմքի սաստիկ լարվածությունը, մի բաժակ ջուր առաջարկեց նրան:

-Խմե՛ք և հանգստացե՛ք: Նաև փորձե՛ք ինձ փաստերով ապացուցել:

Ահմեդը կիսով չափ խմելով ջուրը՝ ձակատը վայրկենապես քրտինքով պատեց: Թվում էր, թե իրեն բռնացրել էին դավաճանության մեջ և շուտով կախաղան կբարձրացնեն՝ երկաթից կեռ օղակը մտցնելով պարանոցի մեջ: Նա դանդաղ ձեռքը տարավ դեպի ծոցագրպանը և այնտեղից մի թուղթ հանելով՝ մեկնեց ոստիկանապետին:

-Այստեղ իմ և որդուս՝ Սայիդ Ակչամի ձեռքի հեռախոսահամարներն են: Դուք կարող եք ստուգել, թե ինչպես է սպառնացել մեզ:

-Ահա թե ի՞նչ: Ես ամեն բան կստուգեմ: Անշուշտ, լրատվամիջոցներից տեղյակ եմ, որ ձեր կրտսեր որդին, ով ճանաչված է ողջ Թուրքիայում, փոխել է իր անունը, անձնագիրը, և այդ փաստը Քյերիմը ծանր է ընդունել: Բայց որ նա համարձակվել է հետապնդել եղբորը, մահվամբ սպառնացել ու լկտիաբար հայտարարել այդ մասին, չէի պատկերացնում: Դուք մեզ շատ օգնեցիք: Հանգիստ գնացե՛ք տուն: Մենք կգբաղվենք այդ հարցով:

Ահմեդը բարձրացավ աթոռից ու շնորհակալություն հայտնելով՝ հեռացավ: Միջանցքներում ոչ ոք չճանաչեց նրան, որ ինքն անվտանգության ծառայության աշխատակցի՝ Քյերիմի հայրն էր, քանի որ առաջին անգամն էր եկել ոստիկանական բաժանմունք:

Նրա հեռանալուց հետո ոստիկանապետն իսկույն հրահանգ տվեց ստուգելու իրեն հանձնված հեռախոսահամարներին եկած զանգերը: Նաև կարգադրեց ստուգել Քյերիմի հեռախոսազանգերը և ստացված բոլոր ձայնագրություններն իրեն հանձնել: Շատ ժամանակ չանցած պետի աշխատանքային սեղանին հայտնվեցին իրեն հետաքրքրող հաղորդագրություններն ու ձայնագրությունները: Ոստիկանապետն ապշեց, թե ինչպես էր Քյերիմն իրեն սանձարձակ պահել հոր ու եղբոր հետ ունեցած հեռախոսազանգերի ընթացքում: Ահավասիկ, բոլորովին անտանելի էր և անընդունելի ոստիկանության աշխատակցի նման պահվածքը: Նաև տեղեկացավ նրա հանցակիցների մասին, որոնք Քյերիմի հետ էին աշխատում: Միանգամից հանկարծակիի եկավ. «Փոխանակ նրանք իրենց գործերով զբաղվեին, իրե՞նք էին կանգնել հանցավոր երևույթների գլխին»:

Կեսօրին ոստիկանապետն իր մոտ կանչեց Քյերիմին:

-Այս ի՞նչ խայտառակություն ես սարքել մեր գլխին,- զայրույթով նրան դիմեց ոստիկանապետը:

-Ի՞նչ կա, շեֆ էֆենդի...Ո՞ր գործի մասին է ձեր խոսքը,- մի պահ զարմացավ Քյերիմը:

-Ու դեռ կարողանո՞ւմ ես դերասանություն անել, նույնիսկ զարմա՞նք արտահայտել:

-Իսկ ի՞նչ է կատարվել: Չիմանա՞մ:

-Քո ստոր արարքների մասին է խոսքը: Դու՝ ոստիկանության անվտանգության ծառայության աշխատակիցդ, քո համախոհների օգնությամբ մահափորձ ես կազմակերպել եղբորդ դեմ:

-Այդպիսի բան չկա: Ձեզ սխալ տեղեկություն են տվել,- առանց շփոթվելու՝ պատասխանեց Քյերիմը:

-Եթե մի բան հաստատ չիմանայի, այսքան չէի բորբոքվի: Ինձ հայտնի է քո հեռախոսային գրույցների բովանդակությունը հորդ ու եղբորդ հետ, նաև այն անձանց, ում միջոցով պատվիրել ես կեղտոտ գործողություններդ: Ահա՛ ձայնագրիչը, իսկ այստեղ տպածները ձեր տեքստերի բովանդակությունն է: Վերցրո՛ւ, կարդա՛,- ու նրա կողմը շարտեց սեղանին ընկած թղթերը:

Քյերիմը մի պահ պապանձվեց: Հասկացավ, որ ինչքան էլ շարունակի ժխտել, բոլոր փաստերն իր դեմ են խոսում: Նա մտածեց, թե ով կարող էր այդ ամենի մասին հայտնել պետին: Չէ՞ որ ինքն ամենայն զգուշությամբ էր գործել: Եվ առաջին անգամ իրեն պարտված զգաց:

-Դե՛, խոսի՛ր: Հիմա՞ էլ կասես, թե ճիշտ չեն տեղեկությունները: Մա՞րդ էիր ուզում սպանել, գնայիր մեր երկրի արևելյան կամ լեռնային շրջաններում քրդերի դեմ կռվելիք: Այդ վայրերում ամեն օր թուրք ոստիկաններ են զոհվում նրանց ձեռքով, իսկ դու պարապ ես մնացել և Ստամբուլ քաղաքում արկածախնդրության ես ման գալիս՝ հետապնդելով հարազատ եղբորդ: Կարծես քիչ էր, որ նրան ծեծել տվեցիր ուրիշների միջոցով, հետո էլ մեքենան պայթեցրիր այն հույսով, որ նա մեքենա՞յի մեջ կլինի: Ամո՞թ է քեզպեսներին տղամարդ անվանելը, - ոստիկանապետը սեղանի կռակը սեղմեց և քարտուղարուհուն հաղորդեց, որ իր մոտ կանչի Քյերիմի համախոհներին՝ Շուքուրին և Սալիմին:

Քիչ անց նրանք հայտնվեցին:

-Հ՛ր: Գո՞հ եք ձեր արածներից, թե՞ գործը կիսատ թողեցիք, քանի որ Սայիդ Ակչամը դեռ ողջ է, ու ձեր ծրագրերը ձախողված եք համարում, -դիմելով նրանց՝ զայրացած գոռաց ոստիկանապետը:

Նրանք ոչինչ չպատասխանեցին: Այլևս արդարացում չկար: Հասկանալի էր, որ պետը ստույգ տեղեկություն ուներ այն ամենի մասին, ինչը աշխատել էին թաքցնել բոլորից:

Ոստիկանապետն այս անգամ հրահանգեց, որպեսզի ձերբակալեն Շուքուրին ու Սալիմին, այնուհետև դիմելով Քյերիմին՝ ասաց.

-Իսկ դու աշխատանքից ազատման դիմում գրի՛ր: Ինձ քեզ նման աշխատակիցներ պետք չեն: Փառք տուր Ալլահին, որ քեզ էլ չեն ձերբակալում , - ոստիկանապետը նրան հասկացրեց, որ կա հիմնական պատճառ:

Քյերիմի փրկությունն այն էր, որ Ազգային շարժում կուսակցության անդամներից էր և չէր ուզում նրանց հետ տարածայնություն ունենար:

Թերևս յուրաքանչյուր մարդու համար ամենից դժվարը ինքն իրեն տրվող օբյեկտիվ գնահատականն է: Եվ չկան մարդիկ, ովքեր սրտի խորքում չքննադատեն իրենց: Այնուհանդերձ, յուրաքանչյուրի ինքնագնահատականն այնքան ճիշտ չէր լինի, եթե նրան չգնահատեն հարազատները, մտերիմները, ընկերները: Պատկերն ամբողջական տեսք է ստանում, երբ ամենից առաջ քո ծնողներն են քեզ գնահատում, քանի որ նրանք են հաճախ տեսնում քո վիրավորանքը, անհաջողությունը, բողոքը կամ արդարացի պահանջները: Իզուր չի ասված. «Դառը ճշմարտությունն ավելին է, քան քաղցր սուտը»: Հետևաբար, պետք է ճշմարտությունն ընդունել այնպիսին, ինչպիսին այն կա և պետք է ամեն մեկն իրեն տեսնի կողքից: Իհարկե, կարևոր է, որ մարդն իրեն չքննադատի անտեղի՝ ավելացնելով բացասական հատկանիշները: Նա պետք է ունակ լինի գնահատելու իր արարքները:

Գրիգոր Ակջամն իր հետ կապված դժբախտ պատահարներից հետո չէր կարող լուրջ տագնապ չունենար: Քյերիմը դեռ մանկուց տիրապետում էր սպառնալիքների լեզվին: Նա միշտ էլ ինքն իրեն գերագնահատել էր: Ո՞րն էր այդ ամենի ծագման պատճառը: Գուցե չափազանց եսասե՞ր լինելը, թե չէ չէր ընտրի ոստիկանի համազգեստը: Սակայն յուրաքանչյուր երկրում ոստիկանության բաժինները ստեղծվում են մարդկանց պաշտպանելու համար: Այնինչ եղբայրն ընդգրկվելով ազգայնականների շարքերը, ասես «մեկ այլ վարպետության դասեր» էր քաղել: Այսինքն՝ թե ինչպես պիտի լինել ավելի անողոք ու անմարդկային: Ցավալին այն էր, որ իր պատճառով ծնողները ևս Քյերիմի հարվածի տակ ընկան: Ի՞նչ աներ: Չիմանա՞ր իր արմատների մասին: Կամ իմանալով ճշմարտությունը՝ վախենար դրա բացահայտումից: Գրիգորը որպես ըմբոստ արվեստագետ՝ չցանկացավ ապրել Թուրքիայում բնակվող տասնյակ հազարավոր ծպտյալ հայերի պես: Նա չմտածեց, որ իր ընկերների մի մասն էլ իրենից երես կթեքեր: Կարևորն այն էր, որ իր հանդիսականների թիվը դրանից չտուժեր: Մարդիկ իրեն սիրում են երգերի համար և ի վերջո իր բարեգործությունների համար: Նա քանի անգամ է օգնել մանկատներին, ծերանոցներին՝ համերգներից ստացված ողջ հասույթը կամ հասույթի մի մասը փոխանցելով նրանց:

Անտարակույս, տարաբնույթ մտատանջությունները չէին կարող չանհագստացնել մի երգչի ու երգահանի, ով ոչ միայն շուտով համերգով հանդես կգա Անկարայի լավագույն դահլիճներից մեկում, այլև իր նոր թողարկվող ձայնասկավառակի համար պիտի տրամադրվեր նոր երգեր ստեղծելու: Չէ՞ որ նրան կյանքում ամենից շատ ստեղծագործական աշխատանքն էր հոգեկան հաճույք պատճառում: Նա ոչ մեկի հետ այնպես չէր բացում իր սիրտը, արտահայտում իր թախիծն ու ուրախությունը, ինչպես հաղորդակցվում էր երգի հետ: Եվ իր երգացանկում հիմնականում իր հեղինակած երգերն էր կատարում:

Այդ օրը վաղ լուսաբացին նա լավ տրամադրությամբ արթնացավ և հագնելով սպորտային շորերը՝ իջավ այգի, հաճույթով ջրեց վարդերն ու ծառերը, այնուհետև մտավ տաք ջրավազանի մեջ՝ թարմանալու: Տան աշխատողը՝ Շաֆակը, դեռ չէր եկել: Դուրս գալով ջրից՝ նա իր համար

սուրճ պատրաստեց և նստեց ջրի ափին՝ այն ըմբռնելու: Նա նաև ստեղծագործելու ներքին պահանջ զգաց: Իր ներսում կուտակված տառապանքը, վիրավորանքը, ըմբոստությունը կարծես նորովի էին թանձրացել, միախառնվել՝ պատրաստ վերածվելու հետաքրքիր նոտաների: Նա մի կերպ իրեն զսպեց չնստելու դաշնամուրի առաջ: Անպայման պետք է գնար փաստաթղթերը վերականգնելու, ու ամենից առաջ անձնագիրը: Գրիգորը արագ հագնվեց ու մի տաքսի կանչեց: Միայն մի քանի ժամ իր գործերը կարգավորելուց հետո շտապ տուն վերադարձավ և փակվեց իր սենյակում՝ ստեղծագործելու: Ջգաց, որ իր ներսում ծնվող երգը իր ծննդավայրի մասին էր, ուր կուգենար, որ բոլոր ազգերը հաշտ ու համերաշխ ապրեին: Եվ ծնվեցին երգի առաջին տողերը:

Իմ մայր բնօրրան, երկիր հնամյա,
Փիրուզ ծովերով, լեռներով անմահ,
Փռվել ես չքնաղ Փոքր Ասիայում
Եվ հայտնի ես դու ամբողջ աշխարհում:

Քո աշխատասեր ազգերով բարի,
Դու պիտի ապրես բյուրավոր տարի,
Առանց դավերի, հոգս ու ցավերի,
Որ հույսն ու լույսդ երբեք չմարի...

Ահմեդի ու Ջեյնաբ խանումի համար կատարյալ ցնծության պահ էր, երբ դռան զանգը հնչեց և իրենց շեմին հայտնվեց Գրիգորի որդին՝ Մուստաֆան: Նա միջին չափսի ճամպուրակով էր: Մեղավոր հայացքով նայելով տատին ու պապին, հարցրեց.

-Ինձ նորից կընդունե՞ք, թե՞...

-Ներս արի՛...Մենք քեզ երկա՛ր ենք սպասել,- ջերմությամբ արձագանքեց Ահմեդը, նկատելով, որ թոռան աչքի տակը կապտած էր:

-Դու տնեցիների՞ հետ ես կռվել, թե՞ քո հասակակիցների:

-Մի՞թե ես վերջին ավազակն եմ, որ կռվեմ իմ հարազատների հետ, թեկուզ նրանց հետ տարածայնություններ ունենամ, պապի,- փոքր-ինչ նեղացած պատասխանեց Մուստաֆան:

-Դա արդեն շատ լավ է, որ հորեղբորդ նման չես մտածում,- չզիտես ինչու անսպասելիորեն դուրս թռավ Ահմեդի շուրթերից, և նա մի ակնթարթ զայրացավ իր անզգոնության համար:

Թոռը պապի շփոթվածությունը խառնեց անկեղծության հետ:

-Գիտեմ, որ նա հայրիկի հետ չի շփվում, բայց չէ՞ որ նրանք եղբայրներ են: Հետո ի՞նչ, որ հայրիկը ցանկացել է ընդունել իր ծագումը, իսկ նա՛ ոչ:

Ահմեդը զգաստացավ թոռան նման հայտարարությունից, քանի որ նախկինում նա այդպես չէր մտածում, թե չէ տնից չէր հեռանա մոր թելադրանքով:

-Քեզ հետ ինչ-որ բա՞ն է կատարվել,- պապը նկատեց, որ Մուստաֆան գլխի չընկավ հորեղբոր բուն հանցավոր դիրքը: Նա միայն ուզում էր պաշտպանվել:

-Այո՛, պապի՛: Հայրիկի պատճառով տղաների հետ եմ կռվել մեր համալսարանում: Ես պետք է հորս պաշտպանեի:

-Իհարկե, Մուստաֆա՛: Անկախ ամեն ինչից, նա քո հայրն է:

-Իսկ ո՞ր է նա,-հարցրեց թոռը, բայց հետո վերևի հարկից լսվեց հոր դաշնամուրի ձայնը՝ ժպտալով բերանը կիսաբաց արեց:-Ուրեմն նա տա՞նն է:

- Այո՛, կարող ես մտնել նրա մոտ, մեր աշխատակիցը քո իրերը սենյակդ կտանի,- ասաց Ջեյնաբ խանումը, որի ուրախությամբ չափ ու սահման չկար թոռան հայտնվելու պահից:

Նախքան հոր առանձնասենյակ մտնելը՝ Մուստաֆան կամաց թակեց նրա դուռը: Մտածեց, գուցե հարմար չէր մտնելը:

-Ո՞վ է: Մտե՛ք,- ներսից լսվեց հոր հուժկու ձայնը:

Դուռը կիսաբաց անելով՝ Մուստաֆան ասաց.

-Հայրիկ, բարև: Քեզ չե՞մ խանգարի, եթե ներս մտնեմ:

-Ի՞նչ ես ասում, որդի՛ս,-զվարթ տոնով բացականչեց Գրիգորը՝ բարձրանալով աթոռից՝ ողջագուրվեց նրա հետ:- Եկել ես մեզ տեսնելու՞, թե՞...,- նա չուզեց շարունակել միտքը, որը կարող էր ցավ պատճառել որդուն:

-Ո՛չ, հայրիկ, ես եկել եմ այստեղ մնալու և իմ իրերն եմ բերել հետս,- նա հասկացրեց հորը, որ իրենց միջև կայացած զրույցից հետո շատ բան է փոխվել:

Հայրը գոհ ժպտաց: Նա միշտ էլ հույսեր էր կապել որդու հետ, որ նա իրեն ի վերջո կհասկանա:

-Երևի քո այս սպասված ու ցանկալի վերադարձը քեզ համար թանկ նստեց,- հայրը նկատեց ծեծկռտուքի արդյունքում որդու դեմքին եղած դրոշմը:

-Չէի ասի: Ուղղակի ինձ ժամանակ էր պետք հասկանալու տեղի ունեցածը: Ես քո կողքին պիտի լինեմ: Չեմ թաքցնում քեզնից, հայրիկ, որ շատ եմ վախեցել, երբ մեքենադ պայթեցրել էին: Մի պահ, երբ մտածեցի, որ կարող էիր ողջ-ողջ այրվել մեքենայի մեջ, քիչ էր մնում շունչս փչեի:

Երգիչը սաստիկ հուզվեց որդու անկեղծ խոստովանությունից: Նորից հասկացավ, որ չէր սխալվել, որ նա էլ իր պես զգացմունքային է, քարսիրտ չէր Ռահիմեի նման:

-Արի՛, նստիր կողքես, որդի՛ս,- տեղավորվելով բազմոցի վրա՝ Գրիգորը ձեռքը դրեց որդու ուսին:- Ամենատերն ուզեց, որ ես ողջ մնամ: Պատմի՛ր, իմանամ, թե ո՞նց եմ քույրերդ, մայրդ:

-Լավ են, հայրիկ: Երբ ինձ ոստիկանական բաժին տարան, մայրիկը եկավ և Քյերիմ հորեղբորը խնդրեց, որ ինձ բաց թողնեն:

-Չեմ հավատում ականջներիս: Ի՞նչ էիր արել, որ քեզ քարշ էին տվել այնտեղ,- Գրիգորի դեմքը վայրկենապես մռայլվեց:

-Կռվել էի մեկի հետ՝ մեր համալսարանի բակում: Ինձ ծաղրում էր: Ինչպե՞ս մռութիմ չհասցնեի:

Հայրը մտախոհ սեղմեց շուրթերը:

-Հավանաբար իմ պատճառով էր...Ճի՞շտ կռահեցի:

Մուստաֆան գլխով դրական նշան արեց:

-Ապրեն, որ պաշտպանվել ես: Դու իմ որդին ես և իմ գենի շարունակողը: Մենք պետք է փոխվենք, որդիս: Պետք է ուղղենք մեր ծնողների, նախնիների թույլ տված սխալը: Մենք ինքներս մեզ պիտի փորձենք ճանաչել: Մեղավորներ պետք չէ փնտրել, քանի որ մի քանի սերունդ առաջ եղեռն է եղել: Նրանք ստիպված էին իսլամ ընդունել, որ ողջ մնան:

-Գիտեմ, հայրիկ: Մենք միասին կպայքարենք:

Հայրը ոգևորվեց որդու խոսքերից:

-Դու ինձ թևեր ես տալիս, Մուստաֆա: Այ, կտեսնես, ամեն բան իր տեղը կընկնի: Սա մեր բոլորիս հայրենիքն է և չպիտի վախենանք աստեղ ապրելու համար:

Ներս մտավ Շաֆակը և հրավիրեց նրանց ճաշի:

-Հիմա կգանք,-պատասխանեց Գրիգորը:

-Հայրիկ, քո մեղեդիներից մեկը նվագիր, ուզում եմ լսել,- տան ծառայողի հեռանալուց հետո կարոտով ասաց Մուստաֆան:

Գրիգոր Ակչամը սիրով նստեց դաշնամուրի առջև ու կատարեց որդու ցանկությունը: Նա հիմա բարձր տրամադրություն ուներ և պատրաստ էր կատարելու իր հարազատներից յուրաքանչյուրի ցանկությունը:

Այդ օրը Մուստաֆայի վերադարձը հաճելի տոնի վերածվեց բոլորի համար:

Հորդառատ անձրև էր տեղում: Մոխրագույն ամպերը թանձր շղարշով ծածկել էին երկինքը: Երբեմն մուգ երկինքը պատռում էին ոսկեգույն կայծակը, խլացուցիչ դղրոյունով ամպրոպը:

Երանուհի Սվաճյանը, որ մի ակնթարթ կանգնել էր լուսամուտի մոտ, աշնանային այդ եղանակից անհանգստություն զգաց: Ակամայից հայացքն ընկավ պատի ժամացույցին: Ժամը վեցն էր, թեև մռայլ երկնքի պատճառով թվում էր, թե ուշ երեկո էր: Նա սպասում էր Գրիգոր Ակչամին, որի մասին բարեխոսել էր Արա Գյուլերը: Նա երգչին հեռակա գիտեր նրա երգերից: Գրիգորը խոստացել էր օրվա ավարտին այցելել իրեն՝ պայմանավորվելու մասնավոր պարապմունքների համար: Երանուհին տվել էր իր համաձայնությունը և հիմա սպասում էր նրան: Սակայն ժամանակ չկորցնելու համար նա նորից նստեց իր գրասեղանի առջև՝ ստուգելու աշակերտների գրավոր աշխատանքները:

Դրսից դեռ լսվում էր ամպրոպի ձայնը, իսկ անձրևը միապաղաղ շարունակում էր ծեծել տան լուսամուտները:

Երանուհին աշխատում էր Ստամբուլի Մխիթարյան վարժարանում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: Նա միջահասակ էր, գեղեցիկ կազմվածքով: Դեմքը կլոր էր՝ թեթևակի վարդագույն այտերով: Քիթը փոքր էր, աչքերը շագանակագույն էին, մազերը

ալիքածն էր՝ մուգ բալագույն երանգի: Ձայնը նուրբ էր, ոչ բարձր: Խոսում էր ոչ շտապողականությամբ: Ձախ այտին ընդգծված փոսիկ կար, որն ընդգծում էր նրա կանացիությունը, երբ ժպտում կամ զարմանք էր արտահայտում:

Երանուհին ապրում էր մոր հետ երեք սենյականոց բնակարանում: Հայրը հինգ տարի առաջ էր մահացել: Մայրը նույնպես մանկավարժ էր, որը մեկ տարի առաջ էր անցել թոշակի: Նա ուներ քույր, որն ամուսնացած էր և բնակվում էր Ստամբուլում, նաև եղբայր, որն ապրում էր Գերմանիայում՝ Քյոլն քաղաքում:

Ջարմանալիորեն աղջկա անձնական կյանքը չէր դասավորվել: Պատճառն այն էր, որ նա մի անգամ խոր հիասթափություն էր ապրել և այլևս ցանկություն չէր ունեցել հանդիպելու որևէ տղամարդու հետ: Տարիներ առաջ սիրել էր մեկին, որն իբրև ամուսնալուծված էր, բայց որոշ ժամանակ անց պարզվել էր, որ նա իրականում ամուսնացած էր, կին ու երեխաներ ուներ: Այդ խաբեբայից ոչ միայն ազատվել էր, այլև ծանր էր տարել բաժանումը: Նորից սիրելու ու տառապելու համար թերևս պատրաստ չէր:

Հնչեց դռան զանգը: Երանուհին արագ շարժվեց տեղից և բացեց դուռը: Գրիգոր Ակչամը եկել էր շքեղ ծաղկեփնջով և շոկոլադի գեղեցիկ տուփով:

-Համեցե՞ք,- Երանուհին սպասված հյուրին ներս հրավիրեց:-Շնորհակալ եմ ծաղիկների համար: Վարդերն իմ ամենասիրած ծաղիկներն են:

Ուսուցչուհին երգչին ուղեկցեց հյուրասենյակ, որտեղ մայրը հեռուստացույց էր դիտում:

-Ծանոթացե՞ք, մայրս է, տիկին Վարդիթերը:

-Ուրախ եմ ծանոթության համար,- ասաց Գրիգորը՝ տեղավորվելով բազկաթոռին:

Մինչ Երանուհին վարդերը ծաղկամանի մեջ դնելու համար գնաց խոհանոց, երգիչը հասցրեց զննել սենյակը: Տան պատերից երևում էր, որ բնակարանը վաղուց չէր վերանորոգվել: Կահույքը նույնպես հին էր՝ անպաճույճ ու մաքուր ծածկոցներով: Այնինչ մեծ գրապահարան կար սենյակում, որը վկայում էր տնեցիների ընթերցանության հանդեպ սիրո մասին: Ու չէր սխալվում: Երանուհու հայրն էլ թեև ինժեներ էր գործարանում, բայց հաճախ երեկոներին հանգստանում էր ինչ-որ գիրք ընթերցելիս:

-Սո՞ւրձ, թե՞ թեյ: Ի՞նչ հյուրասիրեմ ձեզ, -ծաղկամանը ձեռքին ներս մտնելով՝ հարցրեց Երանուհին:

-Սուրձ հաճույքով կըմպեմ,- պատասխանեց Գրիգորը:

-Մայրի՞կ, իսկ դու ի՞նչ կուզենայիր,-աղջիկն այս անգամ դիմեց մորը:

-Ես էլ սուրձ կխմեմ:

Երանուհին նորից գնաց խոհանոց:

-Մենք ձեր երգերը շատ ենք լսել հեռուստացույցով,- տիկին Վարդիթերը դիմեց հյուրին: Ամուսինս ու որդիս էլ ձեզ հավանում էին:

-Իսկ հիմա որտե՞ղ են նրանք,- Գրիգորը զգաց, որ տանտիրուհին անցյալ ժամանակով էր խոսում:

-Անուսինս այլևս չկա, իսկ որդիս բնակվում է Քյոլնում:

Մի քիչ դադար տալուց հետո տանտիրուհին շարունակեց.

-Ի դեպ, լրատվամիջոցներից իմացանք, որ դուք վերադարձել եք Ձեր ինքնությանը, հայկական արմատներին և փոխել եք Ձեր անունը,- բազմանշանակ ժպտաց տիկին Վարդիթեռը:

-Այո: Ես պարտավոր էի այդպես վարվել, այլապես հանգիստ ապրել չէի կարող:

Հայտնվեց Երանուհին: Սրճի հետ բերել էր միրգ ու թխվածք:

-Խնդրում եմ, մոտեցե՛ք սեղանին,- դիմեց նա մորը և Գրիգորին:

-Սակայն հայերի կյանքը Թուրքիայում միշտ վտանգված կլինի: Ինչքան էլ համարենք, որ սա մեր երկիրն է, մեր նախնիների հայրենիքը, միևնույն է, Օսմանյան Թուրքիայի հետնորդներն են մեզ կառավարում: Լսե՞լ էիք, թե ինչպես բոլորովին վերջերս թուրք ազգայնականների թիրախում է հայտնվել նաև Մխիթարյան վարժարանը, որտեղ աղջիկս է աշխատում ,- իր միտքը շարունակեց տիկին Վարդիթեռը:

-Ո՛չ, ի՞նչ է կատարվել այնտեղ,- զարմացած հարցրեց Սայիդը:

-Ազգայնականները վարժարանի պատին թողել են հետևյալ գրությունը. «Մի գիշեր անսպասելի Ղարաբաղում կհայտնվեք»: Այսինքն՝ իբրև այնտեղ հայերին շուտով կկոտորեն, և հերթն այստեղի հայերին էլ կհասնի:

-Կարծում եմ, դա երբեք չի լինի, քանի որ հայկական փոքրիկ այդ լեռնաշխարհում ամենաքաջ ու անվախ հայերն են բնակվում,- քմծիծաղեց երգիչը:

-Մայրի՛կ, ի՞նչ պատահեց քեզ հետ: Փորձում ես վախեցնե՞լ Սայիդին, թե՞ որպես պատմության մասնագետ դարձյալ քո դրույթներն ես ուզում առաջ քաշել,- մորը մեղմ ժպիտով ասաց Երանուհին:

Գրիգորն զգաց, որ երբ նայում էր աղջկան, ինչ-որ լուսավոր ու ջերմ զգացողությամբ էր պարուրվում հոգին: Ինչի՞ց էր դա: Ինքն էլ չհասկացավ: Գուցե պատճառը հայկական այն միջավայրն էր, որը ձգում էր իրեն արյան կանչով:

-Մայրդ տարօրինակ ոչինչ չի ասում: Նա իրավացի է: Քանի անգամ եմ ես մասնակցել բողոքի ցույցերին, որ ի վերջո ժամանակն է, որ Թուրքիան ընդունի Հայոց Ցեղասպանության փաստը: Եղեռնի 100-ամյա տարելիցն էլ չօգնեց: Ընդհակառակը, անմեղ միլիոնավոր զոհերի հիշատակի օրը Չանակքալեի ճակատամարտի օրը նշեցին՝ խրախճանքներ կազմակերպելով,- ցավով ավելացրեց Գրիգոր Ակչամը:

-Այնպես որ, ծպտյալ հայերը պետք է ի վերջո բացահայտվեն, այլապես իրենց ինքնության համար չեն կարող պայքարել: Մահմեդական հայեր չկան, ինչպես նաև քրիստոնյա թուրքեր: Չկա աշխարհում նման երևույթ: Կան ընդամենը նրանց սերունդները, ովքեր ժամանակին հայ են եղել, իսկ հետո մահմեդականություն ընդունել ու թուրքացել են,- ասաց տիկին Վարդիթեռը՝ համոզված լինելով, որ Գրիգորն իրեն լավ կհասկանա:

-Իրականում հայկական մշակույթի կրողը հայն է: Իսկ հայկական ողջ մշակույթը տոգորված է ազատագրական ոգով ու գաղափարախոսությամբ, առանց որոնց չկա հայ գրականություն, պատմագրություն, վիպագրություն, բանահյուսություն, հայ երաժշտություն: Բայց մահմեդականություն ընդունելով՝ հայը ոչ միայն հերքում է ազատագրական պայքարի ոգին, այլև համաձայնվում դառնալ թշնամու՝ ընդմիշտ ստրկացնել փորձող մահմեդական տերությունների գաղափարախոսության կրողը,- սկսված խոսակցությանը խառնվեց Երանուհին:

Գրիգոր Ակջամը ուշի-ուշով լսելով մոր և աղջկա հայրենասիրական կոչերի հիշեցնող ելույթները, իրեն հոգեպես բավարարված զգաց: Չէ՞ որ ինքը տարիներ շարունակ ցանկացել է, որ իր հայացքները կիսի կինը՝ Ռահիմեն, դառնա իր գաղափարակիցը: Մինչդեռ ոչինչ չստացվեց, և նա օրեցօր իր համար ավելի օտար դարձավ: Ընդհակառակը, կինը միշտ բողոքում էր, ընդդիմանում, երբ ինքը ցույցերի էր մասնակցում կամ ըմբոստ երգերի շարք ստեղծում:

-Որտեղի՞ց են ձեր արմատները,- հարցրեց Գրիգորը՝ նայելով մերթ Երանուհուն, մերթ նրա մորը:

-Ուրֆայից,- պատասխանեց Երանուհին:
- Այնպես են ուզում հայերենին տիրապետել, որ հայոց պատմությունը բնագրով կարդամ, - ոգևորվեց Գրիգորը:

-Իսկ դու գիտե՞ս, որ այն թուրքերենը, որով դու խոսում ես ու գրում, ստեղծել է Հակոբ Մարթայանը, ում Աթաթուրքն ասում էր Հակոբ Դիլաչար:

-Ի՞նչ եք ասում,- զարմացավ Գրիգորը:-Երևում է, որ ես ձեզնից դեռ շատ գաղտնիքներ կիմանամ:

-Իսկ դուք քանի՞ տարվա մանկավարժական փորձ ունեք:
-Ընդամենը վեց-յոթ տարի է, ինչ աշխատում եմ: Դա կա՞պ ունի ձեզ հետ պարապելու հետ:
-Ո՛չ, ինձ ճիշտ չհասկացաք: Հենց այնպես հարցրի,- Գրիգորը քիչ էր մնում խոստովաներ, որ, ընդհակառակը, ուրախ էր, որ Երանուհու նման ջերմ ու հմայիչ աղջիկն իր հետ ստիպված կլինի չարչարվել:

Երանուհու զարմանքը վերածվեց պայծառ ժպիտի: Նրա աչքերը փայլեցին թարմ վարդի թերթերի պես: Գրիգորը նկատեց, որ նա շատ վարակիչ ու հանելուկային ժպիտ ուներ, որը հաճախ թրթռում էր դեմքին: Նա մտածեց. «Ո՞վ գիտե, գուցե Երանուհու հետ հաղորդակցվելու ակնթարթը իմ կյանքի երջանիկ ակնթարթներից է: Չէ՞ որ երջանիկ լինելու համար մարդուն շատ բան հարկավոր չէ: Նստել քեզ հաճելի մեկի կողքին, սուրճ կամ թեյ խմել, միայն թե նա քեզ հասկանա, ուրախանա քո այցով ու քո հեռանալուց հետո քեզ հիշի: Արդյոք ի՞նչ կմտածի Երանուհին իմ մասին»:

-Ինչ-որ բան այն չէ՞,- հարցրեց Երանուհին, տեսնելով, որ Գրիգորը մտքերի մեջ խորասուզվեց:

-Կուզենայի իմանալ, թե Ստամբուլում քանի՞ հայկական դպրոց կա և որքա՞ն է այնտեղ աշակերտների թիվը,-հանկածակիի գալով՝ գրույցի թեման փոխեց երգիչը:

-Մեր քաղաքում 17 հայկական վարժարան կա, որտեղ սովորում է երեք հազար աշակերտ և այդ դպրոցների տնօրեններն ու փոխտնօրենները թուրքեր են: Այնպես որ, այդ դպրոցներ հաճախելու համար էլ աշակերտները ստիպված են ապացուցել, որ հայ են: Աշակերտների թիվն էլ տարեցտարի նվազում է: Ամենազխաավոր պատճառը չափազանց թանկ վարձն է: Իսկ Թուրքիայի տարբեր շրջաններում ապրող հայության համար չկան հայերենի ուսուցիչներ, ոչ էլ վարդապետներ: Միակ դրական տեղաշարժը թերևս վերջին տարիներին Տիգրանակերտում, Մուշում և Դերսիմում բացված հայերեն կարճատև դասընթացներն են:

Գրիգոր Ակչամը նկատելիորեն թախծեց: Նա մտածեց, որ ազգային փոքրամասնություններին տրված իրավունքներում լեզվի ուսուցման մեջ էլ խնդիրներ կան: Հասկանալի էր, որ հայերը Թուրքիայում առհասարակ այնպիսի հզոր լծակներ չունեն, որ կարողանան ազդել ինչպես գործող իշխանությունների, այնպես էլ օրենքների մեջ տեղ գտած սխալների վրա:

-Ի՞նչ պատահեց Ձեզ հետ,- մտահոգվեց Երանուհին՝ նայելով երգչի մտախոհ դեմքին:

-Մտածեցի, որ հայերի համար թուրքական իշխանությունները միշտ էլ օտար կմնան, - անկեղծորեն խոստովանեց Գրիգորը:

-Ցավոք, դա այդպես է, բայց արի Ձեր մասին խոսենք: Ասեմ, որ որևէ լեզու սովորելու համար երբեք էլ ուշ չէ, եթե մարդ մեծ ցանկություն ունի: Մենք կարող ենք պարապել և՛ ինձ մոտ, և՛ Ձեր մոտ, եթե հարմար կգտնեք,- խրախուսական տոնով ասաց Երանուհին:

-Իհարկե,- արձագանքեց երգիչը, որին դուր եկավ երիտասարդ մանկավարժի առաջարկը:- Գուցե այսօր առաջին դասը պարապենք: Ես պատրաստ եմ,-սուրճի բաժակը մի կողմ դնելով՝ ոտքի կանգնեց Գրիգորը:

-Գնանք իմ սենյակ,- ի պատասխան ասաց Երանուհին՝ Գրիգորին ուղեկցելով իր աշխատասենյակը:

Այդ օրը Գրիգոր Ակչամը մի քանի ժամով մոռացավ իր հոգսերի ու անելիքների մասին: Երանուհու տված առաջին դասը ինքը որպես հոգեթերապևտի մոտ առաջին այցելություն համարեց:

Պատիվը և խիղճը Ահմեդին ուղեկցել են ողջ կյանքում: Ու եթե ոմանց համար բարոյական այդ հասկացությունները լոկ դատարկ հնչյուններ էին, իր համար, ընդհակառակը, դրանք արժանապատիվ ապրելու պարտադիր պայմաններն էին: Ըստ նրա, այդ հատկանիշները պիտի ունենա յուրաքանչյուր մարդ արարած: Բայց արդյո՞ք դա այդպես էր: Մտածելով իր երկու որդիների մասին, նա կարծես մշտապես ականատես է եղել չարի ու բարու հակադիր պայքարին: Դեռ մանկուց էլ կրտսեր որդին՝ Գրիգորը, օգնում էր ընկերներին, կապված էր

ծնողների հետ, իսկ Քյերիմը կռվարար էր, անհաշտ: Այդպես պահում էր իրեն տանը, փողոցում, դպրոցում: Տարիների հետ նրա մոտ եղած անհաշտությունը շրջապատի հանդեպ ավելի խորացավ: Ահմեդը մտածեց. «Երանի՛ մեր կռիվը հայրերի ու որդիների բախում լիներ: Այսինքն՝ նրանք իրենց հայացքներով տարբերվեին մեզնից, բայց ոչ վատ վարքագծով կամ թշնամական վերաբերմունքով»: Ցավոք, Քյերիմը դարձել էր եղբոր համար թիվ մեկ թշնամին, որին անպայման ձգտում էր ոչնչացնել: Եվ նրա ատելությունը գալիս էր ռասիստական մտածողությունից:

Ամբողջ գիշեր Ահմեդը համարյա թե չկարողացավ աչքը փակել: Անկողնում այնքան շուռումուռ եկավ անհանգիստ մտքերից, մինչև որոշեց վեր կենալ: Դուրս գալով պատշգամբ՝ նրան խառնիճաղանջ մտքերը չցրեցին անգամ Ստամբուլն իր գիրկն առած ծովերից եկող թեթևակի զովությունը, որն ուրիշ ժամանակ խաղաղությամբ էր պարուրում հոգին: Պատճառը գուցե մի կարճ ակնթարթին գիշերը տեսած երազն էր: Իբրև հանդիպել էր ծնողների հետ, տեսել էր տատին ու պապին և համարձակվել էր բողբոջել իր վիճակից: Ըմբոստացել էր, թե ինչու էին նրանք իր մեջ վախի զգացումը մշտապես արթուն պահել, որ մոռանա՞ իր ինքնության մասին: Հիմա էլ ինքն իրեն որպես մատնիչ էր զգում՝ Քյերիմի պատճառով: Նա մտածեց, արդյո՞ք իր այդ քայլով իրենից հեռու վանեց վտանգը կամ դրա դեմն առավ: Ի՞նչ եղավ Քյերիմի հետ: Նրա արարքների համար արդյո՞ք ոստիկանապետը նրան բանտարկել է, թե՞ ազատել է աշխատանքից: Որպես հայր հոգու խորքում ինքը չէր ուզենա, որ իր պատճառով որդին տուժեր: Ահա ինչու երազում կարծես թե կռվեց իր ծնողների հետ, ովքեր իրեն որպես մահմեդական են մեծացրել: Մինչդեռ եթե քրիստոնյայի պես ապրեր, իր որդիներն իրար հետ չէին գժտվի: Նա միմիայն անիմաստ եզրակացություններ էր անում: Մռայլ էր նաև այն պատճառով, որ իր քայլի մասին նույնիսկ չպատմեց կնոջը, վախենալով, որ իրեն կհանդիմաներ: Սակայն նա լարված էր ու ամեն պահ վատ լուրի էր սպասում:

Չիբուխը ծխելով՝ Ահմեդը դանդաղ քայլերով գնաց մզկիթ՝ աղոթելու:

Ջեյնաբ խանումը, երբ արթնացավ ու գնաց խոհանոց, զարմացավ, որ ամուսինն այնտեղ չէր: Պատահում էր, երբ նա իրենից ավելի վաղ էր արթնանում, թեյնիկը տաքացնում էր ու իրեն էր սպասում: Բայց թեյնիկը սառն էր: Դա նշանակում էր, որ Ահմեդը դուրս էր եկել տնից առանց նախաձառելու: Շաֆակն էլ չէր եկել:

Գրիգորն էլ շուտ արթնացավ և ոտքի վրա սուրճ խմելով՝ գնաց: Նա պիտի իր նվազախմբի տղաների հետ մեկնեի Անկարա: Նրա որդին՝ Մուստաֆան, ավելի ուշ արթնացավ: Նա լվացվեց ու տատի հետ նախաձաշում էր, երբ դռան զանգը հնչեց: Եվ քանի որ տան աշխատակիցն արդեն եկել էր, նա էլ բացեց դուռը: Անսպասելիորեն նրանց մոտ ներխուժեց Քյերիմը: Նա այնպիսի կատաղած տեսք ուներ, որ մայրը հագիվ կարողացավ թուրը կուլ տալ վախից: Որդուն երբեք այդքան գազազած չէր տեսել:

-Հիմա ամուսիներով խաղաղվեցի՞ք, երբ ինձ գործազուրկ դարձրիք,- առանց բարևելու ու առանց նախաբանի գոռաց նա:

-Ես քեզ չեմ հասկանում,-զարմացավ մայրը: Ինչո՞ւմն ես մեղադրում մեզ:

-Ձեզնից բացի ոչ ոք չգիտեր, որ ես էի ուզում Սայիդին պատժել:

Մուստաֆայի աչքերը միանգամից չռվեցին: Նա սարսափած հայացքով նայեց հորեղբորը:

-Ուրեմն դո՞ւ ես հորս վրա մահափորձ կատարել: Հորեղբայր, դու իսկական հրեշ ես:

-Հրեշը դու ես, ավագակ: Իզուր էլ քեզ ազատեցի մեր բաժնից: Ուրախացա՞ր, որ հայրդ արմատներով հայ է: Հա՛-հա՛-հա՛,- ու Քյերիմը ցինիկաբար ծափ զարկեց:

- Դու նույնպես հայ ես , - զայրացած շարունակեց Մուստաֆան:

-Հիմա կջարդեմ գլուխդ, եթե բերանդ չփակես,- Քյերիմը բռունցք արած ուզեց մոտենալ Մուստաֆային, երբ մայրը փակեց նրա ճամփան: Գազազած որդին մորն այնպես հրեց, որ նա երեսնիվայր փռվեց հատակին:

Այդ ընթացքում եկավ Ահմեդը: Լարված տեսարանից իսկույն Լեթ հասկացավ, որ առավոտյան անհանգստությունն իզուր չէր:

-Քեզ կարգի հրավիրի՛ր: Մի՛ մոռացիր, Քյերիմ, որ դու քո հայրական տանն ես, ոչ թե ոստիկանական բաժնում: Ինչո՞ւ ես մորդ հրել: Ի՞նչ է ուզածդ:

Քյերիմը շրջվեց և հորը տեսնելով՝ զայրացած ասաց.

-Ես այդպես էլ գիտեի, որ դու ես ինձ մատնել: Քեզ հետ եմ հեռախոսագրույց ունեցել: Դո՞ւ ես ոստիկանապետի մոտ գնացել:

-Ահմեդ, որդուդ հասկացրո՞ւ, որ մենք ոչնչից տեղյակ չենք,- ամուսնուն դիմեց Ջեյնաբ խանումը, որը հատակից բարձրացել էր Շաֆակի օգնությամբ:

-Մեկը պետք է նրան կանգնեցնե՞ր չարագործություններից, թե՞ չէ,- նյարդայնացած պատասխանեց ամուսինը:

-Լսեցի՞ր, մայրիկ, որ ես չեմ սխալվել: Երևի դու չգիտեիր, բայց նա է ինձ մատնել,- գոռաց Քյերիմը՝ մատը թափահարելով հոր վրա:

-Չայնդ մի տոն իջեցրո՞ւ: Ո՞վ է քեզ թույլ տվել այդպես խոսես մեզ հետ: Թե՞ կարծում էիր, որ քո չար արարքների համար դափնեպսակ պիտի ստանայիր,-սաստեց նրան հայրը:

-Ո՞ւր է քո սիրելի որդին՝ Սայիդը: Թե՞ իմ ձայնից վախեցած՝ դուրս չի գալիս իր աշխատասենյակից: Մի՞թե մեր գոռոցները վերևի հարկում չեն լսվում,- կատաղած շարունակեց Քյերիմը:

-Նա տանը չէ: Ի՞նչ ես ուզում նրանից: Մինչև ե՞րբ ես եղբորդ հետապնդելու,- հարցրեց Ջեյնաբ խանումը՝ վախից դողացող ձայնով:

-Մի՛շտ: Այնքան ժամանակ, մինչև նպատակիս կհասնեմ: Ես ձեզ բոլորիդ ատում եմ: Դուք ինձ համար այսօրվանից մեռած մարդիկ եք: Ես ո՛չ ծնողներ ունեմ, ո՛չ էլ եղբայր,- ատելությունից վառվող աչքերով ասաց Քյերիմը:

-Դու ցույց տվեցիր քո իսկական դեմքը: Ապրի՛ր քեզ համար: Մեզ մեռած համարի՛ր և այլևս այստեղ ոտք չդնես,- ի պատասխան ասաց հայրը:

-Այդպես էլ կանեն,- Քյերիմը մոտենալով խոհանոցի սեղանին՝ սփռոցը ուժով դեպի իրեն քաշեց և սպասքը ջարդելով՝ վայրի գազանի պես մոլեգնած հեռացավ:

Ահմեդը նույնպես կատաղությունից սպրդնել էր: Նա փռվեց բազկաթռռին և խնդրեց կնոջը սրտի կաթիլներ բերել: Մինչ Ջեյնաբ խանումը կբերեր դեղը, ամուսինն ուշաթափվեց: Մուստաֆան շտապօգնություն կանչեց: Նրան տեղափոխեցին հիվանդանոց:

Ահմեդը սրտի կաթված էր ստացել:

Մուրադ Ազիզօղլու համար անտանելի էին թվում բանտի այն պայմանները, որտեղ ստիպված էր մնալ, թեկուզ լավ էր հասկանում, որ բոլոր բանտերում էլ համարյա նույն մթնոլորտն էր, բարձիթողի վիճակը: Բանտում անփող, կիսաքաղց մարդիկ ավելի շատ նմանվում էին կենդանաբանական այգում վանդակների մեջ գտնվող գազաններին: Բայց եթե այնտեղ վանդակում մեկ -երկու կենդանի էին պահվում, բանտում նույն խցում պահվում էին տասից- քսանից ավելի բանտարկյալներ: Թեկուզ Թուրքիայի ամենադաժան բանտը համարվում էր Դիարբեքիրի բանտը, ուր կալանավորները ոչ միայն ֆիզիկական, այլև հոգեկան խոշտանգումների էին ենթարկվում: Սակայն այդտեղ դրությունը մի քիչ այլ էր: Իրենց բանտախցում հաճախակի էին դարձել ջրի անջատումները, ինչը դժվարացնում էր տարրական հիգիենայի պահպանումը: Օդի մեջ տարածված գաղջ հոտից, թղթախաղով զբաղված բանտարկյալների աղմկոտ ու հայիոյանքներով ուղեկցվող վիճաբանություններից նրա գլուխն այնպես էր ուռչում, որ թվում էր, թե ուղեղում մեղվի պարս էր անվերջ բզզում: Եվ նա տխուր մտածեց. «Հավանաբար մարդ երկու դեպքում կարող է խելագար վիճակի հասնել. մեկ ծայրահեղ մեկուսացման մեջ, մեկ անասելի աղմուկի պայմաններում»:

Մուրադ Ազիզօղլին բանտ ընկնելու առաջին օրերին զգաց բանտարկյալների վերաբերմունքն իր հանդեպ: Նրանց մի մասն իմանալով, թե ինչի համար էին իրեն ձերբակալել, խղճում էր իրեն, քանի որ որևէ հանցանք չէր գործել, մի մասն արհամարհանքով էր վերաբերվում լոկ այն պատճառով, որ իր տպագրված գրքում Եղեռն ապրած հայ ականատեսների պատմություններն էր գրի առել: Կային այնպիսիները, ովքեր պաշտպանում էին նրան, որովհետև ըստ նրանց կարծիքի՝ գրողը կամ լրագրողը անվնաս մարդ է, և որ նրան իր գրածների համար չպիտի փակել ձաղերի ետևում: Այդպես էր մտածում նաև բանտախցի «պարագլուխը», որը սպանության մեջ էր մեղադրվում: Պաշտպանելով գրողին, թույլ չէր տալիս, որ որևէ մեկը նրան ծաղրեր կամ կոպտեր: Գուցե պատճառներից մեկն այն էր, որ նրա հայրը եղել է մանկավարժ ու ինքը մանկուց հարգում էր բոլոր նրանց, ովքեր գրքեր էին ստեղծում:

Մուրադ Ազիզօղլին մտածումներն էր, երբ բանտային հսկիչն իրեն կանչեց: Նրան սպասում էր փաստաբան Ֆիքրեթը, որը պատկառելի արտաքինով հիսունն անց տղամարդ էր:

-Ինչպե՞ս է վիճակդ: Դիմանո՞ւմ ես բանտային պայմաններին, -զսպված առողջանությամբ հարցրեց իրավապաշտպանը:

-Դիմանում եմ, թեկուզ մինչև դատը կուզենայի առանձին բանտախուց տեղափոխվել:

-Ես խոսել եմ բանտապետի հետ: Հետո էլ մի խումբ մտավորականներ նամակով խնդրել են քննչական մարմիններին միջնորդել, որ գուցե քեզ տեղափոխեն Ալիադայի բանտ, որտեղ պայմանները համեմատաբար լավ են:

Մուրադ Ազիզովին ոչինչ չպատասխանեց:

-Ես ամեն ինչ կանեմ, որպեսզի դատարանը վճիռ կայացնի, որ քեզ հետո Թորբալըի բաց բանտ ուղարկեն: Գիտե՞ս այնտեղ երբեմն երեք-չորս օրով տուն են բաց թողնում: Լավ, դա հետո կլինի, իսկ քեզ քննիչը նորից չի՞ կանչել:

-Այո՛: Նորից նա հարցաքննել է ինձ: Բայց ես նրան լրացուցիչ ոչինչ չասացի: Որպես գրող գիրք եմ գրել, փաստեր եմ հավաքել: Դեռ առգրավել են գրքերս, դրանք վերադարձնելու դիմումներս անպատասխան են մնացել: Ես որևէ հանցանք չեմ գործել:

-Հասկանալի է, բայց դու հավաքել ես այնպիսի նյութեր, որոնք դեմ են մեր իշխանությունների մոտեցմանն այդ խնդրին:

-Ես գեղարվեստական գիրք չեմ գրել, որ հորինեմ դեպքերը:

-Ինքդ էլ գիտես, որ քո հավաքած փաստերով քննադատում ես թուրքական իշխանություններին: Մի՞թե չէիր մտածում, որ քեզ կբանտարկեն դրա համար: Օհան Փամուկի օրինակը մի՞թե քեզ համար քիչ էր: Հիմա էլ փախած է, ապրում է ԱՄՆ-ում: Եթե միջազգային կազմակերպությունները չպաշտպանեին նրան, վաղուց մեր ազգայնականները նրա վերջը կտային կամ էլ լավագույն դեպքում կբանտարկեին:

-Բայց ինչո՞ւ միայն Օրհան Փամուկը,-ասաց Ազիզովին,-թուրք գրող Քեմալ Յալչընն էլ իր քաղաքական հայացքների համար մի քանի անգամ բանտարկվել է և ազատվելուց հետո շուրջ 15 տարի է, ինչ տեղափոխվել է Գերմանիա: Նա իր մի քանի գրքերում/«Հոգիս քեզնով կխայտա», «Ողջ մնացածները»/ անդրադարձել է Հայոց Ցեղասպանության հետևանքով բռնի իսլամացած և ծպտյալ հայերի թեմային: Եթե մենք՝ մտավորականներս, այդ մասին չբարձրաձայնենք, ապա հեռու կանգնած կլինենք պատմական ճշմարտությունից: Եվ վերջապես Օսմանյան Թուրքիայի կառավարությունն է պաշտոնապես իրագործել հայոց ցեղասպանությունը: 100 տարի է անցել, մերոնք շարունակում են ժխտել: Մինչև ե՞րբ...

-Այդպես չբողոքես դատարանում: Քո կարծիքը քո մեջ պահիր: Ինքդ մահմեդական ես, ապրում ես Թուրքիայում՝ քո հայրենիքում և լավ ես հասկանում, թե մինչև ուր կարող են հասնել խոսքի ազատության սահմանները: Նաև քո օգտին չէ Հայաստան այցդ, գրքերիդ պրոպագանդան այնտեղ:

- Չէի ցանկանա, որ մեր ժողովուրդները դարերով իրար հետ որպես թշնամիներ լինեին:

Իրավապաշտպան Ֆիքրեթը տեսնելով, թե ինչպես է իր հաճախորդը ատամներով պաշտպանում հայերի իրավունքները և պահանջները, խոհեմաբար ու խորամանկորեն ժպտաց.

-Հայերը, հարգելի լրագրող և գրող, մեզ մոտ Թուրքիայում դժգոհելու առիթ չունեն: Ընդհակառակը, Հայաստանից նրանք մեզ մոտ են գալիս աշխատելու: Ո՞վ է նրանց հալածում:

-Դրանք մասնավոր դեպքեր են: Պարոն Ֆիքրեթ, իմ գիրքը ես տարածել եմ նաև մեզ մոտ՝ Թուրքիայում: Այն թուրքերեն լեզվով է գրված: Հենց առաջին հերթին մեր ժողովուրդը պիտի իմանա այս ամենի մասին: Եթե Թուրքիայի քաղաքացիական հասարակությունը բավականին ուժեղ գտնվի, ճանաչի Ցեղասպանությունը և աշխատի այդ ուղղությամբ, ապա ցանկացած կառավարություն ստիպված է լինելու նահանջել:

Իրավապաշտպանը հասկացավ, թե ինչքան դժվար է խելամիտ մարդուն հակառակ դիրքորոշումը թելադրելը, առավել ևս՝ գրողին ու լրագրողին:

-Ավելի լավ կլինի երկուսով հեռու մնանք քաղաքականությունից, - առաջարկեց Ֆիքրեթը: - Դու ինձ ասա՛, այստեղ՝ բանտում, քեզ ահաբեկելու փորձեր արվե՞լ են:

-Ո՛չ: Ինձ պաշտպանում է բանտախցի «շեֆը»: Բայց ես հո հայրենիքի դավաճան չե՞մ: Ինչո՞ւ պիտի իմ հասցեին սպառնալիքներ հնչեցվեն, - Ազիզօղլին կարծես թե թեթևակի զայրացավ:

-Այդպես հաստատապես մի՛ խոսիր: Պետք է ամեն դեպքում զգուշանալ մարդկանց պահվածքից, գռեհիկ ու հրահրող խոսքերից: Համբերատար եղի՛ր, մինչև քեզ կազատենք այստեղից:

Տեսակցության համար նախատեսված տասնհինգ-քսան րոպեն լրացել էր: Ներս մտավ բանտային հսկիչը և Մուրադ Ազիզօղլուն տարավ: Ֆիքրեթը հրաժեշտ տալով իր պաշտպանյալին, որոշեց անպայման միջոցներ ձեռնարկել նրան ազատ արձակելու համար:

Մի քանի օր շարունակ Ահմեդը մնաց վերակենդանացման բաժանմունքում: Այդ ընթացքում Ջեյնաբ խանումի մոտից գրեթե չէր հեռանում թռչը՝ Մուստաֆան: Նա տատին խնամում էր: Տաք թեյ էր բերում ճաշարանից կամ ստիպում էր մի կերպ որևէ բան ուտել, երբ տան աշխատակիցը՝ Շաֆակը, ինչ-որ կերակուր էր տանը պատրաստում ու բերում: Միայն Մուստաֆայի համառության շնորհիվ խեղճ կինը գիշերում էր տանը, ոչ թե հիվանդանոցում: Եվ առավոտյան վաղ լուսաբացին երկուսով հայտնվում էին հիվանդանոցի միջանցքներում:

Ջեյնաբ խանումը կանգնած էր միջանցքի անկյունում՝ գլխիկոր, իսկ Մուստաֆան դուրս էր եկել ծխելու, երբ բժիշկը երևաց: Անհանգիստ մոտենալով նրան՝ Ջեյնաբ խանումը հարցրեց.

-Ինչպե՞ս է ամուսինս, բժիշկ: Միայն ճիշտն ասե՛ք:

-Թաքցնելու ոչինչ չկա: Նրա առողջական վիճակը լավանում է: Վտանգն անցել է: Վաղը հուսով եմ, կտեղափոխենք սովորական հիվանդասենյակ:

-Իսկապե՞ս: Թե՞ ինձ մխիթարում եք, -հուզվեց կինը:

-Ամենակին: Ասում եմ այն, ինչ կա,- երիտասարդ բժիշկը ձեռքը բարեկամաբար դրեց կնոջ ուսին մի պահ ու հեռացավ:

Երբ Մուստաֆան հայտնվեց, բժիշկն արդեն հեռանում էր:

Ձեյնաբ խանումը սրբեց թաց աչքերը, որոնք փոքր-ինչ շողում էին բժշկի հետ ունեցած ճեպագրույցից:

-Ուրախությունից եմ հուզվել, Մուստաֆա: Նա ասաց, որ վաղը պապիդ ամենայն հավանականությամբ հիվանդասենյակ կտեղափոխեն: Դու զանգե՞լ ես հորդ:

-Այո: Ինչո՞ւ ես հարցնում:

-Նրան ոչինչ չե՞ս ասել պապիդ մասին,- տարակուսանքով նայեց թոռանը:

-Չէ՞ որ պայմանավորվել էինք, որ առայժմ ոչինչ չհայտնեմ տեղի ունեցածի մասին: Բայց նա վաղը Ստամբուլում կլինի:

-Շատ լավ: Վաղն էլ կասենք: Սակայն Քյերիմի մասին ոչ մի խոսք: Կարծում եմ՝ չես մոռացել:

Ձեյնաբ խանումը թոռան հետ նստած էր միջանցքի աթոռին, երբ նրանց այցելության եկավ հարևանուհին՝ Նունուֆար խանումը:

-Տատի՛, գուցե ձեզ մենակ թողնեմ: Ես գործերով ուզում եմ դուրս գալ հիվանդանոցից: Շուտ կվերադառնամ,- ասաց Մուստաֆան:

-Իհարկե, գնա՛: Ես Նունուֆարի հետ կգուցեմ:

-Հը՛: Ինչպե՞ս է Ահմեդը, Ձեյնաբ,- դիմեց նրան հարևանուհին, երբ Մուստաֆան հեռացավ:- Չինգիզն էլ ուզեց հետս գալ, ես ասացի, որ վաղն այցելի: Ամեն օր ուզում ենք լուր ստանալ ձեզնից:

-Փառք ավահին: Նա կարծես լավանում է: Բժիշկը թույլ կտա վաղը մտնել նրա մոտ,- ի պատասխան ասաց Ձեյնաբ խանումը:

-Ախր նա ավելի շուտ պիտի հիվանդանոց գար բուժվելու, քանի որ երբ նյարդայնանում էր, սիրտը վատանում էր: Մինչդեռ նա ամենակին ուշադրություն չէր դարձնում:

-Չգիտեմ, Նունուֆար: Վերջին շրջանում անվերջ փորձանքների մեջ ենք հայտնվում տնեցիներով:

-Պատճառը քո Սայիդն է, որ հայտարարեց իր քրիստոնեական արմատների մասին: Ջգուշանալ է պետք: Երեկ էլ Ստամբուլում թուրք ազգայնականների խմբերը հարձակվել էին հայաբնակ Շիշլի, Քուրթուլուշ և նախկին հայաբնակ Բեշիկթաշ թաղամասերի վրա: Նրանք հանդես էին եկել հատուկ կոչերով՝ «Այս թաղամասերը պիտի դարձնենք հայերի ու քրդերի գերեզմաններ»:

Ձեյնաբ խանումը վախեցած նայեց Նունուֆարին:

-Այդ ինչո՞ւ: Հայերն ի՞նչ են արել:

-Է՛հ, Ձեյնաբ խանում,- ձեռքը հուսահատ թափ տվեց Նունուֆար խանումը,- Թուրքիայում հայ համայնքի գոյությունը միշտ էլ վտանգված է եղել: Ժամանակ առ ժամանակ հայեր են սպանվել: Չե՞ս հիշում, թե ինչպես անցյալ տարի Սամաթիա թաղամասում երկու հայ կանանց ինչպես

սպանեցին մեկ ամսվա ընթացքում: Սա ատելության հողի վրա իրականացված սպանություն էր: Ընդ որում, սպանված կանանց մարմինների վրա մարդասպանները խաչ էին նկարել: Նույնիսկ միջազգային իրավապաշտպան կազմակերպություններն են հատուկ հայտարարություն տարածել՝ Թուրքիայի իշխանություններին կոչ անելով շարունակել այդ հանցագործությունների հետաքննությունը և պատասխանատվության ենթարկել մեղավորներին:

-Քո կարծիքով՝ մեղավորներին գտա՞ն:

-Չէ՛: Չգտան: Իսկ գտա՞ն Սայիդի վրա հարձակվողներին: Թե՞ գտել են, ես տեղյակ չեմ:

Ջեյնաբ խանումը մի պահ շփոթվեց: Ո՞նց ասեր, որ այդ ամենի թիկունքում իր ավագ որդին էր՝ Քյերիմը, որի պատճառով էլ նույնիսկ հայրը հիվանդանոց ընկավ:

-Ո՛չ: Ղեռ ոչ մի տեղեկություն չկա:

-Ի դեպ, լսել եմ նաև մի քառասունամյա հայ կին է կորել մի քանի օր առաջ: Հիմա դու չե՞ս համոզվել, որ ծպտյալ լինելը մեզ համար ավելի ապահով է:

-Այդ մեզ է թվում: Նրանք մեզ իսկական մահմեդականների տեղ չեն դնում, թեկուզ իսլամ ենք ընդունել սերնդեսերունդ: Հասկացի՞ր, եթե ջարդերից մի դար հետո էլ այս պետությունը չի մոռանում հայերին, նույնիսկ բողոքի ցույցերի ու հարձակումների ժամանակ է շոշափում հայի անունը, այդ նշանակում է, որ մեր կյանքը ապահովագրված չէ:

Այդ ընթացքում հիվանդանոցի միջանցքով հրազենից վիրավորված ծանր հիվանդի բերեցին: Բուժաշխատողները խառնվեցին իրար: Նրան արագ տեղափոխեցին վիրահատարան: Տազնապած հայացքով երկու կանայք միմյանց նայելով՝ լռեցին:

Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ մարդուն համարյա միշտ ինչ-որ բան է կապում կյանքի հետ: Եթե մարդը նման նեցուկ չունի, իզուր է դառնում նրա կյանքի իմաստը, քանի որ չկա մեկը, ում կարող է օգնել, նրա մասին հոգ տանել: Այդ դեպքում մարդը զգում է իր ոչ պիտանիությունը: Ի՞նչ է փնտրում առհասարակ մարդը դժվար պահին, երբ հոգում ծանրություն է տիրում կամ էլ փնտրում է անդորր: Անկասկած, Գրիգոր Ակչամը խաղաղություն էր գտնում իր ընտանիքում՝ ծնողների կողքին: Նրանց մոտ էր հանդարտվում հոգու ալեկոծումը, նրանց մոտ էր հավաքում իր անկապ կամ ծվատված մտքերը և հասկանում շատ բան այն ամենից, ինչ նախկինում իր ուղեղին չէր հասնում: Նման հոգեկան կապվածությունը հատուկ է բոլոր մարդկանց:

Շատ ճանապարհորդելով՝ նա հասկացել էր, որ ամենից հաճելի ու հուզիչ զգացումը դեպի հարազատ օջախ տանող վերադարձի իր ճամփան էր: Ապրելով ուրիշ տեղ մեկ շաբաթ, երկու, երեք, նա նույնիսկ սկսում էր գիտակցել, որ սիրում է այն ամենը, ինչ առաջ իրեն զայրացնում էր: Գրիգոր Ակչամը հանկարծակիի եկավ, երբ Անկարայից վերադառնալով տուն, այնտեղ

միայն տան աշխատակցին գտավ: Սովորաբար ծնողներից մեկը տանն էր լինում: Այդ էլ այն դեպքում, երբ ինքը որդու հետ հեռախոսազրույց էր ունեցել, և նրանք տեղյակ էին, որ ինքն անպայման Ստամբուլ կվերադառնա: Նա զարմացած ու անհանգիստ Շաֆակին դիմեց.

-Ո՞ր են մերոնք:

- Ձեր հայրը հիվանդանոցում պառկած է: Նա սրտի կաթված է ստացել: Մայրդ գնացել է նրան տեսության:

-Ինչպե՞ս թե հիվանդանոցում է: Ինչո՞ւ ինձ ոչինչ չեն ասել,- Ակչամի տագնապը մի պահ խորացավ: -Բայց ես ամեն օր խոսել եմ Մուստաֆայի հետ: Ինչո՞ւ է նա ինձնից թաքցրել, - տան աշխատակցի խոսքը կիսատ թողնելով՝ վրդովված խոսեց Գրիգորը:

-Պարոն Գրիգոր, դուք մի՛ անհանգստացեք: Ձեր հոր վիճակն արդեն լավ է:

-Փառք Ամենատիրոջը: Ես հիմա հիվանդանոց կգնամ,- ասաց Գրիգորը՝ և տաքսի պատվիրեց:

Հետո նա ոտքի վրա սուրճ խմելով՝ դուրս եկավ տնից: Տաքսին արդեն մոտեցել էր: Գրիգորը նստեց մեքենան ու շտապ հասավ հիվանդանոց: Միջանցքում որդին նստած էր աթոռին: Հեռվից նկատելով հորը՝ նա ընդառաջ գնաց:

-Հայրի՛կ, կարծում էի, թե ուշ կվերադառնաս,-ասաց նա, անշուշտ, սպասելով, որ հայրը կհանդիմաներ իրեն այն պատճառով, որ նրան պապի հիվանդության մասին ոչինչ չէր հայտնել: Այդպես էլ եղավ:

-Տատիկն է այդպես հրահանգել, -որդին ընդհատեց նրան և մեղավոր հայացքով նայեց հորը:

-Հիմա ո՞նց է պապիդ վիճակը: Ես պետք է շտապ տեսնեմ նրան, համոզվելու համար, որ նրա հետ ամեն ինչ կարգին է:

Այդ պահին հիվանդասենյակից դուրս եկավ բուժքույրը: Տեսնելով Գրիգոր Ակչամին, նա խնդրեց մի քիչ սպասել: Սակայն բուժքրոջ հեռանալուց հետո երգիչն անհամբերությամբ հոր հիվանդասենյակի դուռը կիսաբաց անելով՝ ներս մտավ: Տեսնելով նրան՝ հուզմունքից հոր աչքերը թացացան: Գրիգոր Ակչամը ծնկի եկավ հոր մահճակալի մոտ՝ բռնելով նրա ձեռքը: Ձեյնաբ խանումը տագնապից կուչ եկած դեմքով նստած էր աթոռին:

-Այնպես էի վախենում, որ այլևս քեզ չեն տեսնի,- կամաց ասաց հայրը:

-Մտքովդ էլ չանցնի, հայրի՛կ: Մենք չենք թողնի, որ դու շուտ հեռանաս մեզնից:

Հայրը տխուր ժպտաց նրա պատասխանից: Նա մտածեց, թե որդին «մենք» ասելով ում նկատի ունեւ: Չէ՞ որ նրանից ու Մուստաֆայից բացի կարծես այլևս ընտանիքի անդամներ չունեին: Մայրը նրանց մենակ թողեց:

-Դե պատմի՛ր, լսեմ, թե ինչպե՞ս հայտնվեցիր այստեղ,- ասաց Գրիգորը:

-Ինքս էլ չհասկացա: Մեկ-մեկ սրտի ծակոցներ էի ունենում,- հայրը չուզեց կրտսեր որդուն պատմել իր և Քյերիմի վեճի մասին:

-Դու անպայման պետք է բուժվես: Իսկ գուցե քեզ վիրահատե՞ն,- զգուշությամբ հարցրեց երգիչը:

-Դրա կարիքը չկա,-ժպտաց հայրը՝ շոյվելով որդու սրտառուչ վերաբերմունքից:

-Ի՞նչ կուզենայիր, որ բերեմ քեզ համար, հայրիկ:

-Մուստաֆան և մայրդ ամեն ինչ բերել են: Միայն թե կուզենայի շուտ կազդուրվել, որ ձեր կողքին լինեմ, որ մեր այգու մաքուր օդը շնչեմ,- այնպես սրտաճմլիկ հնչեցին հոր խոսքերը, որ որդին մի պահ շփոթվեց:

-Դու միշտ էլ մեր կողքին կլինես, հայրիկ: Ես խոստանում եմ...Իսկ հիմա գնամ, երեկոյան էլի կգամ,- Գրիգոր Ալչամը դուրս եկավ հիվանդասենյակից:

-Կարելի՞ է ես հիմա մտնեմ պապիկի մոտ, տատիկ,- հարցրեց Մուստաֆան, երբ հայրը դուրս եկավ հոր մոտից:

-Գնա՛, բայց շատ չմնաս, որ նա չհոգնի, -պատասխանեց Ջեյնաբ խանումը:

Գրիգոր Ալչամը նստեց մոր կողքին՝ միջանցքում: Նա նկատեց, որ մայրը փոքր-ինչ լարված տեսք ուներ: Բացի այդ, ճակատի աջ մասում կապտուկ կար:

-Մայրիկ, դու ինձնից ինչ-որ բա՞ն ես թաքցնում, թե՞...

-Ո՛չ, որդիս: Ի՞նչ ունեմ թաքցնելու: Երևի հոգնած տեսք ունեմ: Քանի օր է, ես ու տղադ պահակների պես հսկում էինք հորդ:

-Հասկանալի է: Իսկ ճակատիդ կապտո՞ւկը: Որտե՞ղ ես ընկել: Հիվանդանոցո՞ւմ...

-Այո՛, շտապելուց սայթաքեցի ու աստիճաններով իջնելիս հանկարծակի ընկա,- հորինեց մայրը:

-Հո հայրիկի հետ չէի՞ք կռվել: Ասենք, ի՞նչ ունեք իրար հետ կիսելու,-Գրիգոր Ալչամը շարունակում էր իր հարցադրումները, քանի որ սրտի խորքում կարծես չէր հավատում մոր խոսքերին:

-Իսկ ինչի՞ համար կռվե՞նք,- պատասխանեց մայրը:

-Գուցե մեր տուն ինչ-որ մեկը եկել է ու հայրիկը վիճե՞լ է նրա հետ,- նորից հարցական հայացքով Գրիգորը նայեց մորը:

Մայրը համառորեն պնդեց իր ասածները, թեև համոզված էր, որ որդին սրտի խորքում ինչ-որ կասկածներ ուներ: Ջեյնաբ խանումը նաև հասկանում էր, որ ընդհանրապես արվեստագետները վեցերորդ զգայարանով են ամեն ինչ զգում

-Ոչ մեկն էլ չի եկել: Ո՞վ պիտի գար: Մուստաֆան ընկերների հետ դրսում է հանդիպում: Մենք էլ հարևանների հետ ենք շփվում,- պատասխանեց Ջեյնաբ խանումը:

-Իսկ Քյերի՞մը...

-Քյերիմն ի՞նչ...Ինչո՞ւ պիտի գար: Նա մեզնից հեռացել է,-սկզբում մտախոհ, այնուհետև հաստատապես ասաց մայրը:

Սակայն նա ցավով մտածեց, թե ինչպիսի մեծ տարբերություն կար երկու եղբայրների միջև: Նրա ականջները դեռ այրվում էին Քյերիմի անսիրտ խոսքերից. «Դուք ինձ համար մեռած եք»: Ծնողներին ուրացող, խիղճը կորցրած մարդուն ժողովուրդն ասում է. «Նրա մեջ Աստված չկա»:

-Լավ, մայրի՛կ, դու մի՛ նեղվիր, որ այդքան հարցեր եմ տալիս: Գիտես, թե քեզ ու հայրիկին ինչքան շատ եմ սիրում: Ես հիմա կգնամ բժշկի մոտ, կխնդրեմ նրան հնարավորինս ամեն ինչ անել, որ հայրիկը շուտ ուտքի կանգնի,- Գրիգոր Ակչամը բարձրացավ տեղից և գնաց բժշկի առանձնասենյակ:

Ջեյնաբ խանումը խոր արտաշնչեց: Այնպես չէր ուզում, որ երկու եղբայրներն իրար հետ բախվեին: Թեև դրանում բոլորովին համոզված չէր: Ճանաչելով Քերիմին, որն ազատության մեջ էր, կրկին կփորձի դավեր նյութել եղբոր դեմ:

Ահմեդը մի շաբաթ հետո դուրս գրվեց հիվանդանոցից: Գրիգոր Ակչամը սպասում էր հոր վերադարձին, որպեսզի ավելի հանգիստ զբաղվեր իր գործերով ու ծրագրերով: Հայոց լեզվի ուսուցման պարապմունքները ևս կիսատ մնացին: Ակչամը նույնիսկ Անկարայում գտնվելու ժամանակ հիշում էր Երանուհուն: Արդյո՞ք հայոց լեզվի տիրապետումն էր պատճառը, թե՞ երիտասարդ մանկավարժին տեսնելու անհաղթահարելի ձգտումը: Իսկ գուցե երկուսն էին հավասարապես իրեն հետաքրքրում: Հիմա, քառասուն տարեկան հասակում, երբ ինքը պատրաստվում էր նոր լեզու սովորել, կարծես իր մոտ դպրոցականի նույն զգացողությունն էր արթնացել: Երեկ երեկոյան հեռախոսագրույց էր ունեցել Երանուհու հետ, պայմանավորվել նրա հետ հերթական պարապմունքն անցկացնելու համար, այս անգամ իր տանը: Ու քանի որ շաբաթ օր էր, ու օրն աշխատանքային չէր, պայմանավորվել էին հանդիպել առավոտյան ժամին:

Գրիգոր Ակչամն ավելի վաղ արթնացավ ու իջավ այգի: Հայրն արդեն այնտեղ էր և ցանկանում էր ծաղիկները ջրել:

-Բարի լույս, հայրի՛կ: Ինչպե՞ս ես:

-Լավ եմ, որդի՛ս: Որոշեցի մի քիչ թարմ օդ շնչել այգում,-պատասխանեց հայրը՝ շարունակելով ջրել ծաղիկները:

-Բայց հիմա պետք չէ, որ դու ֆիզիկական ինչ-որ աշխատանք կատարես,- **չլանգը** վերցնելով հորից՝ Գրիգորն ինքը սկեց ջրել ծաղիկները: -Հայրի՛կ, զարմանալի մարդ ես: Գուցե՞ որոշել ես մեր այգեգործի աշխատանքն անել: Չէ՛, այդպես չեղավ: Դու միայն պիտի զբոսնես, նստես ծառերի տակ, մայրիկի հետ հաճույքով թեյ խմես, -հորը սիրալիք, նաև խրատական տոնով ասաց Գրիգորը:

Հնչեց դռան զանգը: Գրիգորը բացեց այգու դարպասի երկաթե դուռը: Տան աշխատակիցն էր, որն իր հետ մթերքներով լի տոպրակ էր բերել:

-Բարի լույս: Հո չե՞մ ուշացել,- դիմեց նա տանտերերին:

-Բարի լույս: Ճիշտ ժամանակին ես եկել: Հորս ու ինձ համար թեյ պատրաստիր: Մենք այգում կթեյենք,- ասաց Գրիգորը:

-Եղանակը կարծես փոխվում է: Նայի՜ր երկնքին, մոխրագույն ամպերը կամաց- կամաց խտանում են: Երևի անձրև կգա,- մտորեց Ահմեդը՝ նստելով ծառի տակ դրված նստարանին:

-Հայրի՛կ, մի՛ մոռացիր, որ արդեն աշուն է: Եթե մրսում ես, կարող եմք տանը թեյել:

-Ո՛հ, քանի անձրև չկա, այստեղ կմնամ:

-Ուրեմն հանգստացի՜ր այստեղ, իսկ ես անցնեմ այգու մյուս տարածքը, այնտեղ էլ այս քանի օրը ծառերին ջուր չի կպել,- ասաց Գրիգորը՝ շրջվելով տան ետնամասում ընկած այգու հատվածը:

Քիչ անց Շաֆակը թարմ պատրաստված թեյը բերեց ու դրեց այգու կլոր սեղանին:

-Խնդրեմ, ձեր թեյը բերեցի: Գնամ նախաճաշն էլ պատրաստեմ,- ասաց նա ու հեռացավ:

Դարձյալ հնչեց դռան զանգը: Գրիգորը նայեց ձեռքի ժամացույցին ու մտածեց. «Մի՞թե այսքան վաղ ժամին եմ երեկ Երանուհու հետ պայմանավորվել»: Բայց երբ բացեց դուռը, անակնկալի եկավ: Իր ընկերն էր՝ Ռուստամը, որն այցելել էր առանց նախապես զանգելու:

-Այս գիշեր չե՞ս քնել: Թե՞ ինչ-որ բան է պատահել, -ընկերոջը ներս հրավիրելով՝ զարմացած դեմքով հարցրեց Գրիգորը:

-Մի՛ վախեցիր: Ոչինչ չի պատահել: Շուտ արթնացա ու որոշեցի քեզ հանդիպել: Գուցե ձեր այգում մի քիչ բիլիարդ խաղանք: Վաղուց քեզ հետ չեմ մրցել: Ուզում էի փախչել քաղաքի աղմուկից:

-Շատ լավ միտք է: Համեցի՜ր, հորս հետ թեյում եմք,- ու բարձր ձայնով կանչեց Շաֆակին, որ մի բաժակ էլ ավելացնի:

-Ահմեդ բեյ, ինչպե՞ս եք հիմա ձեզ զգում: Թեկուզ ձեր տեսքից կարելի է ենթադրել, որ արագ եք կազդուրվում: Դե, եթե Գրիգորի կողքին եք, ուրեմն ավելի շուտ կառողջանաք,- մոտենալով սեղանին՝ ժպտաց Ռուստամը:

Ահմեդը շոյվեց նրա վերաբերունքից: Սրտի խորքում նաև ուրախ էր, որ իր որդին նման հավատարիմ ընկեր ունի:

Միայն թեյից ու նախաճաշից հետո ընկերները մոտեցան բիլիարդի սեղանին, որը տեղավորված էր ջրավազանի կողքին:

-Հը՛, առաջինը դու սկսիր,- ասաց Գրիգորը՝ գնդիկները շարելով եռանկյունու մեջ:

Ռուստամը ձողը վերցնելով՝ առաջ անցավ և ուշադրությունը կենտրոնացնելով՝ մի թեթևակի հարվածով ցրեց գնդիկները: Դրանցից ոչ մեկը պատահաբար չհայտնվեց ցանցի մեջ: Հաջորդ քայլը Գրիգորինն էր: Նա դիպուկ հարված հասցրեց և գնդակներից երկուսն իրար ետևից հայտնվեցին ցանցում: Հաջորդ քայլին Ռուստամին ևս հաջողվեց մեկը դեպի ցանց ուղարկել:

Նորից հայտնվեց Շաֆակը:

-Ի՞նչ կա,- Գրիգորը հարցական նայեց նրան:

-Մտածեցի, գուցե կուզենայիք սուրճ խմել:

-Չէր խանգարի: Նաև սրճի հետ սառույցով վիսկի կբերես, -ավելացրեց Գրիգորը՝ հայացքն ուղղելով Ռուստամին: -Ընկեր, ուրիշ ի՞նչ կցանկանայիր խմել:

-Ինչ որ նախընտրեցիր, ես համաձայն եմ,- ասաց նա:

Ընկերները շարունակեցին խաղը: Սակայն խաղի ընթացքում երգիչը ժամանակ առ ժամանակ նայում էր ձեռքի ժամացույցին, ինչն էլ աննկատ չմնաց Ռուստամի աչքից:

-Դու ժամադրությո՞ւն ունես,- հարցրեց նա Գրիգորին:

-Ժամադրություն չունեմ, բայց հանդիպում ունեմ: Ավելի ճիշտ, հայոց լեզվից պարապմունք ունեմ: Մանկավարժն այստեղ պիտի գա:

-Ահա թե ի՞նչ... Ես էլ երևի կխանգարեմ ձեզ:

-Առայժմ` ոչ: Հանգիստ խաղա: Քո հերթն է,- սուրճը խմելով` ասաց Գրիգորը: -Հետո էլ քեզ կծանոթացնեմ նրա հետ: Կարծում եմ` քեզ կհետաքրքրի, թե ում հետ եմ պարապում:

-Ընկեր, դու այնպիսի ոգևորությամբ ես նրա մասին խոսում, որ ինձ թվում է, սիրահարվել ես:

-Ինչի՞ց եզրակացրիր: Անշուշտ, չեմ թաքցնում, որ այդ աղջկան հավանել եմ առաջին հայացքից: Նա բուրբուրովն նման չէ ուրիշներին: Երբ կտեսնես, ինքդ կհամոզվես,- խորաթափանց հայացքով ժպտաց Գրիգորը:

-Դա արդեն մի քայլ առաջ է: Թե չէ վերջերս միայն վատ դեպքեր են տեղի ունենում: Չեմ էլ ուզում վերհիշել,- ընկերոջը քաջալերեց Ռուստամը:

Գրիգոր Ալչամը հիշեց մի պահ ինչպես իր դեմ, այնպես էլ Վանի նահանգում` Դիլերի գյուղում քրդերի հետ կատարված արյունալի դեպքերը:

-Գրիգոր, ճիշտն ասա՛, քո հոգու աշխարհը շատ փոխվեց այն ամենից հետո, երբ իմացար քո քրիստոնեական արմատների մասին և առանց վախի վերադարձար ինքնությանդ,- հարցրեց Ռուստամը:

-Անկասկած: Իմ մեջ կարծես երկու «ես» պայքարեցին իրար դեմ և հաղթեց իմ արյան կանչով սնված «ես»-ը: Այժմ ես իմ շուրջը կատարվող իրադարձություններին, մարդկանց բուրբուրովն այլ ոսպնյակի տակ եմ դիտում,- անկեղծորեն խոստովանեց Գրիգորը` ևս մի գնդակ ցանցը գլորելով:

Ընկերները հաճույքով խաղում ու զրուցում էին, երբ ժամը տասնմեկին հնչեց դռան զանգը: Շաֆակը բացեց դուռը: Երանուհին էր ժամանել: Տղամարդիկ մի ակնթարթ նայեցին աղջկա կողմը: Երանուհին աշնանային հաճելի գույներով խառնված զգեստ էր հագել և եղնիկի պես սահուն ու մեղմ քայլերով մոտեցավ երկուսին` ժպտալով ողջունեց:

-Խանգարեցի՞ ձեզ,- երիտասարդ մանկավարժը դարձյալ պայծառ ժպիտով նայեց իր ձեռքի ժամացույցին:

-Ի՞նչ եք ասում: Համեցե՛ք,- Գրիգորը փոքր-ինչ շփոթված` ձեռքի ձողը դրեց բիլիարդի սեղանին:

-Բայց քիչ մնաց, որ խաղն ավարտենք: Իմ կարծիքով այսօր իմ բախտը խաղի մեջ հաստատ կբերի,- նկատելով ընկերոջ շփոթվածությունը` զվարթ տոնով պատասխանեց Ռուստամը Գրիգորի փոխարեն:

-Նախ՝ ծանոթացեք իմ ընկերոջ՝ Ռուստամի հետ, որը նաև իմ պրոդյուսերն է,- Գրիգորը Երանուհուն ներկայացրեց ընկերոջը:

Շաֆակը դռան զանգը լսելով եկել ու մնացել էր կանգնած նրանց կողքին: Նա տանտիրոջ հրահանգին էր սպասում:

-Շաֆակ, մեր հաճելի հյուրի համար սուրճ և նարնջի հյութ բեր, իսկ մենք շուտով կավարտենք խաղը, -դիմեց Գրիգորը տան աշխարտակցին:

Երանուհին լուռ նստեց այգում դրած գեղեցիկ սեղանի մոտ և զննեց շուրջը: Այգին փոքրիկ դրախտավայրի էր նմանվում, իսկ դիմացի ջրավազանի ջուրն այնքան մաքուր էր ու թափանցիկ, որ այնտեղ արևի անգամ թույլ շողերի ներքո արտացոլվում էին երկու տղամարդկանց ստվերները: Նա մտածեց, որ ստեղծագործողի համար այն անզուգական միջավայր էր:

Խաղն ավարտվեց Ռուստամի հաղթանակով: Գրիգորն ընկերոջն ուղեկցեց մինչև դարպաս: Վերջինս հրաժեշտից առաջ խորամանկորեն ժպտաց.

- Իմ օրինանքը կտամ քեզ, եթե ձեր միջև նորմալ կապ ստեղծվի:

-Այդ մասին շատ վաղ է մտածելը: Կապրենք, կտեսնենք,- մտախոհ պատասխանեց Գրիգորը՝ փակելով դարպասը:

Նա Երանուհուն տուն հրավիրեց: Ընդարձակ ճաշասենյակում նրա ծնողները հեռուստացույց էին նայում: Գրիգորը սիրով նրանց ներկայացրեց Երանուհուն, իսկ հետո միասին գնացին ճաշասենյակի կողքին գտնվող այն սենյակը, ուր գրադարան էր: Այն իր չափերով թեկուզ փոքր էր, բայց բավականին հարմարավետ էր: Մի պատի ամբողջ երկայնքով՝ գրապահարաններում, գրքեր էին շարված, անկյունում փոքրիկ բուխարիկ էր, որը հավանաբար ցուրտ օրերին էր վառվում՝ ընթերցանությունից չկտրվելու կամ գուցե առանձին մտորելու նպատակով: Դիմացի պատին էր սեղմված բազմոցն իր բազկաթոռներով, իսկ մեջտեղում գրասեղանն էր:

Երանուհին սկզբում ստուգեց հանձնարարված դասը, որը երգիչը լավ էր սերտել, հետո նոր դասը բացատրեց: Գրիգորն առաջվա պես կլանված, անթարթ աչքերով նայում էր իր ուսուցչին, մտածելով, որ երևի կուզենար, որ ամեն օր պարապմունք լիներ հայերենի: Ինքը կարող էր որևէ մեկից, նաև Ռուստամից խնամքով թաքցնել, որ սիրահարված չէ աղջկան: Այնինչ իրականում նրա հոգում ինչ-որ արտասովոր թրթիռներ էին ծնվել, որոնք չկային նախկինում: Նա նորից խնդրեց Երանուհուն հատվածներ կարդալ արևմտահայ նշանավոր բանաստեղծների գործերից: Անցած պարապմունքին նա հատվածներ ընթերցեց ջարդերի մասին գրված Սիամանթոյի գործերից: Թեև լեզուն չէր հասկանում, բայց ինչ-որ ցնցող ու հպարտ զգացողություն էր ունենում բանաստեղծական տողերն ունկնդրելիս: Չէ՞ որ որպես երգիչ հասկանում էր, որ սովորական մարդն էլ որևէ մեղեդի լսելիս շատ դեպքերում երգի բառերը չի իմանում, քանզի մեզանից յուրաքանչյուրը երգը զգում է հոգով, սրտով:

-Երանուհի՛, եթե խնդրեմ, այս անգամ կընթերցե՞ք այնպիսի բանաստեղծություններ, որոնք նվիրված լինեն բնությանը, սիրուն: Ո՞ւմ գործերից կընթերցեք, եթե շատ չտխրեմ,- նրբանկատորեն հարցրեց Գրիգորը:

-Ուրեմն Միսաք Մեծարենցի երգերից կկարդամ,- պատասխանեց աղջիկը՝ մեղմորեն ձեռքն առնելով երգերի ընտրանին:

Սակայն նա մինչև որպես նախաբան պատմեց, թե ով է Մեծարենցը, որտեղ է ծնվել, ինչ տեղ ունի նա հայ գրականության մեջ: Ընդգծեց, որ հատկապես մեծ է բանաստեղծի ունեցած դերը մարդու և բնության գեղարվեստական մեկնաբանության հարցում:

-Ես ձեզ հիմա կընթերցեմ «Այգերգ», «Աքասիաներու շուքին տակ» բանաստեղծությունները,- առաջվա պես հանդարտ տոնով ասաց Երանուհին:

Նա տող առ տող այնպես դանդաղ էր ընթերցում, ինչպես երգիչն էր իր դաշնամուրի ստեղների վրա որևէ մեղեդի հորինում: Երանուհին նաև հարմար գտավ Մեծարենցի տողերը թարգմանելու, որ իր աշակերտի համար առավել հասկանալի դարձներ երգերի իմաստը:

Գրիգորն ուշի- ուշով լսում էր նրան, երբ երկինքը որոտաց և ուժեղ անձրև տեղաց:

-Ես այդպես էլ գիտեի, որ անձրև կլինի,- ասաց նա:

-Դուք ուշանո՞ւմ եք, -անհանգիստ հարցրեց Գրիգորը:-Ես ձեզ տեղ կհասցնեմ:

-Ո՛չ: Տաքսի կկանչեք:

-Հիմա՞: Չէ՞ որ չենք վերջացրել պարապմունքը:

-Երբ որ կավարտենք: Ես չեմ շտապում:

Երանուհուց կարծես հենց այդ պատասխանին էր սպասում: Գրիգորն իսկույն վեր կացավ տեղից, մոտեցավ բուխարիկին ու կրակը վառեց:

-Անձրևին օդը խոնավանում է, հիմա սենյակը կտաքանա,- ասաց նա:-Ես Շաֆակին կասեմ նաև, որ մեզ համար ոչ միայն թեյ բերի, այլև տաք շոկոլադ պատրաստի: Սիրում եմ վառվող բուխարիկի մոտ օգտվել շոկոլադից:

Երանուհին անուշ ժպտաց: Նրան նույնպես հաճելի էր Գրիգորի ջերմ վերաբերմունքը: Երբ կրակը շիկացավ, երգիչը դուրս եկավ ու գնաց խոհանոց: Երանուհին մոտեցավ բուխարիկի կողքին ընկած ճոճվող բազկաթռռին ու գիրքը ձեռքին նստեց այնտեղ: Րոպեներ անց եկավ Գրիգորը, իսկ հետո երևաց Շաֆակը՝ բերելով տանտիրոջ պատվերը:

-Եթե դժվար չէ, նորից կարդացեք «Աքասիաներու շուքին տակ» բանաստեղծությունը,-ասաց Գրիգորը:

-Իհարկե նորից կարող եմ կարդալ.

Աքասիաներու շուքին տակ

Ծաղիկներէն յուշիկ թերթեր կը թափէ,

Բուրումներով օծուն հովիկն իրիկուան,

Հոգիներուն կիջնէ երազ մը բուրեան,

Ի՞նչ հեշտին է մըթնշաղն այս սատափէ...

Երբ Երանուհին ավարտեց ընթերցումը, երգիչը մի պահ չարձագանքեց: Նա ասես ականջալուր էր անուշ աղոթքի, երբ մարդ կտրվում է երկրային կյանքից և ցանկանում է բնության մեջ մաքրվել, ազնվանալ, երազել, սիրել անվերջ...

-Հրաշալի է,- հանկարծ ոգևորված բացականչեց Գրիգորը:

Երիտասարդ մանկավարժը սիրալիր ժպտաց: Նա տեսնում էր, որ երգիչը թեև բառերը չէր հասկանում, բայց բանաստեղծությունը երգի պես էր ընկալում և շարունակեց օգտվել շոկոլադից, որը սառում էր արդեն: Անկասկած, Գրիգորին հարազատ էին հայերենի հնչյունները... Նա կարծես էքստազի մեջ հայտնվեց: Երգահանի մեջ արթնացավ ու աղմկեց հայի գեներ...

Գրիգորը որոշեց իր որդու հետ գնալ ավտոշուկա՝ մեքենաներ գնելու: Իր ավտոմեքենան այրվելուց հետո ինքն անվերջ շրջում էր տաքսիներով: Իսկ որդուն նա վաղուց էր խոստացել մեքենա նվիրել, մանավանդ որ Մուստաֆան տեղափոխվել էր իր մոտ և պաշտպանում էր իր դիրքորոշումը: Որդու ուրախությանը չափ ու սահման չկար, երբ իմացավ հոր անակնկալի մասին:

Կեսօրին նրանք երկուսով նոր մեքենաներով այցելեցին անվանի լուսանկարիչ Արա Գյուլերին: Տարեց լուսանկարիչը սովորականի պես իր տեղում էր: Սովորականի պես մարդաշատ էր նաև սրճարանը: Մատուցողը նրանց ուղեկցեց դեպի Գյուլերի առանձնասենյակը: Վերջինս ուրախացավ երգչին տեսնելով:

-Ծանոթացիր, որդիս է՝ Մուստաֆան,- պայծառ տրամադրությամբ ասաց Գրիգորը:

-Չասեիր էլ, իսկույն հասկացա, որ նա քո արյունն է: Քեզ արտաքինով շատ նման է: Թեյ կխմե՞ք,- հարցրեց նա:

-Հաճույքով,- պատասխանեց Գրիգորը:

Սրճարանատերը կանչեց մատուցողին և դարչինով թեյ պատվիրեց:

-Վախենում էի այլևս քեզ այստեղ չտեսնել, քանի որ լուրեր էին պտտվում, որ ուզում ես վաճառել 3 միլիոն եվրո գնահատվող ողջ անձնական արխիվդ և սրճարանի շենքը,- ասաց Գրիգորը:

-Այո՛, ուզում էի, բայց հետո պայմանագիրը չեղյալ հայտարարեցի:

-Գուցե Հայաստանի՞ն ես ցանկանում տրամադրել քո ունեցածը,- հարցրեց երգիչը:

-Հնարավոր է, դեռ մտածում եմ: 2013-ին Երևանում Ազգային պատկերասրահում, բացվեց իմ աշխատանքների ցուցահանդեսը: Ես էլ այնտեղ էի, ներկայացրել էի 100 աշխատանք, որն էլ ամբողջությամբ նվիրեցի Ազգային պատկերասրահին: Սակայն հիմա ամենից շատ ինձ անհանգստացնում է ներկայիս Թուրքիայի վիճակը: Ռազմական հեղաշրջման անհաջող փորձից հետո ետ կնահանջենք: Երդողանն ամեն բան կանի ընդդիմադիրներից ազատվելու

համար: Տասնյակ հազարավոր անմեղ մարդիկ կտուժեն: Նա անգամ մահապատիժն է ուզում վերականգնել, հարյուրավոր նոր բանտեր է ուզում կառուցել: Եթե նախագահը դաժան հաշվեհարդար է տեսնում յուրայինների հետ, ի՞նչ կարելի է ակնկալել ուրիշ ազգերին: Ազգային փոքրամասնություններն էլ ոտքի տակ կընկնեն: Նրանց նույնպես մեծ վտանգ է սպասվում: Էրդողանը Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի բռնապետական ռեժիմն է ցանկանում իրականացնել: Այժմ դու քեզնից պատմիր: Վաղուց քեզ չեմ տեսել: Ինքդ էլ գիտես, որ ճանաչված մարդկանց մասին տեղեկությունները լրատվամիջոցներից ենք իմանում: Գոնե գտա՞ն այդ հանցագործներին, ովքեր քեզ հետապնդել ու վնասել են, նույնիսկ մեքենադ վառեցին:

-Դեռ չեն գտել,- անտարբեր պատասխանեց Գրիգորը:

-Ի՞նչ ասեմ, լավ չէ: Նրանք նորից կփորձեն քեզ վնասե՞լ, թե՞ սխալվում եմ- հարցական հայացքն ուղղելով երգչին՝ նա վառեց իր չիբուխը:

Մատուցողը բերեց մուգ թեյը և դարչինի անուշ հոտը տարածվեց սենյակում:

-Մուրադ Ազիզօղլուց լուրեր ունե՞ս:

-Այո: Օրերս նրա եղբոր՝ Ռասուլի հետ հեռախոսազրույց ունեցա: Հայտնեց, որ նրան տեղափոխել են Ալիադայի բանտ, որտեղ բանտային պայմաններն առաջվանից լավ են: Իրավապաշտպանն ամեն ինչ անում է, որ նրան գոնե 1,5 տարի ժամանակով ազատազրկեն և ոչ ավելի:

-Վերջերս էլ մի թուրք լրագրողի վրա են հարձակվել իր տան դիմաց, երբ նա վերադառնալիս է եղել նկարահանումներից, ինչպես քո դեպքում եղավ: Դեպքը Ստամբուլի Նշանթաղ շրջանում էր՝ իր տան մոտակայքում:

-Ո՞վ է նա: Հնարավոր է, որ ճանաչեմ:

-Ահմատ Հաքանը:

-Իհարկե, ճանաչում եմ նրան: Հրանտ Դինքի սպանությունից հետո, երբ բողոքի ցույց եղավ, մենք միասին մասնակցեցինք «Ես հայ եմ» կարգախոսով: Նրա ըմբռնումները ժողովրդավարական հիմք ունեն: Նա նաև հայտնի է հայության հանդեպ ունեցած հարգանքով:

-Խեղճին այնպես են ծեծել, որ հիմա կոտրվածքներով գտնվում է հիվանդանոցում,- ափսոսանքով ավելացրեց Գյուլերը:

Մուստաֆան, որ լուռ լսում էր հոր և լուսանկարչի խոսակցությունը, խմելով թեյը՝ ուզեց իր նոր մեքենայով հանդիպել ընկերներին:

-Հայրիկ, ես պիտի գնամ,- հանկարծ ոտքի կանգնեց նա:-Դուք հանգիստ զրուցեք: Երեկոյան կհանդիպենք տանը,- ասաց Մուստաֆան և շնորհակալություն հայտնելով սրճարանի տիրոջը՝ հեռացավ:

Գրիգոր Ակչամը սեղանին դրված փոքրիկ թեյնիկից նորից իր համար թեյ լցրեց: Այդ ընթացքում էլ նա հեռախոսազանգ ստացավ: Ռուստամն էր, որին տեղեկացրեց, որ ժամը 5-ին

լինի իր ձայնագրման ստուդիայում և որ նվագախմբի տղաներն էլ այնտեղ կլինեն: Ցանկություն ուներ բոլորին ճաշի հրավիրել որևէ ռեստորանում:

-Ի՞նչ առիթով ենք հավաքվում,- հարցրեց Ռուստամը:

-Կգան, կիմանան: Միայն թե չուշանաս:

Վերջացնելով հեռախոսագրույցը՝ նա դիմեց Գյուլերին:

-Էլ ի՞նչ նորություններ կան:

-Թուրքական ընդդիմադիր «Zaman» պարբերականի գլխավոր խմբագիր էքրեմ Ղումանլըն հրաժարական է տվել: Խոստովանել է, որ այդ քայլը պայմանավորված է իր դեմ անօրինական ճնշումների պատճառով: Նա նույնպես մի շարք գրքերի հեղինակ է և տարբեր ժամանակներում ձերբակալվել է քաղաքական շարժումների շրջանակներում,- հայտնեց Արա Գյուլերը:

-Անկասկած, լրագրող Ահմատ Հաքանի հետ կատարվածն էլ նրա վախը խորացրեց,- ավելացրեց Գրիգորը:

-Երևի: Համոզված եմ, որ Թուրքիայի մեջ ազատության ու ժողովրդավարության համար պայքարողներն ի վերջո պիտի հաղթեն:

-Որտեղի՞ց այդքան պայծատատեսություն,- խորհրդավոր ժպտաց երգիչը:

-Մի խումբ մտավորականներ ստորագրահավաք են կազմակերպել և գրություն են պատրաստել՝ ուղարկելով երկրի կրթության նախարարություն: Նրանք պահանջում են, որ Թուրքիայի դպրոցական դասագրքերում հատված մտցնեն այն մասին, որ եղել է Հայոց Ցեղասպանություն:

-Նախարարությունը չի հաստատի,- պատասխանեց Գրիգորը և հետևելով լուսանկարչի հարցական հայացքին՝ շարունակեց.-Հիշո՞ւմ ես, 2007թվականին Թուրքիայի կրթության նախարարության կողմից պատրաստված և հրատարակված 11-րդ դասարանի համար նախատեսված աշխարհագրության դասագրքերում բիբլիական լեռը ներկայացվում էր ոչ թե «Աղըր դաղը», այլ՝ հենց «Արարատ» անունով: Այդ քայլի դեմ իրենց բողոքի ձայնն էին բարձրացրել Թուրքիայի ազգայնական շրջանակները և պահանջել էին հավաքել դասագրքերը և «Արարատ» անվանումը փոխարինել կրկին «Աղըր դաղը»-ով, քանի որ Արարատ անվանումը դարձել է Հայոց ցեղասպանության խորհրդանիշ:

Գյուլերը նույնպես իր բաժակի մեջ տաք թեյ ավելացրեց ու տխուր արձագանքեց.

-Հիշում եմ, նման դեպք եղել է: Ցավալի է տեսնել, թե ինչպես օրեցօր Թուրքիայում հասունանում է էթնիկ ձգնաժամը, ինչը պայմանավորված է երկրի ներքաղաքական խնդիրներով: Թուրքերը և քրդերն իրենց դաժանությամբ գերազանցում են միմյանց:

Գրիգոր Ակչամը Գյուլերին պատմեց այն ամենի մասին, ինչին ականատես էր դարձել Թոնդրակ գյուղում, ուր մեկնել էր Դիլերին օգնելու համար:

-Քո պատմածը ևս վկայում է այն մասին, որ թուրք ոստիկանները նման վայրագություններով ավելի կսրեն իրավիճակը: Մեր երկրի իշխանությունները քրդերին ինքնավարություն չեն տա,

իսկ Թուրքիան հիմա կանգնած է քաղաքացիական պատերազմի շեմին: Իմացի՛ր, որ ինչպես քրդերը, այնպես էլ էթնիկ տարբեր խմբավորումներ, ինչպիսիք են հայերը, ասորիները և այլ ազգեր, իրենց ամբողջական ինքնությամբ ապրելու խնդիրներ ունեն: Վախենում են, որ եթե չափազանց սրվեն թուրքերի ու քրդերի հարաբերությունները, հնարավոր է հայերն էլ տուժեն...

-Այդ ինչպե՞ս...Չէ՞ որ նրանք այդ ամենի հետ կապ չունեն,- զարմացած հարցրեց Գրիգորը:

-Էհ,- չիբուխը ծանր քաշելով ասաց ծեր լուսանկարիչը: -Պատմության դասերը հիշելով՝ լավ կանխատեսումներ չեն կարող անել: Ուրեմն իմացի՛ր, Հայոց Ցեղասպանությունից հետո, 1919-22 թթ-ին հույն-թուրքական պատերազմի ընթացքում հայերի կոտորած եղավ Թուրքիայի արևմտյան շրջաններում: 1922թ.սեպտեմբերի 9-ին թուրքերը մտել են Իզմիր և կազմակերպել հայերի ու հույների ջարդը, խորտակել են Իզմիրի նավահանգստում կանգնած հայ և հույն փախստականներով լեփ-լեցուն, ինչպես նաև փախստականներին փոխադրելու պատրաստ նավերը:

-Այսինքն՝ թուրքերը միշտ առիթն օգտագործել են կոտորելու՞ հայերին,- դառնացած հարցրեց Երգիչը:

-Ճիշտ այդպես: Աստված ոչ արասցե, որ նման բան 21-րդ դարում կրկնվի: Իրականում հիմա քրդերի ցեղասպանություն է կատարվում: Գոյություն ունեն ապացույցներ այն մասին, որ սպանելով քրդերին՝ թուրք զինվորականները հաճախ արտահայտել են. «Քրդեր, թող այժմ հայերը հպարտանան ձեզանով»:

-Ստացվում է, որ վտանգի տակ է հայերի կյանքը Թուրքիայում,- տխուր եզրակացության հանգեց Գրիգորը՝ նայելով ձեռքի ժամացույցին: Նա մտածեց, որ ժամանակն է գնալու ու ոտքի կանգնեց՝ հրաժեշտ տալու տարիների փորձից իմաստնացած ծեր լուսանկարչին:

-Դու այդպես էլ ոչինչ չասացիր հայերենի պարապմունքների մասին: Ջանգեցի՞ր Երանուհուն,- հարցրեց Գյուլերը:

-Թեկուզ մի անգամ են պարապմունք ունեցել, բայց շատ տպավորված են: Պարապմունքներն անպայման կշարունակեն:

Գրիգոր Ակչամը պատրաստ էր դեռ երկար զրուցել Արա Գյուլերի հետ, եթե պայմանավորվածություն չունենար: Նրա համար հայ լուսանկարիչը հետաքրքիր մի անձնավորություն էր, ով բնակվելով Ստամբուլում և ծառայելով թուրքերին՝ մշտապես մտահոգված էր իր երկրում ապրող հայերի ճակատագրով:

Երբ երգիչը տեղ հասավ, նվազախմբի բոլոր տղաները ջերմությամբ ողջունեցին նրան: Առիթը Գրիգորի ձեռք բերած նոր մեքենան էր: Նրանք շամպայն և սուրճ էին դրել սեղանին ու սպասում էին իրենց ղեկավարին: Տեսնելով Գրիգորին՝ կիթառահար Դիլերն ուրախ բացականչեց.

-Ահա նա՛: Արագ բացե՛ք շամպայնը:

Գրիգորը զվարթ տեսքով ողջունեց բոլորին՝ նկատելով, որ Ռուստամը դեռ չկար:

-Չսպասե՞նք Ռուստամին,- հարցական նայեց նա տղաներին, որոնք շամպայնով լի բաժակներով նրա խոսքին էին սպասում:

-Նրա հետ էլ կհասցնենք բաժակ բարձրացնել, իսկ հիմա քո կենացն ենք ուզում խմել:

Տղաները կիսով չափ դատարկել էին բաժակները, երբ չգիտես որտեղից ստուդիա ներխուժեց Քյերիմը՝ ատրճանակը ձեռքին: Գրիգորը ներքին տազնապով, բայց հանգիստ տոնով նրան դիմեց.

-Ատրճանակդ իջեցրո՛ւ: Եթե որևէ խոսելիք ունես, ես քեզ հետ դուրս կգամ:

Տղաները մի պահ քարացած մնացին անսպասելի այդ տեսարանից:

-Ես քեզ հետ խոսելու ոչինչ չունեմ: Եկել եմ, որ կիսատ թողած գործս ավարտին հասցնեմ,- ասաց նա ու երբ սեղմեց ատրճանակը, Դիլերը վայրկենապես իր մարմնով փակեց Գրիգորին ու գնդակն իր ձախ ուսին կապավ: Նա վիրավոր բռնեց ուսից:

-Ի՞նչ արեցիր, Դիլեր: Թող նա ինձ վերացնի, թե չէ չի հանգստանա,- ու կիթառահարին մի կողմ քաշելով՝ Գրիգորն առաջ անցավ:

-Դե, վրիպեցիր, մի անգամ էլ կրակի՞ր ինձ վրա, արյունս թափիր, որ հանգստանաս,- Քյերիմն իր ատրճանակի ձգանը նորից քաշեց, որ կրակեր, այդ պահին երևաց Ռուստամը և հասցրեց նրա ձեռքը դեպի վերև բարձրացնել, որպեսզի չար գնդակը ոչ մեկին չվնասեր:

Ու քանի որ ձայնագրման ստուդիան գտնվում էր շենքի առաջին հարկում, կրակոցներից վրա հասան պահպանության վարչության ծառայողները և շղթաներ հագրին հանցագործի ձեռքերին: Տղաները նաև շտապօգնություն կանչեցին ու Դիլերին տեղափոխեցին հիվանդանոց: Հայտնվեցին նաև լրագրողները, որոնց ամենից շատ նման սենսացիոն բնույթի լուրեր էին պետք: Գրիգոր Ակչամն այլևս ոչինչ չէր կարող թաքցնել թե՛ լրագրողներից, թե՛ իր նվազախմբի տղաներից: Ռուստամը պակաս զարմացած չէր կատարվածից: Երբ լրագրողները հեռացան, նա հարցրեց Գրիգորին.

-Ինչո՞ւ ինձ ոչինչ չէիր ասում: Եղբորդ պատվի՞ համար էիր հոգ տանում:

-Ամոթ էր ինձ համար այդ մասին խոստովանելը: Քյերիմն իմ ավագ եղբայրն է: Շնորհակալ եմ քեզնից, որ ժամանակին հասար, -ներքին խռովքը մի կերպ զսպելով՝ ասաց երգիչը:

-Աստված ուզեց, որ դու փրկվես: Նույնն էլ ինձ համար դու կանեիր, թեկուզ եթե Դիլերը մեջտեղ չընկներ, գնդակը հաստատ քեզ կդիպչեր: Նա կարծես իր պարտքն էր կատարել, որովհետև դու նրան օգնության հասար, որպեսզի մոր դին հողին հանձնվեր: Եղածն արդեն եղած է: Աստված թող մեզ փորձանքներից հեռու պահի...Քիչ առաջ ծանոթ տղաներից մեկն ինձ զանգեց ու վատ լուր հաղորդեց երգիչներից մեկի մասին, -ասաց Ռուստամը:

-Խոսքը սպանությա՞ն մասին է:

-Այո՛: Ստամբուլի Ավջըլար թաղամասի ակումբներից մեկում սպանել են Սելիմ Սերհադ անունով երգչին, ով հայտնի է քրդերեն երգերի կատարմամբ: Սպանել են հենց բեմի վրա: Անհայտ անձինք հարձակվել ու դանակի հարվածներ են հասցրել նրան: Ճանաչո՞ւմ ես նրան:

-Իհարկե: Նա հայտնի է խաղաղության մասին իր երգերով: Ամուսնացած էր, ուներ երեք զավակ: Փաստորեն քրդերի ու թուրքերի միջև ծնված ատելությունը գնալով խորանում է: Այս ամենից վատ հոտառություն են զգում,-տխուր եզրահանգեց Գրիգորը:

Քյերիմն ի վերջո հայտնվեց ճաղերի ետևում: Նա չհաշտվեց իր տոհմական ծագման հետ՝ իմանալով իր ցեղի ճակատագրի մասին: Մոլագար ազգայնամուլը կոնֆլիկտ ուներ իր հոգում և բացարձակ խուլ էր դարձել արյան կանչի հանդեպ: Ավելին, եղբոր քայլն իր ինքնությունը ճանաչելու ու բարձրաձայնելու համար նրա կողմից դիտվեց որպես դավաճանություն: Բայց չէ՞ որ իսկական դավաճանությունն ինքդ քեզ ժխտելն է: Այդ ո՞ր մահմեդականն է իր կրոնը փոխում, մինչդեռ հայ քրիստոնյան ստիպված էր մահից խուսափելու համար փոխել կրոնը, դառնալ ուրիշ մարդ, միշտ մտածելով, որ կեղծիքի մեջ է ապրում: Իսկ սեփական գե՞նը, որ քո ներսում անվերջ ծվատում է քեզ, քո տոհմի կա՞նչը...

Գրիգոր Ակչամը հավատացած էր, որ Քյերիմի պես միլիոնավոր մարդիկ կան Ստամբուլում, Թուրքիայի ողջ տարածքում, ովքեր ժխտում են իրենց քրիստոնեական արմատները, որ չարժանանան շրջապատի մարդկանց քամահրանքին: Եվ որքան խորն էր Քյերիմի հետ ունեցած տարածայնությունը, այնուհանդերձ, Գրիգորը որոշեց հանդիպել եղբորը: Իր դեմ կատարված մահափորձից հետո ինքը ճիգեր գործադրեց չդատապարտել եղբոր արարքները, թեև դրա իրավունքն ուներ: Սակայն ինքը երբեք չէր մտածել, որ Քյերիմի համար իրեն ոչնչացնելը դարձել էր կյանքի հիմնական նպատակը:

Վաղ առավոտյան Գրիգոր Ակչամը որոշեց գնալ ոստիկանական բաժին: Պետը զարմացավ նրա այցից:

-Համեցե՛ք, Սայիդ Ակչամ, թեև չէի ուզենա մեր հանդիպումն այստեղ կայանար:

Երգիչը չուզեց նրան հիշեցնել, որ այժմ իրեն Գրիգոր են անվանում, ոչ թե Սայիդ:

-Լրացուցիչ բողո՞ք եք ներկայացնելու եր եղբոր դեմ,- հարցրեց ոստիկանապետը:

-Ո՛չ: Ղրա կարիքը չկա, մանավանդ որ նրան բռնել են իմ ձայնագրման ստուդիայում:

-Այդ դեպքում ո՞րն է Ձեր այցի նպատակը: Գուցե մեզ հանդիմանելո՞ւ, որ ժամանակին նրան չենք ձերբակալել: Դե, եթե ձեր հայրը մեզ չհուշեր, որ Քյերիմն է այդ դժբախտ պատահարների հեղինակը...

-Հա՞յրս,- զարմացավ Գրիգորը:

-Այո: Նա ինձ հուշել է, թե ինչպես է եղբայրդ ձեզ հետապնդել և սպառնալիքներով հեռախոսագրույցներ ունեցել այն բանի համար, որ դուք վերադարձել եք ձեր ինքնությամբ, այսինքն՝ հայկական արմատներին՝ փոխելով անձնագիրը, անունը...

Գրիգորը նկատելիորեն մռայլվեց հոր մասին լսելով: Պարզվում էր, որ հայրը չափազանց վախեցել էր իր կյանքի համար և բոլորից թաքուն հասել էր ոստիկանություն: Երևի հայրական բնագոն էր ստիպել նրան այդ քայլին դիմել: Որպես ծնող ինքն էլ սրտի խորքում փորձեց չմեղադրել հոր արարքը՝ մտածելով, որ իրականում թերևս հենց այդ քայլի պատճառով Քյերիմը վիճել էր հոր հետ, և նա հայտնվել էր հիվանդանոցում: Ինքը դեռ կպարզի, երբ տուն հասնի:

Տեսնելով երգչի մտախոհ հայացքը, ոստիկանապետն ասաց.

-Ինչ որ բան այն չասացի՞...

-Ինչպե՞ս կարող եմ հանգիստ լինել Ձեզ մոտ՝ իմանալով, որ եղբայրս ճաղերի ետևում է, և բոլորը խոսում են այդ մասին:

-Հասկանալի է, Ձեզ համար ծանր է ընդունել այն փաստը, որ հարազատ եղբայրդ է մահափորձ կատարել Ձեր դեմ: Բայց նաև մի՛ մոռացեք, թե քանի անգամ է Քյերիմը Ձեր դեմ ելել: Վերջին անգամ էլ փրկվեցիք ձեր երկու ընկերների շնորհիվ, թե չէ այլևս ողջ չէիք լինի:

-Միևնույն է, ինձ համար ոչ միայն ծանր է այն ամենը, ինչ կատարվեց մեզ հետ, այլև ողբերգություն եմ համարում կատարվածը: Խնդրում եմ Ձեզ՝ թույլ տալ ինձ տեսնել նրան:

-Կարծում եք՝ դրա անհրաժեշտությունը կա՞:

-Չգիտեմ, բայց ուզում եմ դեմ առ դեմ հանդիպել նրան և մի քանի հարց ուղղել Քյերիմին:

-Լավ, Սայիդ,- ոստիկանապետը սեղմեց սեղանի կռճակներից մեկը:- Ինչպե՞ք, որ նա խստորեն կպատժվի սահմանված օրենքի համաձայն:

Ներս մտավ շարքային ոստիկաններից մեկը:

-Ուղեկցի՛ր մեր հարգարժան երգչին Քյերիմի մոտ,- կարգադրեց նա:

Գրիգորը շնորհակալություն հայտնելով ոստիկանապետին՝ հեռացավ: Նա սպասեց տեսակցության համար նախատեսված սենյակում, երբ ոստիկանի ուղեկցությամբ ձեռնաշղթաներով ներս մտավ եղբայրը: Տեսնելով Գրիգորին՝ Քյերիմը դեմքը շրջեց և ուզեց հեռանալ: Ոստիկանը փակեց նրա ճամփան և կանգնեց դռան առջև: Այդ նշանակում էր, որ նա ստիպված պիտի լինի խոսել եղբոր հետ, որքան էլ իր համար տհաճ ու անցանկալի լիներ այդ տեսակցությունը:

Երգիչը հանգիստ նստել էր աթոռին:

-Ինչո՞ւ ես եկել: Ես քեզ տեսնել չեմ ցանկանում,-եղբոր վրա միանգամայն ագրեսիվ տոնով հարձակվեց Քյերիմը:

-Դու իմ եղբայրն ես: Եկել եմ, որ հիշեցնեմ քեզ այդ մասին:

-Սխալվում ես: Դու իմ թշնամին դարձար այն օրվանից, երբ հայտարարեցիր, որ հայկական արմատներ ունես:

Գրիգորը դառն քնծիծաղեց:

- Ձարմանալի մտածողություն ունես: Եթե ես և դու եղբայրներ եմք, միևնույն ընտանիքից, միևնույն տոհմից, մի՞թե չի նշանակում, որ դու էլ գեներով քրիստոնեական արմատներ ունես: Ուզես թե չուզես, դա է ճշմարտությունը: Հետևաբար, մենք իրավունք չունենք թշնամանալու

իրար հետ, թեև քանի անգամ փորձեցիր վերջ տալ իմ կյանքին: Ի՞նչ շահեցիր: Երևի հայերի հանդեպ ունեցած ատելությունդ նաև երեխաներիդ ես փոխանցել:

Քյերիմը լռեց: Որքան էլ արհամարհեր եղբորը, հոգու խորքում համամիտ էր նրա մտքերի հետ: Իսկապես իր ընտանիքում զավակները դաստիարակվել են որպես օրինակելի մահմեդականներ: Իսկ իսկական մահմեդականը ըստ Քյերիմի, պետք է հայատյաց լինի: Որտեղի՞ց իմանար, թե մեկ դար առաջ իր նախնիները հայեր են եղել:

-Լռո՞ւմ ես, որովհետև հաստատ ատելությունդ ոչ միայն քո երեխաներին ես փոխանցել, այլև թշնամանքով ես զինվել ծնողներիդ դեմ: Բայց չէ՞ որ նրանք որպես մահմեդականներ են ապրում մինչև այսօր:

-Ես ոչ մեկիդ տեսնել չեմ ուզում: Քո պատճառով էլ զրկվեցի աշխատանքից:

- Ոչ միայն աշխատանքից, այլև ազատ ապրելու իրավունքից: Դրա համար ես մեղավոր չեմ: Ինձ չէի՞ր ընդունում, քեզ համար առաջվա պես հանգիստ ապրեիր:

- Ես անպայման ցանկանում էի քեզ պատժել, ավելի ճիշտ՝ վերացնել այս աշխարհից:

- Կուզենայի հիշեցնել քեզ, որ եթե Աստված ոչ արասցե, հանկարծ նորից սկսեն հայերին կոտորել, քեզ էլ չեն խնայի...

-Տեսակցությունն ավարտված է,- ասաց նրանց հսկող ոստիկանը, որը գուցե վախեցավ, որ եղբայրների զրույցը քաղաքական դաշտ կտարվի:

Եղբայրները ոտքի կանգնեցին:

-Դու ժամանակ ունես այստեղ իմ խոսքերի մասին մտածելու: Հասկացիր վերջապես, որ մենք ի վերուստ, ճակատագրի բերումով նույն նավի մեջ ենք հայտնվել և փոթորկի դեպքում պարտավոր ենք միմյանց աջակցել:

Քյերիմն այս անգամ ոչինչ չպատասխանեց: Ոստիկանը նրան ուղեկցեց դեպի մեկուսարան:

Գրիգորի համար բավականին ծանր տեսարան էր եղբորը ձեռնաշղթաներով տեսնելը: Նա ավելի շատ ցավ էր զգում, քան զայրույթ, ավելի շատ՝ վիրավորանք, քան՝ ցասում, որովհետև եղբայրն ասես զոմբիացել էր: Նա իրեն ենիջերի պես էր պահում:

Երբ երգիչը դուրս եկավ ոստիկանական բաժնից, նրան թվաց, թե աշնանային երկինքը ոչ միայն չափազանց մոխրագույն էր դարձել, այլև այն իջել էր ավելի ներքև՝ իր մռայլ տրամադրությամբ ընկերանալու իրեն: Բարակ անձրև էր մաղում: Նա ավտոյի պատուհանից նայեց փոփոխվող համայնապատկերին, հետևելով, թե ինչպես է մի բնանկար փոխարինվում մյուսով: Մինչդեռ անձրևի կաթիլներն այնպիսի ձայնով էին թափվում, ասես մարգարիտներ էին ցիրուցան լինում ավտոյի ապակիներից: Անձրևն, անշուշտ, շշնջում էր, որ երգիչը տխուր է: Նա դա լավ էր հասկանում: Հասկանում էր նաև, որ աշնան քամին ուժով ծառերից պոկում էր ոսկե դրամների նմանվող տերևները և պտտելով օդում՝ մարդկանց պարզևում էր երաժշտություն: Գրիգորի համար աշունը կախարդական ձայների երկիր տանող դուռ էր... Նա մտածեց, որ գուցե ի սկզբանե կան հնչյուններ, որ ապրում են մարդու գեների մեջ և աշնանային թախծոտ նվազի ներքո դրանք դառնում են չքնաղ սիմֆոնիա՝ իր արմատներին վերադառնալու

հաղթական հնչյունների տեսքով: Գրիգորը սաստիկ ակսոսաց, որ այդ բերկրանքը Քյերիմն այդպես էլ չզգաց: Ո՞վ գիտե, գուցե իր գրույցով նրան հնարավորություն տրվեց իմաստավորել այն ամենը, որ մինչ այդ եղել է, վերլուծել իր կյանքը, փորփրել ինքն իրեն, ինչ-որ բան շտկել... Կարևորը ճիշտ ուղի բռնելն է... Ճանաչել ինքդ քեզ, քո աշխարհը, քո ճակատագիրը, ազգիդ ճակատագիրը, տոհմիդ ճակատագիրը, որպեսզի նախնիների կանչը նոր թռիչքի ուժ տա քեզ, որ ավելի մոտ կանգնած լինես ճշմարտությանը...